ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶԱՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ

Գիրքը հրատարակվել է
ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի և
Սաշա ու Զոյա Միրզայանների հովանավորությամբ

Հովսեփ Զոհրաբի Միրզայան

(1868–1935)

Զորայր Հովսեփի Միրզայան

(1916–1964)

ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶԱՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ

Հավաքեց և աշխատասիրեց Նիկիտ Միրզայանը

Հեղինակային հրատարակություն

ԵՐԵՎԱՆ • 2025

ՀՏԴ 821.222.1.0
ԳՄԴ 83.3(5Իրան)
Մ 762

Միրզայան Հովսեփ, Միրզայան Զորայր
Մ 762 ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ / Հ. Միրզայան, Զ. Միրզայան; Հավաքեց և աշխատասիրեց Ն. Միրզայանը.— Եր.: Հեղ. հրատ., 2025.— 112 էջ:

Գիրքը կարող է օգտակար լինել պարսից գրականության պատմությամբ հետաքրքրվողների և ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 821.222.1.0
ԳՄԴ 83.3(5Իրան)

ISBN 978-9939-0-5263-2

© Միրզայան Նիկիտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՍԵՓ ԶՈՀՐԱԲԻ ՄԻՐԶԱՅԱՆ(Ց) 6
ԶՈՐԱՅՐ ՀՈՎՍԵՓԻ ՄԻՐԶԱՅԱՆ 8
ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ 9
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀՈՎՍԵՓ Զ. ՄԻՐԶԱՅԱՆԻ 14
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆԻ 34
«ԳՈԼԵՍՏԱՆԻՑ» ՔԱՂՎԱԾՔՆԵՐ 54
(Պարսկերեն տեքստը) 69
ԸՆՏՐԱՆԻ. ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՍԱԱԴԻԻՑ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 70
«ԳՈԼԵՍՏԱՆԻ» ՆԱԽԵՐԳԱՆՔԸ ԵՎ ՆԱԽԱԲԱՆԸ 74
(Պարսկերեն տեքստը) 91
ՍԱԱԴԻԻ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ (Ավ. Իսահակյան) 92
(Պարսկերեն տեքստը) 99

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 100
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 103

ՀՈՎՍԵՓ ՋՈՀՐԱԲԻ ՄԻՐԶԱՅԱՆ(Ց)
(ՄԱՀՎԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)
(1868–1935)

Հովսեփ Միրզայանը ծնվել է Պարսկաստանի Համադան քաղաքում 1868–ին: Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում, ապա ուսանել է Նոր Ջուղայի C. M. School դպրոցում:

1894–1897 թթ. գործուղվում է Կովկաս, ուր կապեր է հաստատում Թիֆլիսի մտավորականության հետ, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանի, Ստեփան Մալխասյանի, Տիգրան Հովհաննիսյանի, Համբարձում Առաքելյանի, Քրիստափոր Միքայելյանի, Հովհաննես Քաջազնունիի և այլոց հետ[1]:

Թիֆլիսում սովորում է ռուսերեն և թարգմանում է Լերմոնտովի «Դևը», որը մինչև հիմա էլ համարվում է այդ պոեմի ամենահաջող թարգմանությունը[2]:

1894–ին սկսում է թարգմանել Վալտեր Սքոտի «Կղզիների լորդը», որ վերջացնում է 1897–ին և Թիֆլիսի «Հրատարակչական ընկերության» միջոցով տպագրվում է 1898–ին[3]: Նույն հեղինակից թարգմանում է «Լճի լեդին»[4]:

1896–ին թարգմանում է Լորդ Լիտոնի «Պոմպեյի վերջին օրերը» վեպը, որ տպագրվում է 1903–ին Թիֆլիսում Համբարձում Առաքելյանի հսկողությամբ և ծախսով[5]:

1910–ին թարգմանել է «Սիրանո դը–Բերժըրաք» Ռոստանդի հայտնի պիեսը, որ 1917–ին հունվարի 2–ին բեմադրվել է Թիֆլիսի դրամատիկական թատրոնում ռեժիսոր Սևումյանի և Վ. Փափազյանի դերակատարությամբ (ըստ բանասեր Բախտիար Հովակիմյանի)[6]:

Բայրոնից թարգմանել է «Ծովահենը», ուր գրքի նախաբանում իր թարգմանչական ձոնը նվիրել է Պարսկաստանի ազատագրական շարժման ռահվիրա Եփրեմ խանին[7]: Նույն հեղինակից թարգմանել է «Եբրայական մեղեդիները»:

[1] Հովսեփ Միրզայանի գրական գործունեությունը, «Րաֆֆի տարեգիրք», Թեհրան, 1971 թ.:
[2] «Էլեկտրատպագրություն» հրատ., Թիֆլիս, 1901 թ.:
[3] Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերություն», ընկերության հրատարակությունների գրացուցակ, 1899 թ.:
[4] «Փարոս» հրատ., Թեհրան, 1912 թ.:
[5] Տպարան «Տ. Մ. Ռոտինյանցի», 1903 թ., Թիֆլիս: «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1961 թ.:
[6] Տպարան «Ռոշանայի», Թեհրան, 1927 թ.:
[7] «Փարոս» հրատ., Թեհրան, 1911 թ.:

1900 թվականից ընդունվել է Իրանի ֆինանսական մինիստրության ծառայության մեջ, և հետո նշանակվել է լիազոր կառավարիչ դր. Միլիսպոյի հատուկ օգնականի պաշտոնում[1]:

1910–1935 թթ. իրանահայության կողմից 5 շրջան ընտրվել է Իրանի Ազգային խորհրդարանի պատգամավոր[2]:

1913–ից նվիրվում է պարսից գրականության թարգմանությանը: 1923–ին թարգմանել և հրատարակել է «Օմար Խայյամի քառյակները», «Քառյակներ Բաբա–Թահերից» և «Ջանազան» կտորներ՝ իրանցի բազում քերթողներից, առանձին հատորով լույս են տեսել Թեհրանում՝ Մանուկ Մարթինի հրատարակությամբ[3]:

Հ. Միրզայանը իր ինքնակենսագրականում գրում է.

«… արդեն սկսել էի կազմել մի գիրք «Ծաղկաքաղ» անունով, որի մեջ հավաքում էի լեզվի (պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) մանր գլուխգործոցներ, որոնք առանձին–առանձին առած՝ չէին կարող հրատարակվել մնայուն ծավալով, բայց հավաքաբար կարող էին դառնալ մի պատկառելի գիրք: … «Ծաղկաքաղ»–ը, որ հիմա պարունակում է ավելի քան եոթանասուն կտոր զանազան բանաստեղծություններ, եոթը հարյուր տնից բաղկացած, մինչև հիմա ամբողջությամբ տպագրված չէ, թեև նրանից մեծ մասը զանազան երկրներում զանազան թերթերի մեջ լույս է տեսել»[4]:

Իսկ ինչ վերաբերում է Սաադիի գազելների թարգմանությանը, իր տղան՝ գրականագետ Ջորայր Միրզայանը գրում է.

«… «Գոլեստանից» և «Դիվանից» թարգմանել ենք բազմաթիվ կտորներ, որոնց կը հրատարակենք մամուլում աստիճանաբար, այն հույսով, որ մի օր մեզ հաջողվի առանձին գրքույկներով հրատարակել Հաֆեզի և Շեյխ Սաադու հայերեն թարգմանված քերթվածներ: Միաժամանակ զբաղված ենք հանգուցյալ հորս Սաադուց թարգմանած բազմաթիվ կտորները հավաքել զանազան թերթերից և ժողովածուներից, նրանց ձեռագրերը անհետ և անհույս կորած լինելու պատճառով…»[5]:

Այստեղ ինձ հաջողվել է երկար պրպտումներից հետո, Սաադու թարգմանություններից միայն հատվածներ գտնել և տեղադրել գրքում:

1934–ին Հ. Միրզայանը թարգմանում և հրատարակում է Ֆիրդուսիի «Շահնամե»–ի դյուցազներգությունից երեք կարևոր դրվագներ՝ «Ռոստամ և Սոհրաբ», «Ռոստամ և Աշքաբուս» և «Ռոստամ և Էոֆանդյար», Ֆիրդուսու 1000–ամյակի առթիվ[6]:

Նա մահացել է Թեհրանում 1935–ին:

[1] «Պարսկահայ տարեցույց», Թեհրան, 1927 թ., էջ (150):
[2] «Վերածնունդ», 1935 թ., Թեհրան, № 198–9:
[3] Տպարան «Մոդերն», Թեհրան, 1923 թ.: Խայյամի «Քառյակները» երկրորդ անգամ Թեհրանում տպագրվում է 1963–ին «Մոդերն» տպարանի կողմից:
[4] «Րաֆֆի տարեգիրք», Թեհրան, 1971 թ., էջ (197):
[5] Ջ. Միրզայան, «Պարսից գրականություն, IX–XX դդ.», էջ (152):
[6] Տպարան «Մոդերն», Թեհրան, 1934 թ.:

ԶՈՐԱՅՐ ՀՈՎՍԵՓԻ ՄԻՐԶԱՅԱՆ

(1916–1964)

Արդեն իսկ ծանոթ ենք բանաստեղծ, թարգմանիչ և գրականագետ Զ. Միրզայանի պարսից գրականության պատմության մասին վերջերս հրատարակված իր կոթողային երկու աշխատանքներին՝ իր ամբողջական կենսագրությամբ[1]: Այս գրքում ձեռնարկել եմ Հովսեփ և Զորայր Միրզայանների Սաադու «Գոլեստանից» ու «Դիվանից» թարգմանված քաղվածքների մի փունջ՝ ղազալներ, երկտողեր, գազելներ, քառյակներ և այլն, որ մինչ օրս մնացել է որպես անտիպ մի գիրք: Նույնպես ավելացրել եմ «Ընտրանի բաժինը», որտեղ ներկայացվում է «Գոլեստանի նախերգանքի»–ի բաժինը Ավագ Մելիք Վարդանյանի ամբողջական թարգմանությամբ, որը լույս է տեսել 1958–ին, Սաադու «Գոլեստանի» գրության 700–ամյակի առիթով[2] և նույնպես՝ մի քանի քառյակներ և գազելներ ճանաչված բանաստեղծների թարգմանություններից:

Գրքում զուգահեռաբար պարսկերեն տեքստեր բերելով՝ նպատակահարմար եմ տեսել մեր ընթերցողներին հնարավորինս լրացուցիչ ճաշակ տալու թարգմանչական դժվարին արվեստին ծանոթանալու համար:

ՆԻԿԻՏ ՄԻՐԶԱՅԱՆ
2025 թ., հունվար, Երևան

[1] Զ. Միրզայան «Պարսից գրականություն, պոեզիա, 1900–1960 թթ.», Երևան, 2023 թ.; «Պարսից գրականություն. IX–XX դդ.», Երևան, 2024 թ.:
[2] «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1958 թ.:

ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ

Աբու Մոհամմադ Մոշարաֆոդ–դին Մոսլեհ–էբնե Աբդոլլահը ծնվել է Շիրազում 1184 թվին Ք. հ. և մահացել է 117 տարեկան հասակում, 1291 թվին Ք. հ., ոմանք նրան 102, ոմանք 110 և ոմանք 120 տարեկան են համարում, բայց ամենաստույգ պատմական աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ վերի թիվը ամենից ավելի ճշգրիտն է և այդպիսով Սաադին ոչ միայն Իրանի մեծագույն, այլև ամենաերկարակյաց բանաստեղծներից է:

Նա մանուկ հասակում կորցնում է իր հորը և դրանից հետո Ֆարսի Աթաբեկ՝ Սաադ Էբնե Զանգին նրան վերցնում է իր հովանու տակ և ուղարկում է Բաղդադ, ուսանելու օրվա հռչակավոր Նեզամիե դպրոցում: Սաադին Բաղդադ է մնում մինչև 42 տարեկան հասակը, որի ընթացքում նա գլխավորապես ուսանում է: Բայց այդ ընթացքում նա մի անգամ ճամփորդում է Քաշղար, հավանաբար 1210 թվին: Արդեն այն ժամանակ, երբ նա դեռ 26 տարեկան էր միայն, նրա անունը և հռչակը հասել էին չինական սահմաններին:

Բաղդադում Սաադու ուսուցիչներից մեծ հռչակ էին վայելում հայտնի Սուֆի Շեյխ Շեհաբոդդին Սոհրավարդին և Շամսոդդին Աբոլ Ֆարաջ Էբնոլ Ջոուզին, որոնց երկուսին էլ նա հիշում է իր «Բուստանում» և «Գոլեստանում»:

Սաադիի կյանքի այս առաջին շրջանին հետևում է նրա երկրորդ շրջանը, ճամփորդությունների և թափառումների երկար տարիները, որոնք տևում են մոտ 30 տարի մինչև 1256 թվականը: Իր այս թափառումների մեջ Սաադին այցելել է Փոքր Ասիան, Հաբեշստանը, Եգիպտոսը, Դամասկոսը, Պաղեստինը, Հայաստանը, Արաբիան, այժմյան Թուրքմենստանը, Հնդկաստանը, Դեյլամը, Քաշղարը, Փանջաբը, Սոմնաթը, Գուջերաթը, Եմենը, Հյուսիսային Աֆրիկան և Բաալբեկը: Բացի այդ, նա պտտել է ամբողջ Պարսկաստանը: Տասնչորս անգամ ճամփորդել է Մեքքա:

Շեյխ Սաադին իր այս բազմաթիվ թափառումների մեջ, ճամփորդել է առանց իրի և ունեցվածքի, դարվիշների պես, շատ հաճախ դժվարությունների և նեղությունների է հանդիպել, գերի է ընկել խաչակիրների ձեռքը՝ երկար ժամանակ Պաղեստինում ջրածախ է եղել (սաղղա): Նա իր ճամփորդական տպավորությունները և արկածները շատ գեղեցիկ կերպով պատմել է «Բուստանի» և «Գոլեստանի» մեջ, որոնց գրել է իր կյանքի երրորդ շրջանում, թափառումներից Շիրազ վերադառնալուց հետո:

Սաադին վերադարձավ Շիրազ Դամասկոսի, Արաքի և Սպահանի ճանապարհով, 1256 թվին, 72 տարեկան հասակում: Մի տարուց հետո 1257 թվին լույս տեսավ

նրա հռչակավոր «Բուստան»-ը և հաջորդ տարին՝ «Գոլեստան»-ը: Դրանից հետո Շեյխ Սաադին մինչև խորը ծերություն այլևս չհեռացավ Շիրազից և այդ շրջանը նրա գրական գործերի ամենաբեղուն շրջանն է, բայց աղքատ է դեպքերով և արկածներով:

Շեյխ Սաադիի թողած գրական գանձը, նրա մահվանից 43 տարի հետո հավաքեց և կազմեց Շեյխ Ալի Էբնե Ահմադ Էբնե Աբիբեքրը: Նրա «Քոլլիաթ»-ի (երկերի ժողովածու) առաջին կազմությունը հետևյալ կերպով է արված.

1 — Խրատական և կրոնական հոդվածներ, արձակ:
2 — Գոլեստան:
3 — Բուստան:
4 — Խրատների գիրքը (Փանդ-նամե):
5 — Պարսկերեն, պարսկ-արաբերեն, եռ-լեզու (պարսկերեն-արաբերեն և օրդու) ՂԱՍԻԴԱՆԵՐ:
6 — Արաբերեն գրված ՂԱՍԻԴԱՆԵՐ:
7 — Գազելների առաջին դիվանը (Թայյեբաթ):
8 — Գազելների երկրորդ դիվանը (Բադաե):
9 — Գազելների երրորդ դիվանը (Խավաթիմ):
10 — Հին գազելներ, որոնց բանաստեղծը գրել է երիտասարդ տարիքում:
11 — Սահեբիե, Սահեբ Դիվանին նվիրված բանաստեղծություններ, որոնց շարքումն են գտնվում հատվածները, քառյակները, մասնավիները և այլն:
12 — Հազլիաթ կամ խայտառակ և պոռնոգրաֆիկ բանաստեղծություններ:

Մենք երկար չենք կարող կանգ առնել պարսիկ այս հանճարի երկերի յուրաքանչյուր մասի վրա: Նրանցից ամեն մեկը մի հատոր պետք ունի կատարյալ ուսումնասիրության և վերլուծման համար:

Ավելորդ չէր լինի, նախքան երկերի վերլուծման անցնելուն, այստեղ տալ Բրաունի մի քանի բնորոշ և գեղեցիկ տողերը Սաադիի հանճարի մասին.

«Իրականում, Սաադիի իսկական հմայքը և նրա ժողովրդականության գաղտնիքը չի գտնվում նրա հաստատամտության, այլ իր ուղղափառության մեջ. նրա գրքերում ամեն ճաշակի համար նյութ կա, ամենաբարձրից վերցրած մինչև ամենացածրը, ամենանուրբը և ամենակոպիտը... նրա գրվածքները Արևելքի միկրոկողմն են կազմում, իր լավագույն և վատթարագույն կողմերով և իզուր չէ, որ ուր որ ուսանվում է պարսկերեն լեզուն վեց և կես դարերի ընթացքում, Սաադու երկերը առաջին գրքերն են, որ դրվում են ուսանողի ձեռքը»:

ԳՈԼԵՍՏԱՆԸ ԵՎ ԲՈՒՍՏԱՆԸ — վեց դարվա ընթացքում չի եղել և չկա մի գիրք, որը ավելի կարդացված լինի, քան Գոլեստանը, Գոլեստան է դրվում պարսիկ երեխայի ձեռքը և նրանով է նա սկսում պարսկերենի ուսուցումը և մինչև մահ՝ այդ գիրքը մնում է պարսիկի ձեռքին: «Բուստանի» պես մասնավի պոեմներ կարելի է գտնել պարսկական գրականության մեջ, բայց Գոլեստանի պես մի գիրք՝ գոյություն չունի: Պարսիկները չորս գիրք ունեն, որոնցով հպարտ են, և որոնք ամեն մի

պարսիկի անբաժան ընկերն է. «ՇԱՀՆԱՄԵՆ», «ՄԱՍՆԱՎԻ ՄԱՆԱՎԻՆ», «ԳՈԼԵՍՏԱՆԸ» և Հաֆեզի «ԴԻՎԱՆԸ»:

«Գոլեստանը» թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, ինչպես՝ լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հոլանդերեն, ռուսերեն, իտալերեն, հայերեն[1], օրդու և այլն: Հայերենում մենք ունենք Թիրյաքյանի թարգմանությունը, որը արևմտահայերեն լինելով, չի կարողանում բնագրի հմայքը ներկայացնել, բայց որպես թարգմանություն չափազանց խնամված և մաքուր է: Այս գործի ծավալը թույլ չի տալիս օրինակներ բերել «Բուստանից» և «Գոլեստանից», որոնք առանց այն էլ լավ ծանոթ են պարսկահայերին: Բավական է ասել, որ այնքան մեծ է Գոլեստանի ժողովրդականությունը, որ նրանից ավելի քան 150 առակներ և ասացվածքներ են մտել պարսկերեն լեզվի մեջ, որոնց նույնիսկ մենք՝ պարսկահայերս, հաճախ գործածում ենք:

Ահա մի քանի օրինակ, որոնք գուցե հայերեն թարգմանության մեջ անծանոթ հնչեն, բայց որոնց պարսկերենը մենք շատ հաճախ գործածում ենք: Միաժամանակ այս մի քանի ասացվածքները շատ հատուկ կերպով ցույց կտան «Գոլեստանի» հակամետ, բայց զուտ արևելյան և մաքիավելական ոգին: Այն, ինչ Բրաունը անվանում է «ոչ հաստատամիտ, բայց ուղղափառ»:

- Ինչ պակասություն որ թագավորը հավանի, առավելություն է:
- Ով ձեռքը կյանքից լվա, ինչ սրտում ունի՝ կասի:
- Օձին սպանել և ձագին պահելը իմաստունի գործ չի:
- Գայլի ձագը վերջը գայլ կդառնա:
- Ջորությունը գիտության մեջ է և ոչ հարստության, և մեծությունը խելքի մեջ է, ոչ՝ տարիքի:
- Նրանք, որ ավելի հարուստ են, ավելի աղքատ են:
- Նա, որ հաշիվը մաքուր է, ինչո՞ւ վախենա հաշվետվությունից:
- Մինչև որ թրիաքը Արազից բերեն, օձից կծվածը մեռել է:
- Թե որ թագավորը ցերեկն ասի գիշեր է, պետք է ասել «ահա լուսինը և ահա փարվանան»:
- Աշխարհի տեսածը՝ սուտ շատ կասի:
- Բարեկամիդ դուռը ավելիր ու թշնամուդ դուռը մի թակիր:
- Թե որ վատ լինես ու լավդ ասեն, ավելի լավ է, քան թե վատ լինես ու լավդ խոսեն:
- Ուր որ գիշերով դարվիշը հասնի՝ դա նրա տունն է:
- Մարդը պիտի ականջ անի խրատին, նույնիսկ թե որ դա պատին գրած լինեն:
- Վատ սովորությունը միայն մահվամբ կանցնի:
- Ուտելը ապրելու և աղոթելու համար է, ոչ թե ապրելը՝ ուտելու համար:
- Երբ մրջյունները միաբանվեն, առյուծի մորթին կքանդեն:

[1] Գուրգեն Մելիքյան, «Սաադին հայերեն», Թեհրան, 2024: (Ն. Մ.)
Բախտիար Հովակիմյան, «Սաադիի «Գոլեստանի» 700-ամյակը», «Կոմունիստ», 1958, թիվ 127:
Արփիկ Մինասյան, Սաադիի «Գոլեստանը» և նրա հայերեն թարգմանությունները, Երևան, 1972: (Ն. Մ.)

- Ժուժկալ մարդու վիզը երկար է:
- Ով ոլորապտույտ և անշնորհք աղիք, դու չես կարողանում սազվես աշխարհի հետ:
- Ես քո լավից վազ եմ անցել, ինձ մի վնասիր:
- Ի՞նչ գիտես, թե դու երկնքում ինչ կա, դու որ չգիտես, ով է հարկիդ տակ:
- Այն մարդուն նազիր, որ նազդ առնի:
- Ավելի լավ է կինը իր կողքի մի նետ ունենա, քան ծեր ամուսին:
- Հիսուսի էշին թե Մաքքա տանեն, նույն ավանակը կվերադառնա:
- Թե քարով զարկես դու մի շան գլխին, ոսկորի հույսով՝ ցնծությամբ կելնի:
- Հաշտեցնող սուտը ավելի լավ է կռիվ գցող ճշմարտությունից:

Այսպես շատ երկար կարելի է շարունակել, բայց նրանք, որ կարդացել և վայելել են այս հազվագյուտ գիրքը իր բնագրի մեջ, կարող են միայն հասկանալ, թե որպիսի հմայք կա նրա լեզվի, որպիսի միտք և որպիսի իմաստնություն նրա ամեն մի պատմության մեջ: Դա հարազատ պատկերացումն է աշխարհիկ կյանքի, իր սուտերով, իր սխալներով, իր իմաստությամբ, իր հոգեկան խորքով, ժամանակի բարքերով (որոնք բոլորովին չեն փոխվել այս 6 դարվա ընթացքում): Սաադու հանճարը «Գոլեստան»–ում հասել է մի գագաթնակետի, որ նա տեսնում է կյանքը իր ամբողջ մերկ տգեղության մեջ, միաժամանակ ցույց տալով մարդկային հոգու բնածին ազնվությունը: Դա անգերազանցելի ռեալիստ մի պատկերացումն է համաշխարհային ֆեոդալիզմի ճնշման տակ տառապող մարդկության:

«Բուստանը» նույնպես ինքնակենսագրական դրվագներով հարուստ մի հատոր է, բայց նրա մեջ պակասում է «Գոլեստան»–ի բազմազան առավելությունները: «Բուստանը» գրված է մասնավի պոեմայի նման և պարսկերեն լեզվում, իր կարգի մեջ, մեկն է չորս ամենասիրված մասնավիներից՝ «Շահնամե»–ն, «Էսքանդար նամեն» (Նիզամի Գանջավու) և «Մասնավի Մոլավին»: «Բուստանի» և ընդհանրապես Շեյխ Սաադու քերթվածների աչքի ընկնող առավելություններից մեկն այն է, որ Սաադին խուսափում է պոռոտ ոճից, աշխատում է որքան կարելի է պարզ պատմել իր անեկդոտները և չի ընկնում չափազանցությունների, անհավատալի հեքիաթների, հրաշքների հետևից, մի բան, որ շատ ընդունված էր մյուս մասնավի պոեմաներ գրողների կողմից:

Թողնելով Շեյխ Սաադու քերթվածների այս երկու հիմնաքարերը, հասնում ենք նրա «Գազելներին», որոնք որոշ գրականագետների կարծիքով, ոչ միայն հավասարվում, այլ նույնիսկ երբեմն գերազանցում են գազելի աստված Հաֆեզին: Շեյխ Սաադու «Դիվանը» կոչում են «Բանաստեղծների աղամանը»: Չնայած Սաադուց առաջ Անվարին, Խաղանին, Զահիրե Ֆարյաբին գազելներ են գրել, բայց գազել գրելու արվեստը սկսվում է Սաադիով, որը այնպիսի նրբություն և վարպետություն մտցրեց նրանց մեջ, որ նրանից հետո պարսիկ բանաստեղծները թողեցին մասնավի և ղասիդե գրելը և գազելը իր առաջնագույն տեղը գրավեց պարսկական պոեզիայի մեջ:

Հանգուցյալ Մոհամադ Ալի Ֆորուղին 1940 (Ք. Ծ. հ.) թ. երկու հատորով տպագրել է Շեյխ Սաադու դիվանը, օգտագործելով հնագույն ձեռագիրները:

Նա իր այդ հրատարակության մեջ չի հետևել գազելների հին բաժանումներին և բոլորը տպագրել է տառային կարգով: Կարդալով սկզբից վերջ Շեյխի Դիվանը, այս խառն կարգով, տարօրինակ է, որ շատ հազվագյուտ դեպքերում կարելի է զանազանել նրա երիտասարդ, հասուն և ծեր հասակում գրած գազելները իրարից: Այդ տարօրինակությունը ավելի է շեշտվում, երբ աչքի ենք առնում, որ Սաադին գոնե 90 տարի բանաստեղծություն է գրել, գուցե նույնիսկ 100 տարի, մի ամբողջ դար, և ամբողջ այդ ընթացքում նա պահպանել է իր լեզվական սահունությունը, գեղեցիկ ռիթմը, բովանդակության ճոխությունը, մտքերի խորքը, սիրուց կրակոտ զգացումը: Մի խոսքով այն բոլորը, ինչ մի բանաստեղծի անմահացնում է: Սա ևս Սաադու եզակի գերազանցություններից մեկն է, որի վրա քչերն են անդրադարձել:

«Դիվանի» մասնավիները, հատվածները (ղաթաաթ), քառյակները և այլն, կազմում են նրա «Երկերի ժողովածուի» վերջին մասը: Նրանց մասին առանձին անդրադառնալ ավելորդ է: Նրանց պիտի կարդալ: Բավական է ասել, որ Սաադին իր ամեն մի քառյակի, ամեն մի հոդվածի, ամեն մի տողի մեջ պահպանում է իրեն հատուկ պարզությունը, երաժշտականությունը և մտքի խորքը:

ԶՈՐԱՅՐ Հ. ՄԻՐԶԱՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀՈՎՍԵՓ Զ. ՄԻՐԶԱՅԱՆԻ

* * *

Հայրենիքի սերը, Սաադի՛,
Մի սեր է խիստ քանացի,
Բայց չի լինի մեռնել այստեղ,
Ի՞նչ է, այստեղ ծնվեցի:

سعدیا حب وطن گرچه حدیثیست صحیح
نتوان مرد به سختی که من این جا زادم

* * *

Մի զանձ է անգին չքնաղ սիրուհիս
մարգարտով լեցուն,
Իսկ զանձի վրա տեսեք մի զույգ օձ՝
պառկած զալարուն:
Աչքը թարթիչի արնահեղ նետով
և ընքուտապան,
Տիրեց մի քաղաք: Ուժ, մի հիվանդն էլ
կունենա՞ այդքան
Ներսույթը Սաադու տրուշան դարձավ
սիրո կրակից,
Քերթվածում տեսեք նրա վառ սրտի
արյունն ու կսկիծ:

گنجی‌ست درج در عقیقین آن پسر
بالای گنج حلقه زده مار بنگرید
چشمش به تیغ غمزه خون‌خوار خیره‌کش
شهری گرفت قوّت بیمار بنگرید
آتشکده ست باطن سعدی ز سوز عشق
سوزی که در دلست در اشعار بنگرید

* * *

Որ նվիրեմ սիրուհուս
Չունիմ ոսկի և արծաթ,
Բայց աչքի ջուր, ու սրտի
Կրակ՝ ունեմ ես առատ:

در عشق یار نیست مرا صبر و سیم و زر
لیک آب چشم و آتش دل هر دو هست یار

* * *

Պատռում եմ շապիկս ես ամեն րոպե,
հրճվանքից սաստիկ,
Քանզի էությունս ամբողջ Նա դարձավ,
և ես՝ մի շապիկ:

پیرهن می‌بدرم دم به دم از غایت شوق
که وجودم همه او گشت و من این پیرهنم

* * *

Նրա շրթունքը կպչեն շրթունքիս՝
ի՞նչ իղձ անհնար:
Գուցե կուժ շինեն բրուտն իմ հողից
սիրուհուս համար:

لب او بر لب من این چه خیال است و تمنا
مگر آن گه که کند کوزه گر از خاک سبویم

* * *

Չշարժեցին նախանձն իմ
Պաշտոն ու գույք ոչ ձոխ տուն,
Այլ Նա շարժեց, որ զրկած
Ուներ մի վայր սիրուհուն:

Գիտե՞ս որն է այն բարիք.
Որ իր նմանն էլ չունի,
Մի աչք, որ միշտ բացվելիս
Տեսնե մի դեմք գեղանի:

Ծ րինյալ է ով սիրուհին
Մոտն է դռնիցն անցուման,
Բախտավորի հացի պես
Առանց հայցի նեղության:

Ինչպես որ մեկ կեղևում
Մեկ զույգ նշիկ սիրահար,
Մեկը մյուսին կպած սեղմ
Եվ խորթ՝ դեպի մի օտար:

هرگز حسد نبردم بر منصبی و مالی
الا بر آن که دارد با دلبری وصالی
دانی کدام دولت در وصف می‌نیاید
چشمی که باز باشد هر لحظه بر جمالی
خرم تنی که محبوب از در فرازش آید
چون رزق نیکبختان بی محنت سؤالی
همچون دو مغز بادام اندر یکی خزینه
با هم گرفته انسی وز دیگران ملالی

* * *

Նա որ սնված էր օտարի հացով՝
Ուզեց երեսիս նետել անարգանք.
Նա որ պարարտ է մուրացկանությամբ՝
Նիհարությունն իմ սեպեց ամոթանք:

Թեև դարվիշ եմ, բայց, փա՛ռք Աստուծո,
Որ չեմ ես այլոց հաճույքի կավատ.
Որքան էլ նիհար լինի մի առյուծ,
Դարձյալ մի շնից բարձր է նա, և՛ շատ:

خواست تا عیبم کند پرورده بیگانگان
لاغری بر من گرفت آن کز گدایی فربهست
گرچه درویشم بحمدالله مخنث نیستم
شیر اگر مفلوج باشد همچنان از سگ بهست

* * *

Ով մահից առաջ մի բարի ավանդ
Թողեց հիշատակ,
Մի՛ փորձիր բնավ խանգարել նրա
Բարի նպատակ:
Դու մի՛ հանդգնիր անունն աղարտել
Մեռած մեծերի,
Որպեսզի թողնես քեզանից հետո
Մի անուն բարի:

هر آن کاو نماند از پسش یادگار
درخت وجودش نیاورد بار
وگر رفت و آثار خیرش نماند
نشاید پس مرگش الحمد خواند
چو خواهی که نامت بود جاودان
مکُن نام نیک بزرگان نهان

* * *

Ի՞նչ հոգ թե մարդն անթերի
Չունի պաշտոն ու կալված,
Ինչպես մատղաշ գեղանին
Դեմքին գույներ չքսած:

صاحب کمال را چه غم از نقص مال و جاه
چون ماه پیکری که به برو سرخ و زرد نیست

Մի մարդ որ զուրկ է զգեստից.
— Այս է կարծիքն ամենի —
Մի հագուստից թանկ արժե
Որի մեջ մարդ չլինի:

مردی که هیچ جامه ندارد به اتفاق
بهتر ز جامه‌ای که درو هیچ مرد نیست

* * *

Մի պանդոկ է սա ու վերջը պիտի
Քանդվի անխափան,
Երանի՛, ում որ հոգաց նախապես
Մի այլ օթևան:
....

این سراییست که البته خلل خواهد کرد
خنک آن قوم که در بند سرای دگرند
....

Գայլը մեր հոտից օրը մի ոչխար
Տանում է անհետ,
Այն ինչ ապշահար ոչխարները միուս
Նայում են խեթ–խեթ:
....

گوسفندی برد این گرگ معود هر روز
گوسفندان دگر خیره در او می‌نگرند
....

Նա, որ իր ոտքը գոռոզությունից
Չէր դնում գետին,
Վերջը հող դարձավ ու մարդիկ անհոգ
Վրան քայլեցին:
....

آن که پای از سر نخوت ننهادی بر خاک
عاقبت خاک شد و خلق بدو می‌گذرند

Այս բուրաստանում ցայսօր անփուշ վարդ
Չէ տեսել ոչ ոք,
Անփուշ վարդն այս չոր ու չար աշխարհի
Բարի մարդն է լոկ,

گل بی خار میسر نشود در بستان
گل بی خار جهان مردم نیکوسیرند
سعدیا مرد نکو نام نمیرد هرگز
مرده آن است که نامش به نکویی نبرند

Սաա՛դի, ով բարի անուն է շահել
Մեռած չէ բնավ,
Այն մարդն է մեռած, որին հիշելիս
Բարին չասվեցավ:

* * *

Կամուրջ է կյանքն այս մեր ճամփի վրա
Դեպ կյանքը գալիք,
Կամուրջի վրա ե՞րբ են տուն շինում
Իմաստուն մարդիկ:

دنیا پلیست بر گذر راه آخرت
اهل تمیز خانه نگیرند بر پلی

* * *

Ո՛վ բարեկամ, թշնամուդ
Մահվան դագաղն երբ տեսար,
Ուրախություն մի հայտնի
Նույն բանն էլ կա քեզ համար:

ای دوست بر جنازه دشمن چو بگذری
شادی مکن که با تو همین ماجرا رود

* * *

Որքան շատ տերեր եղել են այգու
Որոնց դարերի այս անդուլ շրջան,
Նախ հող է շինել, ապա հողից՝ ցեխ,
Եվ ծեփել պատերն այգու սեփական:

بس مالکان باغ که دوران روزگار
کرده‌ست خاکشان گل دیوارهای باغ

* * *

Թշնամուց գանգատ տանում են մարդիկ
Մի բարեկամի,
Ես ո՞ւմ գանգատվեմ երբ բարեկամս ինձ
Դարձավ թշնամի:

از دشمنان برند شکایت به دوستان
چون دوست دشمن است شکایت کجا بریم

* * *

Ինչ որ հեռու քեզանից
Խմում էինք գինի չէր,
Սրտի արյունն աչքերից
Բաժակի մեջ հոսում էր:

آن نه می بود که دور از نظرت می‌خوردم
خون دل بود که از دیده به ساغر می‌شد

* * *

Եթե ոչ միայն զեփյուռը գարնան
Ոչ ոք նրանից չառավ իր փափագ,
Որ այնպես ազատ շոշափում է միշտ
Նրա սև մազերն ու վիզը ճերմակ:

کام از او کس نگرفتست مگر باد بهار
که بر آن زلف و بناگوش و جبین می‌گذرد

* * *

Դիտեցին աշխարհն ամբողջ ու նորից
Դարձան իմ աչքեր,
Նրա դեմքի մոտ ինձ լավ չէ թվում
Ոչ որքի պատկեր:

چشمم بدوخت از همه عالم به اتفاق
تا جز در او نظر نکند مستمند او

* * *

Հարյուր հազար սիրտ նրա հետևից՝
Եվ գնում է նա իբրև թագավոր,
Կարծես արքայի հետևից ընկած
Գնում է հնազանդ զորքը բյուրավոր:

سلطان صفت همی‌رود و صد هزار دل
با او چنان که در پی سلطان رود سپاه

....

Նրա ծնոտի հենց որ փոսիկը
Տեսա սրտագրավ,
Սիրտս իմ ձեռքից կարծես թե հանկարծ
Հորի մեջ ընկավ:

....

اول نظر که چاه زنخدان بدیدمش
گویی در اوفتاد دل از دست من به چاه

* * *

Էլ ցույց մի՛ տա երկնքին
Դեմքիդ արևը շքեղ,
Լուսնյակի մեջքն ամոթից
Դարձավ կոտրած մի աղեղ:

دگر آفتاب رویت منمای آسمان را
که قمر ز شرمساری بشکست چون هلالی

* * *

Մինչ անց ես կենում ամեն կռապաշտ,
Ամեն մուսուլման,
Դեպ քեզ է դարձած, քանզի թե կուռք ես,
Թե աղոթարան:

چنین که می‌گذری کافر و مسلمان را
نگه به توست که هم قبله‌ای و هم صنمی

* * *

Այս երկուսից, ո՞վ երկինք,
Ո՞րը կանես ինձ բաժին,
Նրա վզին՝ իմ արյո՞ւն,
Թե՞ նրա թևն՝ իմ վզին:

تا چه خواهد کرد با من دور گیتی زین دو کار
دست او در گردنم یا خون من در گردنش

* * *

Ինքս ինձ սպացի ցավս կպատմեմ,
Երբ որ նա եկավ,
Բայց ի՞նչպես պատմեմ, երբ գալիս է նա,
Գնում է իմ ցավ:

به خدای اگر به دردم بکشی که برنگردم
کسی از تو چون گریزد که تواش گریزگاهی

* * *

Հեռո՛ւ, հեռու քո ձեռքից
Գնալ, զրկվել կուզեի,
Բայց ո՞ւր երթա մի կաքավ,
Որ գերին է բազեի:

عجب است اگر توانم که سفر کنم ز دستت
به کجا رود کبوتر که اسیر باز باشد

* * *

Չքնաղ կանայք դեմք ու իրան
Գոհարներով պճնել գիտեն,
Իսկ դու չքնաղ լավն ես այնքան,
Որ զարդարես գոհարեղեն:

به زیورها بیارایند وقتی خوبرویان را
تو سیمین تن چنان خوبی که زیورها بیارایی

* * *

Ես ոչ կարող եմ փախչել քեզանից
Եվ ոչ էլ ապրել քեզանից բաժան,
Ուրիշ ճար չունեմ, թե ոչ համբերել,
Դու թե ցավն ես իմ և թե իմ դարման:

نه گزیر است مرا از تو نه امکان گریز
چاره صبر است که هم دردی و هم درمانی

* * *

Ով կգա աչքիս քեզանից հետո,
Քանզի իմ աչքին,
Լույս ես դու միայն, և աշխարհն ամբողջ
Մի կտոր մթին:

بعد از تو که در چشم من آید که به چشمم
گویی همه عالم ظلمات است و تو نوری

* * *

Եթե բուրաստան տեսնելու փափագ
Զգա նազելին,
Պետք չէ դուրս գնա, թող իր սենյակում
Առնե հայելին:

حاجت صحرا نبود آیینه هست
گر نگارستان تماشا می‌کند
غافلست از صورت زیبای او
آن که صورت‌های دیبا می‌کند

* * *

Շրջեցին մտքերս աշխարհն ընդհանուր
Ու նորից դարձան,
Քո մոտից բացի չգտան այլուր
Մի տեղ դուրեկան:

خیال در همه عالم برفت و بازآمد
که از حضور تو خوشتر ندید جایی را

* * *

Մինչև հարբած չլինես,
Սիրո ցավը չես կրի,
Հարբած ուղտն է դիմանում
Քաշին ծանր բեռների:

تا مست نباشی نبری بار غم یار
آری شتر مست کشد بار گران را

* * *

Ես բարև տվի դու հայհոյեցիր.
Դժգոհ չեմ այնքան,
Քաղցրախոսի հետ լավ է ունենալ
Հարց ու պատասխան:

دعات گفتم و دشنام اگر دهی سهل است
که با شکردهنان خوش بود سؤال و جواب

* * *

Պարսավում են ինձ թե ես մինչև երբ
Հետևիցն ընկնեմ գեղեցիկների.
Ինչպես չգնա ծառայի նման
Նա, որին արդեն տանում են գերի:

عیب کنندم که چند در پی خوبان روی
چون نرود بنده وار هر که برندش اسیر

* * *

Ով որ տեսնի մերկանդամ
Անուշաթույր քո մարմին,
Կասի վարդի թերթերից
Շապիկ ունի նա հագին:

وآن که بیند برهنه اندامت
گوید این پرگل است پیرهنی

* * *

Այս տխուր աչքից արյուն է հոսում
Այն տենչով հզոր,
Որ մեկ ակնթարթ աչքիդ անկյունով
Անես ինձ շնորհ:

ز چشم غمزده خون می‌رود به حسرت آن
که او به گوشه چشم التفات فرماید

....

Թե ուզես երթալ իմ արյունս նախ
Թափի՛ր ու գնա,
Թե դու չթափես հետո իմ աչքից
Պիտի հոսե նա:

....

نخست خونم اگر می‌روی به قتل بریز
که گر نریزی از دیده‌ام بپالاید

....

Քո դուռն, ամեն օր, ցալիս է խնդրում,
Որ մի բան շնորհես,
Ինձ տե՛ս, որ քեզնից ուզում եմ անհագ
Ոչ պակաս բան քեզ:

....

کنند هر کسی از حضرتت تمنایی
خلاف همت من کز توام تو می‌باید

* * *

Սիրուդ կապից թե փախչեմ,
Ու՞ր ղ արդյոք գնամ ես.
Ազատությունը շղթայած՝
Եվ բանտ է կյանքն առանց քեզ:

اگر از کمند عشقت بروم کجا گریزم
که خلاص بی تو بند است و حیات بی تو زندان

* * *

Չէ իրավունք որ այլոց
Մեղքը տեսնես շարունակ,
Մեկ էլ քեզ տե՛ս, որ մեղքով
Ողողված ես բովանդակ:
Բաշխում, զիջում, սեր ու գութ
Ունեն մարդիկ մեծարժան,
Մարդուց, թե ոչ մի գլխարկ,
Է՛լ ինչ ունես դու նշան:

همه عیب خلق دیدن نه مروت است و مردی
نگهی به خویشتن کن که تو هم گناه داری
ره طالبان و مردان کرم است و لطف و احسان
تو خود از نشان مردی مگر این کلاه داری

* * *

Գիտե՞ս թե ինչու սիրում եմ այնքան,
Ես արշալույսի շունչը բուրալից,
Քանզի սիրուհուս դեմքին է նման,
Երբ որ հեռացնե քողը երեսից:

نفحات صبح دانی ز چه روی دوست دارم
که به روی دوست ماند که برافکند نقابی

Ատոծուց եմ ուզում ես օր ու գիշեր,
Որ գլուխս ընկնի նրա ոտքի տակ,
Քանզի ավելի լավ է ինձ համար
Որ ջուրն սպանե, քան ջրի փափագ:

سرم از خدای خواهد که به پایش اندر افتد
که در آب مرده بهتر که در آرزوی آبی

Իմ սիրտը չունի այն արիություն
Որ կույե ընդդեմ սիրուհուս ցավի,
Ինչպես մի թռչուն և անզոր ճնճղուկ
Կարող է բռնել հաղթել մի արծվի:

دل من نه مرد آنست که با غمش برآید
مگسی کجا تواند که بیفکند عقابی

....

....

Սաադու արցունքից, ո՞վ իմ սիրուհիս,
Սիրտդ չգիտեմ ի՞նչ քարից շինած,
Զարմանալի է եթե չի շարժվում,
Քանզի շարժվում է նույնիսկ ջրաղաց:

دل همچو سنگت ای دوست به آب چشم سعدی
عجب است اگر نگردد که بگردد آسیابی

* * *

Երբ չես կարող հիվանդ մարդու
Ցավին դնել մի փաիճան,
Մի՛ զլանա մի քանի քայլ
Գնալ նրա տեսության:
Հազար տեսակ քաղցր ըմպելիք,
Հազար պտուղ բուրալի,
Այնքան օգուտ չունի, որքան
Խոսքն ու խնամք սիրյալի:

چو رنج برَنتوانی گرفتن از رنجور
قدم زِ رفتن و پرسیدنش دریغ مَدار
هزار شربتِ شیرین و میوه‌ی مَشموم
چُنان مفید نباشد که بوی صحبتِ یار

* * *

Քո բարեկամին, որքան էլ սիրես
Սիրտդ մի՛ բանա,
Քանզի բարեկամդ այլ բարեկամներ
Անշուշտ կունենա:

به دوست گرچه عزیزست راز دل مگشای
که دوست نیز بگوید به دوستان عزیز

* * *

Սազվիր նրա հետ, որին չես կարող
Լինել թշնամի,
Համբուրի՛ր մի ձեռք որը կարող չես
Տանել ատամի:

با آنکه خصومت نتوان کرد بساز
دستی که به دندان نتوان برد ببوس

* * *

Ասացի զուցե կհանգստանա կարոտի այս ցավ
Թե տեսնեմ նրան, տեսա ու կարոտս ավելի դարձավ:

گفتم ببینمش مگرم درد اشتیاق
ساکن شود بدیدم و مشتاق‌تر شدم

....

....

Ասում են, Սաա՛դի, ինչո՞ւ է դեղնել երեսդ կարմիր՝
Ես ոսկի դարձա, երբ իմ պղնձիս խառնեց Սերն Էքսիր:

گویند روی سرخ تو سعدی چه زرد کرد
اکسیر عشق بر مسم افتاد و زر شدم

* * *

Սուտ է, ով որ բարձր պաշտոնի բեհեզն զգենա,
Եվ գոռոզության գինիով հարբած իրան մոռանա,
Ուխտանենգ է նա, որ աղքատ օրվա իր բարեկամին
Չուզե ճանաչել իր հարստության բախտավոր ժամին:

نه هر که طراز جامه بر دوش کند
خود را ز شراب کبر مدهوش کند
بدعهد بود که یار درویشی را
در حال توانگری فراموش کند

* * *

Ով մահից առաջ մի բարի ավանդ թողեց հիշատակ,
Մի՛ փորձիր բնավ խանգարել նրա բարի նպատակ:
Դու մի՛ հանդգնիր անունն աղարտել մեռած մեծերի,
Որպեսզի թողնես քեզանից հետո մի անուն բարի:

هر که خیری کرد و موقوفی گذاشت
رسم خیرش همچنان بر جای دار
نام نیک رفتگان ضایع مکن
تا بماند نام نیکت یادگار

* * *

Նրա շրթունքը կպած շրթունքիս ի՞նչ իղձ անհնար:
Գուցե կուժ շինե բրուտն իմ հողից սիրուհուս համար:

لب او بر لب من این چه خیال است و تمنا
مگر آن گه که کند کوزه‌گر از خاک سبویم

* * *

Առողջը քնած անուշ ու հանգիստ ի՞նչ գիտե բնավ,
Թե մինչև մի լույս հիվանդի գիշերն ինչպես անցկացավ:

به ناز خفته چه داند که دردمند فراق
به شب چه می‌گذراند علی‌الخصوص غریب؟

* * *

Քաղցր շրթունքիդ անունը հիշեց իմ լեզուն այնքան,
Որ ողջ աշխարհում անուն հանեցի իբրև քաղցրաբան:

* * *

Այն գինուց հզոր, որ աչքդ լցրեց իմ հոգու բերան,
Ես հարբածություն կունենամ գլխում մինչև դատաստան:

زان می که ریخت عشقت در کام جان سعدی
تا بامداد محشر در سر خمار دارم

* * *

Եթե իմանամ որ ներկա ես դու օրն իմ հարության,
Իմ գերեզմանից պարելով կերթամ մինչև դատաստան:

ور بدانم به در مرگ که حشرم با توست
از لحد رقص کنان تا به قیامت بروم

* * *

Եթե թշնամին բարեկամ դառնա մի քանի անգամ,
Խելացին նրան չի սեպի բնավ սրտով բարեկամ:
Օձն իր բնությամբ հենց այն ոխն է, որ կա ի ներքուստ,
Թեև իր կաշին նա հազար անգամ փոխե արտաքուստ:

دشمن اگر دوست شود چند بار
صاحب عقلش نشمارد به دوست
مار همانست به سیرت که هست
ورچه به صورت به در آید ز پوست

* * *

Թափառել անեզր անապատի մեջ
Լավ է, քան նստել անգործ ու պարապ,
Քանզի ուզածս եթե չհասնեմ
Գոնե կաշխատեմ ես իմ ուժի չափ:

به راه بادیه رفتن به از نشستن باطل
و گر مراد نیابم به قدر وسع بکوشم

* * *

Խելքի համար տեղ չկա
Սերն ուր զարկեց իր վրան
Խառն է երկիրն, ուր լինի
Ավելի քան մեկ իշխան:

* * *

Ի՞նչ հոգս է քեզ պատճառում
Անմխիթար մեր վիճակ,
Ի՞նչ հոգ ունի և քամին
Եթե հանգավ մի ճրագ:

تو را ز حال پریشان ما چه غم دارد
اگر چراغ بمیرد صبا چه غم دارد

* * *

Աչքիս բիբին բախտավոր
Նախանձել եմ ես հաճախ,
Թե սրիկան որքան շատ
Տեսնում է դեմքդ այդ չքնաղ:

رشک آیدم ز مردمک دیده بارها
کاین شوخ دیده چند ببیند جمال دوست

* * *

Գնա՛ ու պատմի՛ր քարվանի պետին
Թե ինչպես հոսանքն առատ է աչքիս,
Որ ուղտի վրա նա բեռ չկապե
Մի օր, որ այսպես անձրև է գալիս:

با ساربان بگویید احوال آب چشمم
تا بر شتر نبندد محمل به روز باران

* * *

Համբերությամբ խորհեցի,
Պետք է սերս դարմանել,
Համբերությունս միշտ պակաս՝
Եվ սերս է միշտ առավել:

گفتیم عشق را به صبوری دوا کنیم
هر روز عشق بیشتر و صبر کمتر است

* * *

Գնա՛, եթե սիրտ ունես,
Նրա համար տեր գտի՛ր.
Երկիր չունի թագավոր՝
Ավերակ է մի երկիր:

گر دلی داری به دلبندی بده
ضایع آن کشور که سلطانیش نیست

* * *

Լինել մարդկանց մատնացույց,
Հոռի բան է և տգեղ,
Բայց հաճելի՝ եթե դու
Եվ ես լինենք միատեղ:

انگشت نمای خلق بودن
زشت است ولیک با تو زیباست

* * *

Ով որ սիրե և համբերե
Նա սիրտ չունի, այլ մի քար,
Սերից մինչև համբերություն
Կա բյուր մղոն ճանապարհ:

دلی که عاشق و صابر بود مگر سنگ است؟
ز عشق تا به صبوری هزار فرسنگ است

* * *

Ասում են ինձ, թե ինչո՞ւ
Սիրտդ տվիր դու նրան,
Բայց թող առաջ քեզ հարցնեն
Ինչո՞ւ լավն ես դու այդքան:

دوستان عیب کنندم که چرا دل به تو دادم
باید اول به تو گفتن که چنین خوب چرایی

* * *

Երբոր բախտն ուզե գալ մեկի համար,
Կսիրե նրան նույնիսկ մի օտար.
Իսկ երբ հետ դարձավ օրը բարեժամ՝
Մի փուշ է նրան՝ դուռն ու պատն անգամ:

چو دولت خواهد آمد بنده‌ای را
همه بیگانگانش خویش گردند
چو برگردید روز نیکبختی
در و دیوار بر وی نیش گردند

* * *

Նախանձոտ մարդկանց թույնից ապահով
Մի՛ նստիր երբոր բախտավոր եղար.
Քանզի բարեբախտ մարդիկն են միայն,
Որ աչքի փուշ են դժբախտի համար:

Քանի որ նրանց ձեռքից չի գալիս
Սեփական անձին անել մի բարիք,
Որքան որ նրանց ձեռքիցը կգա
Գաղտնի կամ հայտնի քեզ կանեն չարիք:

چو نیکبخت شدی ایمن از حسود مباش
که خار دیدهٔ بدبخت نیکبختانند
چو دستشان نرسد لاجرم به نیکی خویش
بدی کنند به جای تو هر چه بتوانند

* * *

Ինչի՞դ է պետք որ զորքով
Կռվի գնաս, ո՛վ հոգյակ,
Դու ինքդ աչք և ունքով
Ցրիվ կտաս մի բանակ:

با لشکرت چه حاجت؟ رفتن به جنگِ دشمن
تو خود به چشم و ابرو ، بر هم زنی سپاهی

* * *

Թե անամոթ մի սրիկա
Ցավ պատճառե ազնիվին.
Բարի մարդուն ասա որ
Չվշտանա բնավին:

Թե քարն հանկարծ ջախջախե
Ոսկե բաժակն թանկագին,
Քարը դարձյալ բան չարժե՝
Եվ թանկ արժե միշտ ոսկին:

گر خردمند از اوباش جفایی بیند
تا دل خویش نیازارد و درهم نشود
سنگ بی‌قیمت اگر کاسه زرین بشکست
قیمت سنگ نیفزاید و زر کم نشود

* * *

Լեզու է բանում, երբոր մի սոխակ
Տեսնում է վարդի երեսը սիրուն.
Այն ինչ երբոր ես տեսա քո պատկեր
Սքանչացումից փակվեց իմ լեզուն:

چو بلبل روی گل بیند زبانش در حدیث آید
مرا در رویت از حیرت فروبسته ست گویایی

* * *

Ինձ հետ մի՛ գա, որ մարդիկ
Չնախանձեն չարաչար,
Մի մուրացկան մարդու մոտ
Երբ որ տեսնեն մի գոհար:

همراه من مباش که غیرت برند خلق
در دست مفلسی چو ببینند گوهری

* * *

Սիրողի համար զարմանալի չէ
Որ բարեկամները նրան նախատեն,
Սակայն անձրևից ինչ հոգ ունի նա
Որ օվկիանի մեջ խեղդված է արդեն:

سعدی از سرزنش خلق نترسد هیهات
غرقه در نیل چه اندیشه کند باران را

* * *

Մի գլուխ, որ սիրով սիրելիների
Ճամփին չը գնա,
Ուսերի վրան թե ոչ ծանր բեռ
Ուրիշ ի՞նչ է նա:

سر که نه در راه عزیزان رود
بار گران است کشیدن به دوش

* * *

Դեմքը սիրուհուդ լավ է չը տեսնես
Սա՛դի, հավիտյան,
Քան այն որ տեսնես և այլի գրկում
Տեսնես դու նրան:

* * *

Ես ինձ քեզ հետ չեմ կապում,
Ինձ էլ թվում չէ արդար,
Որ դու մի վարդ լինես ինձ,
Իսկ ես՝ մի փուշ քեզ համար:
....
Թեև լավ գիտեմ, որ քեզ չեմ հասնի,
Սակայն դեպի հետ չեմ թեքի երես,
Որպեսզի մեռնեմ այն ճամփի վրա
Որով հետևում ու փնտրում եմ՝ քեզ:
....
Թող մոխիր դառնա մարմինը Սաադու,
Չհավանեցիր քանզի դու նրան,
Չարժե որ դու իմ պարծանքը լինես,
Իսկ ես նախատինք լինեմ՝ քո անվան:

خویشتن بر تو نبندم که من از خود نپسندم
که تو هرگز گل من باشی و من خار تو باشم
....
گرچه دانم که به وصلت نرسم بازنگردم
تا در این راه بمیرم که طلبکار تو باشم
....
خاک بادا تن سعدی اگرش تو نپسندی
که نشاید که تو فخر من و من عار تو باشم

* * *

Մեռի՛ր սիրո մեջ, եթե ո՛վ, Սաադի,
Դու մարդ էակ ես,
Անասունների կրոնքին է հատուկ
Մեռնել հենց այնպես:

گر آدمی صفتی سعدیا به عشق بمیر
که مذهب حیوان است همچنین مردن

* * *

Սիրտս, որպես աղավնի
Թրթռանքից թուլացավ,
Երբոր քայլել սկսեց՝
Շնորհաձեմ այն կաքավ:

دل می‌تپد اندر بر سعدی چو کبوتر
زین رفتن و بازآمدن کبک خرامان

* * *

Բարիք անել չարերին
Մի չար գործ է բուն ինքյան,
Խորին իմաստն այս խոսքի
Խորհող մարդիկ կիմանան:

Եթե լինել ցանկանաս
Գայլի համար դու բարի,
Պիտի դառնաս չարագործ
Հոտի համար ոչխարի:

نکویی بابدان کردن وبالست
ندانند این سخن جز هوشمندان
ز بهر آنکه با گرگان نکویی
بدی باشد به حال گوسفندان

* * *

Նա որ մարդկանց տունն է քանդել,
Իր տունը շեն չի տեսնի,
....
Վատին բարիք չի գա բնավ,
Լավին չարիք չի հասնի:

هرگز کسی که خانه مردم خراب کرد
آباد بعد از آن نبود خاندان او
....
نه نیکان را بد افتادست هرگز
نه بدکردار را فرجام نیکو

* * *

Բժիշկներն եթե լինեն աշխարհում,
Քո պես գեղեցիկ,
Ոչ մի հիվանդի բժշկվելն Աստծուց
Չեն ուզի մարդիկ:

اگر به حسن تو باشد طبیب در آفاق
کس از خدای نخواهد شفای رنجوری

* * *

Շապիկի միջից վարդագույն մարմինդ
Այնքան նրբենի,
Ինչպես վճիտ ջուր ապակու միջից
Տեսնում եմ հայտնի:

درون پیرهن از غایت لطافت جسم
چو آب صافی در آبگینه پیدایی

* * *

Որպեսզի տեսնեմ գեթ մեկ ակնթարթ
Դեմքդ գեղանի,
Ցերեկ ու գիշեր կարոտն եմ քաշում
Ես մեկ ժամ քնի:

بدان تا یک نفس رویت ببینم
شب و روز آرزومندم به خوابی

* * *

Ով որ հանդգնի սիրել քո նման
Եղնիկ գեղանի,
Պետք է վերջապես իր գլուխն առած
Անապատ ընկնի:

عاقبت سر به بیابان بنهد چون سعدی
هر که در سر هوس چون تو غزالی دارد

* * *

Տան ներսը պետք է շեն լինի և ոչ
Դուրսը ոսկեպատ,
Աստուծո մարդուն ասա թող ապրի
Անսարք ու աղքատ:

Ոչինչ, ո՜վ Սաադի, չարժե՜ ճոխության
Շուքը մեծափառ,
Ապրիր ինչպես գանձ ավերակներում,
Եվ քարում գոհար:

خانه آبادان درون باید نه بیرون پر نگار
مرد عارف اندرون را گو برون دیوانه باش
....
سعدیا قدری ندارد طمطراق خواجگی
چون گهر در سنگ زی چون گنج در ویرانه باش

* * *

Չեմ հանդգնում ես հող դառնալ
Նստել տակին կոշկի նրա,
Որ իմ փոշին չերթա, նստե
Պարկեշտության փեշի վրա:

خاک پایش خواستم شد باز گفتم زینهار
من بر آن دامن نمی‌خواهم غبار خویش را

* * *

Պարտ եմ ես կյանքս քո շնչից բուրած
Օդի զորության,
Ուրիշ օդ ու ջուր չի սազվում բնավ
Իմ առողջության:

خاک من زنده به تأثیر هوای لب توست
سازگاری نکند آب و هوای دگرم

* * *

Հանդուգն ես չեմ, որ ցանկանամ
Քեզ գիրկս առնել համարձակ,
Ոտքիդ եմ լոկ համբույր դրոշմում
Կարճ է իմ ձեռք ու հասակ:
....
Սաադին եմ ես, բոցալեզու,
Ցավից հալվում մոմի պես,
Բայց քո վրա կրակ լեզվով
Ազդեցության չարի ես:

مرد گستاخی نیَم تا جان در آغوش کشم
بوسه بر پایت دهم چون دست بالاییم نیست
....
سعدیِ آتش‌زبانم در غمت سوزان چو شمع
با همه آتش زبانی در تو گیراییم نیست

* * *

Ոմանք աշխարհի բարիքն են սիրում,
Ոմանք հանդերձյալ կյանքի բարիքներ
Իմ սրտում ոչ այս, ոչ այն տեղ ունի,
Իշխում է այնտեղ միմիայն քո սեր:

یکی پیش شوریده حالی نبشت
که دوزخ تمنا کنی یا بهشت؟
بگفتا مپرس از من این ماجرا
پسندیدم آنچ او پسندد مرا

* * *

Ոչ ոք, ո՜վ Սաադի, քո վերքի ցավից
Տեղյակ չի լինի
Եթե ոչ մի մարդ, որ քոնիդ նման
Վերք ու ցավ ունի:

حال سعدی تو ندانی که تو را دردی نیست
دردمندان خبر از صورت حالش دارند

* * *

Մի՛ կարծիր, որ այս դռնից սաստելով
Ինձ կարող լինես քշել դյուրությամբ,
Այստեղ ինձանից սիրտս խլեցիր
Հետ տուր, որպեսզի երթամ ես ողջամբ:

تو مپندار کز این در به ملامت بروم
دلم اینجاست بده تا به سلامت بروم

* * *

Որ անգութ կերպով գլխին քար զարկես
Արժան է սողունն այդ անգութ ու չար,
Շոյել մեջքն օձի ձեռքով սիրալիր,
Մի մարդու գործ չէ, որ չէ խելագար:

دست بر پشت مار مالیدن
به تلطف نه کار هشیارست
کان بداخلاق بی‌مروت را
سنگ بر سر زدن سزاوار است

* * *

Դու քո խելքովն ես միայն
Գերընտրելի գազանից,
Իսկ բանն եթե ուժի գա
Շատ բարձր է նա քեզանից:

تو به عقل از دواب ممتازی
ورنه ایشان به قوت از تو بهند

* * *

Եթե պատե աշխարհն ամբողջ
Արյուն, կրակ ու կսկիծ,
Դու որ մեկի չես վախեցրել
Ի՞նչ վախ ունես դու մեկից:

گر جهان فتنه گیرد از چپ و راست
و آتش و صعقه پیش و پس باشد
تو پریشان نکرده‌ای کس را
چه پریشانیت ز کس باشد؟

* * *

Խոսքը, բերնից դուրս եկած,
Նորից բերան չի դառնա
Առաջ պետք է մտածե
Եթե խելոք մարդ է նա,

سخن گفته دگر باز نیاید به دهن
اول اندیشه کند مرد که عاقل باشد
تا زمانی دگر اندیشه نباید کردن
که چرا گفتم و اندیشه باطل باشد

Մինչև որ այլ ժամանակ
Չմտածե նա տխուր,
«Թե ես ինչու ասացի»,
Բայց մտածե այժմ իզուր:

* * *

Հավատալով իր եղբոր
Գովեստներին կողմնակալ,
Լավ չի լինի եթե մարդ
Անտես առնե իր սխալ:

Տես, քո մասին բարեկամ,
Ինչ են ասում թշնամիք,
Բարեկամից կերևա
Արատդ անգամ արժանիք:

* * *

Լավ է գաղտնի մեղք գործես
Քան վարձք անես դու հայտնի,
Աստվածապաշտ եթե կաս
Աշխարհապաշտ մի լինի:

* * *

Քարասիրտ չքնաղն այն արծաթակազմ
Թե ուզեր նորից հետ դառնալ ինձ մոտ,
Կտար, կհաներ իմ փշից՝ ինձ վարդ,
Փշերն՝ իմ ոտից, և ցեխից իմ ոտ:

* * *

Արևի դեմ, ո՛վ երկինք,
Գոցի՛ր այգի քո դռնակ,
Լավ է շողում այս գիշեր
Լի և ուրախ իմ լուսնյակ:

....

Ծարավի սիրտն Եփրատին
Հասած հանգիստ է առել,
Եփրատն անցավ իմ գլխից
Եվ ծարավ եմ առավել:

....

Խոսիր քանզի չմնաց
Ոչ մի լսող անխորհեմ,

کسی به حمد و ثنای برادران عزیز
ز عیب خویش نباید که بیخبر باشد

ز دشمنان شنو ای دوست تا چه می‌گویند
که عیب در نظر دوستان هنر باشد

گناه کردن پنهان به از عبادت فاش
اگر خدای پرستی هواپرست مباش

گرم بازآمدی محبوبِ سیم اندامِ سنگین دل
گل از خارم برآوردی و خار از پا و پا از گِل

ببند یک نفس ای آسمان دریچه صبح
بر آفتاب که امشب خوش است با قمرم

....

روان تشنه برآساید از وجود فرات
مرا فرات ز سر برگذشت و تشنه ترم.

....

سخن بگوی که بیگانه پیش ما کس نیست
به غیر شمع و همین ساعتش زبان ببرم

Բացի մոմից և նրա
Լեզուն էլ այժմ կկտրեմ:

* * *

Ափսոս է քաղցր այդ բերնից
Մի խոսք լսել դառնորակ,
Եվ այդ կուրծքից ձյունափայլ
Այդքան սև սիրտ՝ նրա տակ:

* * *

Գիշեր է թե սաթ, մո՞ւշկ է նա թե մազ
Վա՛րդ է թե հասմի՞կ, լո՞ւսին թե երես,

....

Դրախտի պարտեզում մի առվի ափին
Կարծեմ չէ բուսել մի նոճի քո պես:

* * *

Աղվամազին մերձակից
Ո՛վ սրտագրավ խալ–հատիկ,
Խիստ հրապուրիչ կուտ ես դու,
Սակայն վարդին շատ մոտիկ:

* * *

Քո քաղցր հոգուց ու մարմնից
Չե՛ս ինձ համար թանկագին,
Գլխիս վրա՝ իմ աչքեր,
Եվ մարմնիս մեջ՝ իմ հոգին:

* * *

Զարկում են քարով ծառին անդադար
Եվ ինչո՞ւ, քանզի քաղցր է մի արմավ,
Մինչ անապատում վատ ու վնասակար
Տատասկին չարիք չի հասնում բնավ:
Վանդակում երկար չե՛ն պահում սոխակ,
Թե ոչ շնորհիվ իր անուշ ձայնի,
Այն ինչ բազեով որսալու համար
Ցին կաչաղակին սեպում արժանի,
Սիրամարգն այնքան շքեղ է տեսքով
Որ փետուրներից քանդում են մարդիկ,
Ե՞րբ ես Աստուծո բարեկամներին
Տեսել որ գլխին չգա մի չարիք:

....

حیف است از آن دهن که تو داری جواب تلخ
وآن سینه سفید که دارد دل سیاه

گل است آن یا سمن یا ماه یا روی
شب است آن یا شبه یا مشک یا موی

....

نپندارم که در بستان فردوس
بروید چون تو سروی بر لب جوی.

هرگز نباشد از تن و جانت عزیزتر
چشمم که در سرست و روانم که در تن است

شجر مقل در بیابان‌ها
نرسد هرگز آفتی به برش
رطب از شاهدی و شیرینی
سنگ‌ها می‌زنند بر شجرش
بلبل اندر قفس نمی‌ماند
سال‌ها، جز به علت هنرش
زاغ ملعون از آن خسیس‌ترست
که فرستند باز بر اثرش
وز لطافت که هست در طاووس
کودکان می‌کنند بال و پرش
که شنیدی ز دوستان خدای
که نیامد مصیبتی به سرش؟

....

* * *

Թե դուռն առաջին մուրալու համար
Ծեծեց մի աղքատ,
Այլևս նրա հոգսը մի քաշիր,
Քանզի դուռ կա շատ:
Դու մի պարծենա թե քեզ ասե նա
Խորհուրդն յուր գաղտնի,
Ով որ մեկի մոտ իր գաղտնիքն ասե
Կասե ամենին:

درویش که حلقهٔ دری زد یک بار
دیگر غم او مخور که درها بسیار
دل تنگ‌مکن که بر تو می‌نالد زار
هر کاو به یکی گفت بگوید به هزار

* * *

Դու որ դաժան կարիքի
Դառնության հետ ծանոթ չես,
Մուրացկանից, թթվացրած
Շուռ ես տալիս քո երես:
Դու որ այնքան սիրտ չունես
Որ դիմանաս լսելուն.
Խորհի՛ր թե ինչ կլինի
Նրա թշվառ դրությունն:

کَسان که تلخیِ حاجت نیاز مودَستند
تُرش کنند و بِتابند روی از اهلِ سؤال
تو را که می‌شنوی ، طاقتِ شنیدن نیست
قیاس کُن که دَرو خود چگونه باشد حال؟

* * *

Ո՛վ դու, որ դրիր հրամանիդ ծայրում
Զրկանքի ալաք,
Վախեցի՛ր նետից, որ սրտից համար
Թռչում է արագ:
Քո նետը, եթե կարող է անցնել
Մի զրահից պողպատ,
Սլաքը նրա կանցնի լեռներից
Թե լինի երկաթ:

هان ای نهاده تیر جفا در کمان حکم
اندیشه کن ز ناوک دلدوز در کمین
گر تیر تو ز جوشن فولاد بگذرد
پیکان آه بگذرد از کوه آهنین

* * *

Արտաքինի գիտությամբ
Ժամավաճառ չլինես,
Թե ոչ այնքան, որ ներքին
Ու բուն իմաստը գտնես.
Իսկ երբ գտար դեն ձգի՛ր,
Դրսի ամեն արդ ու զարդ,
Ներքինը զուտ ցորենն է
Դրսինը չէ՛, թե ոչ հարդ:

زمان ضایع مکن در علم صورت
مگر چندان که در معنی بری راه
چو معنی یافتی صورت رها کن
که این تخمست و آنها سر به سرکاه

* * *

Այս բուրաստանում ցայսօր անփուշ վարդ
Չէ տեսել ոչ ոք,
Անփուշ վարդն այս չոր ու չար աշխարհի
Բարի մարդն է լոկ,
Սաա՛դի, ով բարի անուն է շահել
Մեռած չէ բնավ,
Այն մարդն է մեռած, որին հիշելիս
Բարին չասվեցավ:

گل بی خار میسر نشود در بستان
گل بی خار جهان مردم نیکوسیرند
سعدیا مرد نکو نام نمیرد هرگز
مرده آن است که نامش به نکویی نبرند

* * *

Ասացի սիրտս փրկեմ ես կարթից
Նրա գիսակի,
Բայց ինչպես փրկեմ, ընկած է օղակն
Ի մեջ օղակի:

به کمند سر زلفت نه من افتادم و بس
که به هر حلقهٔ مویت گرفتاری هست

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՋՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆԻ

* * *

Ով որ կանգնի և գոցված
Մի դուռ ծեծի մշտապես՝
Մի օր նրա երեսին
Դուռը բացված կտեսնես:

هر که دائم حلقه بر سندان زند
ناگهش روزی بباشد فتح باب

* * *

Բյուր թշնամու հաց կտա
Ով որ փնտրե նպատակ,
Գուցե թե մի բարեկամ
Հետ գա նրա հարկի տակ:

* * *

Ով որ ոտքով քեզ է կապված
Թե չտոկա, ի՞նչ անի.
Մի զավաթ մեղր, քեզ օրինակ
Երբ որ մի ճանճ մեջն ընկնի:

بند بر پایْ تحمل چه کند گر نکند؟
انگبین است که در وی مگسی افتاده ست

* * *

Երբ հավիտյան բաժանվեն
Երկու ընկեր սրտակից,
Կարծես հոգի և մարմին
Ջատված լինեն իրարից:

* * *

Թե խոսք պահես և հետ գաս
Ինձ այս տնին, ով չքնաղ,
Ագահ լինեմ, թե ոտքիդ
Կյանքս չանեմ ես մատաղ:

بر آنم گر تو باز آیی که در پایت کنم جانی
و زین کمتر نشاید کرد در پای تو قربانی

* * *

Նախանձում են քո որսիդ
Արքայական բազեներ,
Որսն իմ արքա–բազեի
Սաադու սիրտն է կարեվեր:

بازان شاه را حسد آید بدین شکار
کان شاهباز را دل سعدی نشیمن است

* * *

Սաադու աչքի արցունքից
Զգուշացիր, անմահ,
Հորդել գիտեն կաթիլները
Երբ որ իրար միանան:

حذر کنید ز باران دیدهٔ سعدی
که قطره سیل شود چون به یکدگر پیوست

* * *

Հայացք ձգիր դեպի մեզ
Դու շնորհաճեմ վարդենի,
Որ մի զեփյուռ այդ անուշ
Բուրաստանից մեզ հասնի:

ای گلبن خرامان با دوستان نگه کن
تا بگذرد نسیمی بر ما ز بوستانت

* * *

Իր մտքի մեջ ամեն ոք
Դրոշմված ունի մի պատկեր
Եւ միտքն ունեմ մի դեմքի
Որն է ամեն մտքից վեր:

Իմ տան դռնից դու ներս գաս
Նրա օրվան երանի
Քո երեսով երբ տեսնեն՝
Լույսը բարի կլինի:

خیال روی کسی در سر است هر کس را
مرا خیال کسی کز خیال بیرون است
خجسته روز کسی کز درش تو بازآیی
که بامداد به روی تو فال میمون است

* * *

Վատ չեմ ուզում թշնամուս,
Բավական է թշվառին՝
Նստած տեսնել ծունկ–ծնկի
Սիրածի հետ — սիրելին:

دشمنم را بد نمی‌خواهم که آن بدبخت را
این عقوبت بس که بیند دوست همزانوی دوست

* * *

Չունի աշխարհն այն արժեք
Որ նախանձես դու նրան,
Ոչ նախանձողն, ոչ էլ
Նախանձելին կմնա:

دنیا آن قدر ندارد که بدو رشک برند
ای برادر که نه محسود بماند نه حسود

* * *

کرمش نامتناهی ، نعمش بی‌پایان
هیچ خواهنده از این در نرود بی مقصود

Նրա բարիքն անսահման
Առատությունն անխտիր
Ոչ մի խնդրող այդ դռնից
Չեկա՛վ, չասա՛ց փափագն իր:

* * *

من پاس دارم تا به روز امشب به جای پاسبان
کان چشم خواب آلوده خواب از دیده ما می‌برد

Ես պահակի փոխարեն
Պիտի հսկեմ այս գիշեր,
Չէ՞ որ տարան իմ աչքից,
Քունը՝ քնած այն աչեր:

* * *

هر آدمی که بینی از سر عشق خالی
در پایه جمادست او جانور نباشد

Մարդուն, որի գլխի մեջ
Սերը բնավ տեղ չունի՛,
Մի՛ իր հաշվիր, քանի նա
Մինչև իսկ չէ՛ կենդանի:

* * *

ای دوست بر جنازهٔ دشمن چو بگذری
شادی مکن که با تو همین ماجرا رود

Ո՜վ բարեկամ, թշնամուդ
Մահվան դագաղը երբ տեսար՝
Ուրախություն մի հայտնի
Նույն բանն էլ կա քեզ համար:

* * *

آن نه می بود که دور از نظرت می‌خوردم
خون دل بود که از دیده به ساغر می‌شد

Ինչ որ հեռու քեզանից
Խմում էինք՝ գինի չէր,
Սրտի արյունն աչքերից
Բաժակի մեջ հոսում էր:

* * *

ور دوست دست می‌دهدت هیچ گو مباش
خوشتر بود عروس نکوروی بی جهیز

Ասա ճրագ չքերեն.
Թե ձեռքդ ընկնի սիրուհիդ
Լավ է հարսը գեղանի,
Եվ հասկապես՝ — անօժիտ:

* * *

گر هر دو دیده هیچ نبیند به اتفاق
بهتر ز دیده‌ای که نبیند خطای خویش

Երկու աչքը ինձ համար
Լավ է խպառ կուրանալ,
Քան այն՝ որ աչքս տեսնի
Եվ չտեսնի իմ սխալ:

* * *

نه توانگران ببخشند فقیر ناتوان را
نظری کن ای توانگر که به دیدنت فقیرم

Չէ՞ որ հարուստն աղքատին
Շնորհել գիտե միշտ մի բան,
Ո՜վ մեծատուն, նայի՛ր ինձ.
Աղքատն եմ քո տեսության:

* * *

تو همچون گل ز خندیدن لبت با هم نمی‌آید
روا داری که من بلبل چو بوتیمار بنشینم

Ինչպես մի վարդ, ծիծաղից
Շուրթդ շրթին չի դիպչում,
Կուզե՞ս, որպես մի սոխակ
Ես բուն դնեմ քո սրտում:

* * *

گر دوست می‌آید برم یا تیغ دشمن بر سرم
من با کسی افتاده‌ام کز وی نپردازم به کس

Եթե սրով հոշոտի
Մարմինը իմ, սիրուհիս՝
Ես չեմ գնա օգնության,
Թե որ խնդրի թշնամիս:

* * *

خویشتن بر تو نبندم که من از خود نپسندم
که تو هرگز گل من باشی و من خار تو باشم

Ես քեզ ինձ հետ չեմ կապում
Դա չի թվում ինձ արդար,
Որ դու մի վարդ լինես ինձ,
Իսկ ես՝ մի փուշ քեզ համար:

* * *

ببند یک نفس ای آسمان دریچه صبح
بر آفتاب که امشب خوش است با قمرم

Արևի դեմ, ով երկինք,
Գոցի՛ր այգի քո դռնակ,
Լավ է շողում այս գիշեր
Լի ու ուրախ իմ լուսնյակ:

* * *

گر یک دل و گر هزار دارم
این خسته دلم چو موی باریک
از زلف تو یادگار دارم
....
من کانده تو کشیده باشم
اندوه زمانه خوار دارم
در آب دو دیده از تو غرقم
و امید لب و کنار دارم
دل بردی و تن زدی همین بود

Այս սիրտը սև, զալարուն,
Սիրտն այս մազի պես բարակ,
Ունեմ, քո զույգ գիսակից
Ինձ մոտ որպես հիշատակ:
....
Արյուն-արցունք է թափվում
Դեմքիս վրա զառադեմ,
Կյանքս անդարձ մաշեցիր,
Սիրտս տարար դու անհետ:

Եվ կարծեցիր վերջացավ.
Հաշի՛վ անեմ ես քո հետ:
Հայհոյեցի՞ր, դու Սաադուն,
Շրթունքիդ հետ գործ ունեմ:

* * *

Սիրտը ծարաված՝ Եփրատին
Հասած հանգիստ է առել,
Եփրատն անցավ իմ գլխից
Եվ ծարավ եմ առավել:

....

Խոսի՛ր, քանի չմնաց
Ոչ մի լսող անխոհեմ,
Բացի մոմից, և նրա
Լեզուն ես այժմ կկտրեմ:

* * *

Սիրտ էր ու սիրտ տանողի
Ընդմիշտ դարձավ նա գերին,
Հոգի էր դա, ու մատաղ,
Մի հոգյակի պատկերին:

* * *

Սիրտս ինչպես աղավնի
Թրթռալուց թուլացավ,
Երբ որ քայլել սովորեց
Նազաճեմիկն այն կաքավ:

* * *

Ափսոս է քաղցր այդ բերնին
Տեսնել մի խոսք դառնորակ
Եվ այդ կրծքում ձյունափայլ
Տեսնել մի սիրտ սևորակ:

* * *

Հայտնի եմ ես քո թաղում,
Բայց քո դեմքից հեռացած՝
Մի գայլ բերանն արյունոտ,
Բայց Հովսեփին չպատռած:

من با تو بسی شمار دارم
دشنام همی‌دهی به سعدی
من با دو لب تو کار دارم

روان تشنه برآساید از وجود فرات
مرا فرات ز سر برگذشت و تشنه‌ترم
....
سخن بگوی که بیگانه پیش ما کس نیست
به غیر شمع و همین ساعتش زبان ببرم

دل می‌تپد اندر بر سعدی چو کبوتر
زین رفتن و بازآمدن کبک خرامان

حیف است از آن دهن که تو داری جواب تلخ
وآن سینه سفید که دارد دل سیاه

در کویِ تو معروفم و از رویِ تو محروم
گرگ دهن آلوده یوسف ندریده

* * *

Եթե հաճույքն իմանաս
Վերջ դնելու հաճույքից՝
Այլևս հաճույք չես կոչի
Կրքի հաճույքը կույրիտ:

....

Խոստովանիր ինձ, տեսնեմ,
Մինչև այսօր կյանքից լավ,
— Դու որ կյանքդ մսխեցիր —
Ձեռքդ արդյոք ի՞նչ ընկավ:

....

Սադաֆի պես պետք է քեզ
Փականք դնել բերանիդ,
Որպեսզի երբ պետք լինի,
Բերնիցդ հանես մարգարիտ:

* * *

Օգուտ չունի քեզ ասեմ
Հեքիաթն իմ մեծ վշտերի,
Որ չես տեսել մի գիշեր
Երկա՛ր — ինչպես մեկ տարի:

* * *

Էլ ցույց մի տա երկնքին
Դեմքիդ արևը շքեղ,
Լուսնյակի մեջքն ամոթից
Դարձավ կոտրած մի աղեղ:

* * *

Իրավունք չէ՛, որ այլոց
Մեղքը տեսնես շարունակ,
Մեկ էլ քե՛զ տես, որ մեղքով,
Աղաղված ես բովանդակ.

Ներում, զղջում, սեր ու գութ
Ունեն մարդիկ մեծարժան,
Մարդուց բացի մի գլխարկ —
Էլ ի՞նչ ունես դու նշան:

اگر لذت ترک لذت بدانی
دگر شهوت نفس، لذت نخوانی
....
بیا تا به از زندگانی به دستت
چه افتاد تا صرف شد زندگانی
....
صدف وار باید زبان درکشیدن
که وقتی که حاجت بود در چکانی

به تو حاصلی ندارد غمِ روزگار گفتن
که شبی نَخُفته باشی به درازنای سالی

دگر آفتاب رویت مَنمای آسمان را
که قمر ز شرمساری بشکست چون هلالی

همه عیب خلق دیدن نه مروت است و مردی
نگهی به خویشتن کن که تو هم گناه داری
ره طالبان و مردان کرم است و لطف و احسان
تو خود از نشان مردی مگر این کلاه داری

* * *

Գլխիցդ ոտ՝ չգիտեմ,
Քո ո՞ր մասն է գեղանի,
Լավն է գլխից մինչև ոտ
Այս իմ յարը վարդենի:

* * *

Սաադու սիրտը լուսավոր,
Որ մոմն է քո մթության,
Ինչի՞ պետք է աշխարհում,
Եթե չայրե՛ս դու նրան:

* * *

Ամեն անգամ երբ տեսնեմ
Դեմքդ չքնաղ, ո՛վ լուսին,
Երկրորդ անգամ ավելի
Լավն ես, քան թե առաջին:

* * *

Այլ մարդկանցից աշխարհում
Մնում է միշտ մի բուռ հող,
Սակայն մոխիր է թողնում
Մահից հետո մի սիրող:

* * *

Սաադու գրիչն օրն ի՛ բուն
Սևի մեջ է թաթախված,
Էլ ի՞նչ զարմանք, որ մութից
Գալիս է ջուրը կենաց[1]*:*

* * *

Ով դու, որ չես ընդունում
Դարվիշության արժանիք,
Դու ի՞նչ գիտես, ինչպիսի
Նրանց կյանքում կա գաղտնիք:

Մի գանձ է մեծ ազատ օրն,
Ազահ կյանքի մի անկյուն,
Որին սրով սիրելու
Արքան չունի զորություն:

ندانم از سر و پایت کدام خوبتر است
چه جای فرق که زیبا ز فرق تا قدمی

روان روشن سعدی که شمع مجلس توست
به هیچ کار نیاید گرش نسوزانی

هر نوبتم که در نظر ای ماه بگذری
بار دوم ز بار نخستین نکوتری

خاکی از مردم بماند در جهان
وز وجود عاشقان خاکستری

خضری چو کلک سعدی همه روز در سیاحت
نه عجب گر آب حیوان به درآید از سیاهی

ای که انکار کنی عالم درویشان را
تو ندانی که چه سودا و سر است ایشان را
گنج آزادگی و کنج قناعت ملکیست
که به شمشیر میسر نشود سلطان را

[1] «Ջուրը կենաց» (Աբեհյվան) — նկատի ունի կյանքի աղբյուրը, սիրեկանի բերանը: (Ն. Մ.)

....

Հավաքեցին, դիզեցին
Ու գնացին կարոտով,
Իսկ խեղճ դարվիշն ի՞նչ անի,
Որ կաշկանդի իր գոտով:

....

Դատաստանի արհավիրքն
Նրա համար սև չունի,
Ծովում ապրող թռչուն է,
Նրան հեղեղն ի՞նչ կանի:

* * *

Մինչև հարբած չլինես,
Սիրո ցավը չես կրի,
Հարբած ուղտն է դիմանում
Ծանր քաշին բեռների:

* * *

Ժամանակի պարտեզում
Մի վարդ չեկավ քո տեսակ,
Եվ մանավանդ, որ իմ պես՝
Երգիչն եղավ քո սոխակ:

* * *

Շատ հոգ չունեն, թող սրանք
Սիրո սրով մորթվեցան,
Նրանց կտան արնագին՝
Արքայությունն անվախճան:

* * *

Թարթչի սլաքն մինչ ե՞րբ
Գաղտնի նետես ամեն տեղ,
Խելքը ձգեց իր վահանն,
Նետիդ առաջ արնահեղ:

* * *

Բերանը որ չես տեսնում,
Թե ոչ միայն խոսելիս,
Լա՛վ տես, նա չէ այնքան նեղ,
Որ բաղդատվի իմ սրտիս:

......
جمع کردند و نهادند و به حسرت رفتند
وین چه دارد که به حسرت بگذارد آن را
......
دستگاهی نه که تشویش قیامت باشد
مرغ آبیست چه اندیشه کند طوفان را

تا مست نباشی نبری بار غم یار
آری شتر مست کشد بار گران را

ای گل خوش‌بوی اگر صد قرن باز آید بهار
مثل من دیگر نبینی بلبل خوش‌گوی را

هر آدمی که کشتهٔ شمشیر عشق شد
گو غم مخور که ملک ابد خونبهای اوست

خدنگ غمزه از هر سو نهان انداختن تا کی
سپر انداخت عقل از دست ناوک‌های خونریزت

* * *

Ինչպես ջրում հարսնամատն
Եվ արեգակն ամպերում,
Նույնն է և իմ գեղանին,
Իր քողի տակ աբրիշում:

چو نیلوفر در آب و مهر در میغ
پری رخ در نقاب پرنیان است

* * *

Ինձ քո ծառաղ անվանիր,
Որ ես դառնամ թագավոր,
Ինչ ճանճ որ դու թռցնես,
Արծիվ է նա զորավոր:

بنده خویشتنم خوان که به شاهی برسم
مگسی را که تو پرواز دهی شاهینی‌ست

* * *

Քո ժամանակ ես զլուխս
Բարձի՞ դնեմ, քա՛վ լիցի:
Սերն այն գլխի գործը չէ,
Որ մոտենա նա բարձի:

خواب در عهد تو در چشم من آید هیهات
عاشقی کار سری نیست که بر بالین است

* * *

Սիրտս այդքան նեղ լինել
Սովորեցրեց քո բերնին,
Բայց քո մեջքից սովորեց
Բարակ լինել իմ մարմին:

مگر دهان تو آموخت تنگی از دل من
وجود من ز میان تو لاغری آموخت

* * *

Թե չքանա իմ մարմինը,
Հողս քամին թե տանի՝
Իմ ոսկորում անպայման
Սերդ գտնել կլինի:

تنم بپوسد و خاکم به باد ریزه شود
هنوز مهر تو باشد در استخوان ای دوست

* * *

Թե՛ ներկայի, թե՛ գալիք
Աշխարհն էլ – այս սրտից նեղ
Մեկ անգամից քշեցինք,
Որ քեզ համար լինի տեղ:

دو عالم را به یک بار از دل تنگ
برون کردیم تا جای تو باشد

* * *

Զբոսավայրն է այգի
Նրա դեմքի բուրաստան,
Ահա նարգիզ, մանուշակ,
Ահա ծաղիկը նռան:

بستان عارضش که تماشاگه دلست
پرنرگس و بنفشه و گلنار بنگرید

* * *

Ե՞րբ ես կարող ինչպես քար
Ճամփին մնալ հորդության,
Նրանք՝ սրանք փուշի պես՝
Մեկ քամիով բարձրանան:

سنگوش در ره سیلاب کجا دارد پای
هر که زین راه به بادی چو خسی برخیزد

* * *

Որ նվիրեմ սիրուհուս՝
Չունեմ ոսկի և արծաթ,
Բայց աչքի ջուր և սրտի
Կրակ ունեմ ես առատ:

در عشق یار نیست مرا صبر و سیم و زر
لیک آب چشم و آتش دل هر دو هست یار

* * *

Ով որ քեզ չի ճանաչել
Սաադուն բնավ չի ների,
Խանդի վիճակն ի՞նչ գիտե
Ով չի տեսել մի փերի:

طعنه بر حیرت سعدی نه به انصاف زدی
کس چنین روی نبیند که نه حیران ماند

* * *

Ես չեմ տեսել իմ կյանքում
Նոճու գլխին մի լուսնյակ.
Կամ հայր ու մայր աշխարհում
Ծնած լինեն արեգակ:

من ندیدم به راستی همه عمر
گر تو دیدی به سرو بر قمری
یا شنیدی که در وجود آمد
آفتابی ز مادر و پدری

* * *

Կարող ես դու Սաադու տուն
Մտնել աղքատ դռնակից,
Բայց դուրս գնալ չես կարող
Նրա սրտից ու մտքից:

این توانی که نیایی ز در سعدی باز
لیک بیرون روی از خاطر او نتوانی

* * *

Չկար ցայսօր խոսքիս մեջ,
Այս սուր կսկիծն ու այս լաց,
Քանի սիրո քամանչով
Չէի ես դեռ բռնված:

Ավելի քաղցր ո՞վ կերգի
Բուրաստանում՝ սոխակից,
Բայց վանդակված երգի պես
Չունի բնավ դա կսկիծ:

تا به امروز مرا در سخن این سوز نبود
که گرفتار نبودم به کمند هوسی
چون سراییدن بلبل که خوش آید بر شاخ
لیکن آن سوز ندارد که بود در قفسی

* * *

Չքնաղ հրեշտակ, դիցուհի
Կուրք, փարդ, լուսին կամ զարուն,
Ասշե՛լ եմ ես, չգիտեմ՝
Ո՞րն է արդյոք քո անուն:

* * *

Չշարժեցին իմ նախանձ
Պաշտոն ու գույք ու ճոխ տուն,
Այլ նա շարժեց՝ որ գրկած
Սրտին ուներ սիրուհուն:

Գիտե՞ս՝ որն է այն բարիք,
Որ իր նմանն էլ չունի,
Մի աչք՝ որ միշտ բացվելիս
Տեսնի մի դեմք գեղանի:

Օրհնյալ է, ով սիրուհին
Մեկնե դռնիցն անգուման,
Բախտավոր է Սաադիի պես,
Առանց հայցի նեղության,

Ինչպես որ մեկ կեղևում
Մի զույգ նշիկ սիրահար,
Մեկը մյուսին գրկած սեղմ
Եվ խորթ դեպի մի օտար:

* * *

Ի՞նչ հոգ է քեզ պատճառում
Անմխիթար մեր վիճակ,
Ի՞նչ հոգ ունի և քամին,
Եթե հանգի մի ճրագ:

....

Սխալ է քեզ սիրողի
Սիրտը տանջել վերալից,
Բայց ով դիտմամբ, սպանի,
Ի՞նչ հոգ ունի սխալից:

ملکا مها نگارا صنما بتا بهارا
متحیرم ندانم که تو خود چه نام داری؟

هرگز حسد نبردم بر منصبی و مالی
الا بر آن که دارد با دلبری وصالی
دانی کدام دولت در وصف می‌نیاید
چشمی که باز باشد هر لحظه بر جمالی
خرم تنی که محبوب از در فرازش آید
چون رزق نیکبختان بی محنت سؤالی
همچون دو مغز بادام اندر یکی خزینه
با هم گرفته انسی وز دیگران ملالی

تو را ز حال پریشان ما چه غم دارد
اگر چراغ بمیرد صبا چه غم دارد

....

خطاست این که دل دوستان بیازاری
ولیک قاتل عمد از خطا چه غم دارد

* * *

Աչքիս բիբին բախտավոր
Նախանձել եմ ես հաճախ,
Թե սրիկան որքան շատ,
Տեսնում է դեմքն այդ չքնաղ:

* * *

Թե՝ «զգա՛ստ եղիր ու խելոք»,
Ասես մարդուն խելագար,
Վախենում եմ, որ դառնա
Քո խրատից նա վատթար:

* * *

Մի՛ զրկիր ինձ հայացքիցդ,
Ով պաշտելիս իմ լուսնյակ,
Երբեք իր լույսը մարդուց,
Չի խնայում արեգակ:

* * *

Զարմանք չէ՛ որ եղջերուն
Թակարդն ընկնի մի մարդու,
Զարմանք է, բայց, որ մարդուն
Թակարդ ձգե եղջերուն:

Եփրատի մոտ չես կարող,
Դու այս խորհուրդն իմանալ,
Գիտեն, ի՛նչ է ջուրը զով
Անապատում այրեցյալ:

....

Սաադի, ցայսօր հառաչով
Ոչինչ դու ձեռք չբերիր,
Բայց հառաչանքն անճարի
Հաճելի է, հառաչի՛ր:

* * *

Նոճին այգում նստացրին,
Ես քեզ պիտի նստեցնեմ,
Եթե թույլ տաս՝ իմ աչքիս
Ու իմ նոճի շնորհաճեմ:

رشک آیدم ز مردمک دیده بارها
کاین شوخ دیده چند ببیند جمال دوست

دیوانه را که گویی، هشیار باش و عاقل
بیم است کز نصیحت ، دیوانه تر بباشد

ماه‌رویا! روی خوب از من متاب
بی‌خطا کشتن چه می‌بینی صواب

......

بامدادی تا به شب روی‌ات میوش
تا بپوشانی جمال آفتاب

غزال اگر به کمند اوفتد عجب نبود
عجب فتادن مرد است در کمند غزال
تو بر کنار فراتی ندانی این معنی
به راه بادیه دانند قدر آب زلال

....

به ناله کار میسر نمی‌شود ر سعدی
ولیک نالهٔ بیچارگان خوش است؛ بنال

سرو در باغ نشانند و تو را بر سر و چشم
گر اجازت دهی ای سرو روان بنشانم

* * *

Ես ուխտեցի, որ նույնիսկ
Կյանքս զոհեմ քեզ համար,
Տմարդ լինեմ եթե ես
Ուխտս չածեմ ի՛ կատար:

* * *

Թե ես տեսնել չտենչամ
Սքանչագեղ երեսներ,
Իրոք որ չեմ ես այլ բան,
Թե ոչ պատի մի պատկեր:

* * *

Քո աչքը սև, սրտագրավ
Աչքդ կախարդ խմաստուն,
Աչքիդ առաջ՝ աչքերն իր
Ցած է ձգում եղջերուն:

Դու միշտ ներկա իմ աչքում,
Թեև աչքից բացակա,
Դրա համար աչքերն իմ
Շուրջ են ածում անզգա:

Դո՛ւրս են բխում իմ աչքից
Հարյուր ակունք միասին,
Ձգում եմ, երբ կարոտով,
Աչքս նրա երեսին:

Աչքս խապառ կապեցիր
Քո գիսակով սրտագրավ
Եվ աչքը քո թովչական
Իմ խելքն ու միտքը տարավ:

Աչքս է փառվում գիշերներն
Իմ ճրագի փոխանակ,
Մինչև փնտրենք ու տեսնենք,
Ո՞ւր են իմ աչքն ու ճրագ:

Այս աչքն ու վիզ և ականջ,
Եվ այս բերանն քո փափուկ,

عهد کردیم که جان در سر کار تو کنیم
و گر این عهد به پایان نبرم نامردم

مرا به منظرِ خوبان اگر نباشد میل
درست شد به حقیقت که نقشِ دیوارم

ای چشم تو دلفریب و جادو
در چشم تو خیره چشم آهو
در چشم منی و غایب از چشم
زآن چشم همی‌کنم به هر سو
صد چشمه ز چشم من گشاید
چون چشم برافکنم بر آن رو
چشمم بستی به زلف دلبند
هوشم بردی به چشم جادو
هر شب چو چراغ چشم دارم
تا چشم من و چراغ من کو
این چشم و دهان و گردن و گوش
چشمت مرساد و دست و بازو
مه گرچه به چشم خلق زیباست
تو خوبتری به چشم و ابرو

Թող չհասնի՛ նրանց աչք,
Շրթունք ու ձեռք ու բազուկ:

Թե լուսնյակը մարդկանց
Թվում է խիստ նազելի,
Բայց դու քո աչք ու ունքով
Գեղեցիկ ես ավելի:

* * *

Ափսոս չունեմ հարյուր աչք
Իմից անքուն, առավել,
Որպեսզի դեմքդ թովիչ
Կարողանամ կուշտ տեսնել:

Ե՛կ ու նայիր իմ աչքիս
Դու, որ սրտումս ունես տեղ,
Անապատում այդ խոպան
Տեղդ գուցե լինի նեղ:

* * *

Իմ կամքն ու իրավունք
Զոհել եմ քեզ ես ուրախ,
Իմ ինչքը քեզ՝ կողոպուտ,
Իմ կիրքն ու կյանք՝ քեզ մատաղ:

* * *

Թարթիչն ու հոնքը շինեց
Նետ ու աղեղ կորովի,
Որ գիսակի քամանդից
Ենավ մի որս չազատվի:

* * *

Ի հիշատակ փոսիկիդ
Կյանքս քամուն տվի ես,
Գուցե քամին քո առաջ
Հողին դնե իր երես:

....

Նրանք, որոնք գիսակով
Սիրտ են որսում շարունակ,
Աչքդ են ընկել քո ձեռքից
Ինչպես առանց քո գիսակ:

کاشکی صد چشم از این بی خوابتر بودی مرا
تا نظر می‌کردمی در منظر زیبای تو
ای که در دل جای داری بر سر چشمم نشین
کاندر آن بیغوله ترسم تنگ باشد جای تو

تا شکاری ز کمند سر زلفت نجهد
ز ابروان و مژه‌ها تیر و کمان ساخته‌ای

بر یاد بناگوش تو بر باد دهم جان
تا باد مگر پیش تو بر خاک نهد روی

....

آنان که به گیسو دل عشاق ربودند
از دست تو در پای فتادند چو گیسوی

* * *

Գեղեցկության աշխարհի
Թագուհին ես դու իրոք,
Ափսոս, որ դեպ աղքատներին,
Անգութ ես դու և անհոգ:

* * *

Երբ որ որսի է գնում
Մի թագուհի գրավչության,
Որսը բռնում, կապկպում
Բաց էլ թողնո՛ւմ է նրան:

* * *

Երբ որ այրվում է իմ սիրտ
Աչքիցս հոսում է առվակ,
Բայց արդյունքն այդ մի ջուր չէ՝
Որ հանգցնի իմ կրակ:

* * *

Աշնան քամին չի՛ ցրի
Անուշ ծաղիկ ու ռեհան,
Եթե քամին քո մազից
Մի բույր տանի բուրաստան:

* * *

Ստացվածքով ու դիրքով
Անուն երբեք չի ստանա
Այն մարդը ստոր, որ չարիքն
Իր երակում ունենա:

Հարստությամբ անհաշիվ
Անենք՝ դարձար դու Ղարուն,
Շունը ոսկե մանյակով
Ավելի չէ, քան մի շուն:

* * *

Եթե ամբողջ քաղաքում
Միայն մի փուշ դնես դու,
Ով որ խեղճ է ամենից՝
Նրա ոտքն է մտնելու:

پادشاهان ملاحت چو به نخجیر روند
صید را پای ببندند و رها نیز کنند

گرفتم آتش دل در نظر نمی‌آید
نگاه می‌نکنی آب چشم چون جویم
من آن نیم که برای حطام بر در خلق
بریزد اینقدر آبی که هست در رویم

بر هم نزند دست خزان بزم ریاحین
گر باد به بستان برد از زلف تو بویی

هرگز به مال و جاه نگردد بزرگ نام
بدگوهری که خبث طبیعیش در رگست
قارون گرفتمت که شوی در توانگری
سگ نیز با قلادهٔ زرین همان سگست

گر در همه شهر یک سر نیشترست
در پای کسی رود که درویش ترست
با این همه راستی که میزان دارد
میلش طرفی بود که آن بیشترست

Եվ այն ամեն ճշտությամբ,
Որ հատուկ է կշեռքին,
Դարձյալ թեքվում է այս կողմ՝
Որտեղ դրված է ոսկին:

* * *

Ծառայիդ հեռ չափից դուրս
Լավ չլինես, սիրալից,
Ծառան, որին դարձնես
Քեզ հավասար նստակից,
Պիտի փորձե, շատ չանցած՝
Բարձր նստել քեզանից:

* * *

Պատիվն ի՞նչ է, մեկն ասաց,
Թե ոչ գույքի հպատակ,
Փողն է թե այս, թե գալիք
Կյանքի համար օժանդակ:

Ի՞նչ գործ կանի դիրքը մեծ,
Եվ կամ բազուկն մեծազոր,
Քանզի զուրկ է բանակից,
Մի դրամազուրկ թագավոր:

Դատարկաձեռն՝ համբավով,
Եվ գործերով անվանի,
Ծածկված սիրուն չարդաթով՝
Կարծես տգեղ կին լինի:

Կամ փետրառատ և շքեղ,
Կարծես թռչուն լինի նա,
Որ ճոխ թվա և, սակայն՝
Նիհար մարմին ունենա:

Սակայն լսիր, թե ինչպես
Մյուսը տվեց պատասխան.—
Լավ է մարդուն ունենալ
Դիրք ու հուշակ տիրական:

Խեղոքն՝ անուն և ոչ գույք
Պիտի լինի որոնող,

کسی گفت عزت به مال اندرست
که دنیا و دین را درم یاورست
چه مردی کند زور بازوی جاه؟
که بی‌مال، سلطان بی لشکرست
تهیدست با هیبت و بانگ و نام
زن زشتروی نکو چادرست
بدان مرغ ماند که بر جسم او
پر و ریش بسیار و خود لاغرست
دگر کس نگر تا جوابش چه داد
به جاهست اگر آدمی سرورست
مذلت برد مرد مجهول نام
وگر خود به مال آستانش زرست
خداوند را جاه باید نه مال
وگر مال خواهی به جاه اندرست
اگر راست خواهی ز سعدی شنو
قناعت از این هر دو نیکوترست

Իսկ թե ատացվածք ուզենա՝
Դիրքի մեջ կա նաև փող:

Մարդիկ անհայտ անունով,
Չուշին վախճան կունենան,
Ճոխությունից թե նույնիսկ
Ոսկի՛ լինի շեմքը տան:

Բայց թե ճիշտ խոսք ես ուզում,
Սաադուն լսիր դու միայն.
Լավ է մի կյանք, զոհունակ
Թե՛ այս մեկից և թե՛ այն:

* * *

Անժխտելի նշան է,
Մի պետության վախճանի,
Երբ որ հզորը նրա
Թույլի հոգսում չլինի:

نشان آخر عهد و زوال ملک وبست
که در مصالح بیچارگان نظر نکند
به دست خویش مکن خانگاه خود ویران
که دشمنان تو با تو ازین بتر نکند

Դու մի՛ քանդի քո ձեռքով
Քո բնակավայրն հայրենի,
Որ թշնամին դրանից
Քեզ մեծ չարիք չի անի:

* * *

Աղամորդի եղիր դու,
Բարեբնույթ, խելահաս,
Մինչև որ քեզ անասունից
Սեպեն մարդիկ գերադաս:

آدمی‌سان و نیک محضر باش
تا تو را بر دواب فضل نهند
تو به عقل از دواب ممتازی
ورنه ایشان به قوت از تو بهند

Դու քո խելքովն ես միայն
Գերընտրելի գազանից,
Իսկ գործն եթե ուժի գար՝
Շատ բարձր է նա քեզանից:

* * *

Բե՛ր ինձ իմ զրահ ու նիզակ,
Բացիր դու դաշտը կռվի,
Մինչև փոշուց դեղնագույն
Ներկես երեսն արևի:

جُوشَن بیار و نیزه و بَرگُستوانِ وَرد
تا روی آفتاب ، مُغفَر کُنَم به گرد
گر بُردبار باشی و هُشیار و نیک مَرد
دشمن، گُمان بَرَد که بتَرسیدی از نَبَرد

Որքա՞ն լինեմ համբերող
Եվ թշնամուն կարեկից,
Պիտի կարծի սխալմամբ,
Թե վախեցա ես կռվից:

* * *

Խոսքը բերնից դուրս եկած
Նորից բերան չի դառնա,
Առաջ պետք է մտածի,
Եթե խելոք մարդ է նա:

سخن گفته دگر باز نیاید به دهن
اول اندیشه کند مرد که عاقل باشد
تا زمانی دگر اندیشه نباید کردن
که چرا گفتم و اندیشه باطل باشد

Մինչև որ այլ ժամանակ
Չմտածի նա, տխուր.
«Թե ես ինչո՞ւ ասացի»,
Բայց մտածի այժմ՝ իզուր:

* * *

Հավատալով իր եղբոր
Գովեստներին կողմնակալ,
Լավ չի լինի, եթե մարդ
Անտես առնե իր սխալ:

کسی به حمد و ثنای برادران عزیز
ز عیب خویش نباید که بیخبر باشد
ز دشمنان شنو ای دوست تا چه می‌گویند
که عیب در نظر دوستان هنر باشد

Տե՛ս, քո մասին, բարեկա՛մ,
Ի՞նչն են ասում թշնամիք,
Բարեկամիդ կերևա
Արատդ անզամ՝ արժանիք:

* * *

Իղձս թե այդ շրթունքից,
Տիկին, մեռնեմ ես, չառած՝
Դատաստանին քեզանից
Պատիժն կառնի իմ Աստված:

ای صنم گر من بمیرم ناچشیده زان لبان
دادگر از تو بخواهد داد من روز حسیب

* * *

Աչքիցս հոսում է արցունք,
Ներսս վառվում է կրակ,
Կես հուրի մեջ, կես ջրի՝
Կարծես լինեմ շարունակ:

از درون سوزناک و چشم تر
نیمه ای در آتشم نیمی در آب

* * *

Սոխակներին պատմեցի
Լուր հասցրեք իմ կողմից,
Թե վանդակում փակվեց նա,
Որ էր ձեզ հետ ձայնակից:

خبر ما برسانید به مرغان چمن
که هم آواز شما در قفسی افتاده ست

* * *

Համբերությամբ խորհեցի,
Պետք է սերս դարմանել,
Համբերությունս միշտ պակաս,
Եվ սերս է միշտ առավել:

گفتیم عشق را به صبوری دوا کنیم
هر روز عشق بیشتر و صبر کمتر است

* * *

Լինել մարդկանց մատնացույց՝
Հոռի բան է և տգեղ,
Բայց հաճելի՝ եթե դու
Եվ ես լինենք միատեղ:

انگشت نمای خلق بودن
زشت است ولیک با تو زیباست

* * *

Պիղծն ու մաքուրը իրարից
Շատ լավ գիտեմ զատելիս.
Քեզ հետ՝ մաքո՛ւր է գինին,
Եվ պի՛ղծ է ջուրն առանց քեզ:

من آن نیم که حلال از حرام نشناسم
شراب با تو حلال است و آب بی تو حرام

* * *

Ասում են ինձ, թե ինչո՞ւ
Սիրտդ տվիր դու նրան,
Բայց թո՛ղ առաջ քեզ հարցնեն՝
Ինչո՞ւ լավն ես դու այդքան:

دوستان عیب کنندم که چرا دل به تو دادم
باید اول به تو گفتن که چنین خوب چرایی

* * *

Քեզ ձայնակից կլինեմ,
Եթե մնաս, ո՜վ սոխակ,
Քանզի դու վարդ ես սիրում,
Ես՝ վարդահյուս մի էակ:

ای بلبل اگر نالی من با تو هم آوازم
تو عشق گلی داری من عشق گل اندامی

* * *

Ի՞նչ կապ ունի վարդի հետ
Հոգեհրապույր մի երես,
Այն, որ վարդն է փուշի մոտ՝
Վարդի կողքին դու նույնն ես:

گل نسبتی ندارد با روی دل فریبت
تو در میان گل‌ها چون گل میان خاری

* * *

Կեցավ, նայեց հայելուն,
Այն շրթանուշ չարաճճին,
Տեսավ շրթունքն ու ժպտաց
Շրթունքի տակ վարդային.

«Քանի՜, քանի՜ հոգիներ,
— քաղցրաբանեց ինքն իրան,—
Հասան մինչև իմ շրթունք՝
Ու շրթունքիս չհասան»:

چون صورت خویشتن در آیینه بدید
وان کام و دهان و لب و دندان لذیذ
می‌گفت چنانکه می توانست شنید
بس جان به لب آمد که بدین لب نرسید

* * *

Ամեն երկիր որ հասա,
Ամեն մի դաշտ տեսնելիս,
Աչքիս ցողով գրեցի
«Տեղ դատա՛րկ, սիրուհիս»:

* * *

Այն ժամանա՛կ կտեսնես
Ով է վախկոտ, ով՝ արի,
Երբ նեղ օղակը դիտես,
Ընդդիմաքաշխ շարքերի:

Մարդու ներսում քաջությունն,
Ինչպես հո՛ւրն է պողպատի,
Թե ոչ՝ քարի հարվածով
Հուրն երկաթից չի ցայտի:

پیدا شود که مرد کدامست و زن کدام
در تنگنای حلقه مردان به روز جنگ
مردی درون شخص چو آتش در آهنست
و آتش برون نیاید از آهن مگر به سنگ

«ԳՈՒԼԻՍՏԱՆԻՑ» ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ՊԻՏԱՆԻ ԽՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

* * *

Անգութ մարդը կնարմատ է և ագահ հոգևորականը՝ ավազակ:

Ասացեք մեր թաղի փիլոնավորին
Միրտը քո սև է, տեսքդ՝ խաբուսիկ,
Մարդկանց նամուսից ձեռքդ կարճ պահիր,
Թե չէ ի՞նչ օգուտ երկար թեղանքից:

* * *

Ծերացած պոռնիկը ի՞նչ կարող է անել անճարությունից՝ թե ոչ ապաշխարել և պաշտոնից հեռացված ոստիկանը՝ ձեռք քաշել մարդկանց նեղացնելուց:

Աստվածարժան է այն ջահել —
Որ մարդկանց միջում լինի դյուրընտել,—
Թե ոչ ծերացած առյուծը ինքնին —
Իր թաքուն խորշից չի կարող ելնել:

Երիտասարդը պիտի ինքը հսկե
Սրտում եռացող, սանձարձակ կրքին,
Թե ոչ որքան էլ ծերը ջանկանա՝ —
Շարժել չի կարող թուլացած ագին:

* * *

Հարստությունը կյանքի հանգստության համար է և ոչ թե կյանքը՝ հարստություն դիզելու:

Խելացի մեկից հարցրեցին. «Ի՞նչ է երջանկությունը և ո՞րն է տառապանքը»:

Ասաց.

— Նա է բարեբախտը՝ ով ապրեց և կերավ, և նա է դժբախտը, որ դիզեց ու գնաց:

Մի՛ աղոթիր այն հիմարի համար,
Որ այս կյանքում դիզեց միայն ու չկերավ:

* * *

Երկու հոգի կան, որ իզուր աշխատում և իզուր տքնում են: Մեկը նա, որ դրամ է դիզում ու չի ուտում, և մյուսն այն, որ սովորում է ու չի գործադրում:

Որքան սովորես փեշակ և արվեստ
Թե չգործադրես՝ հիմար մի էշ ես,
Գիր ու գիրք բարձեն թե ավանակին,
Չի դառնա գիտուն այդ չորքոտանին,
Ուղեղը դատարկ ինչպես հասկանա
Փայտ կա կռնակին, թե՝ գիրք իր վրա:

* * *

Երեք բան կա, որ հաստատուն չի մնա.

Հարստությունը՝ առանց առևտուրի, գիտությունը՝ առանց մտքերի փոխանակության, և իշխանությունը՝ առանց քաղաքականության:

* * *

Վատերին ողորմելը՝ բարիներին անիրավել է ու բռնավորներին ներելը՝ խեղճերին զրկել է:

Եթե ստոր մարդուն շոյես ու գգվես,
Նա կմեղանչի ունեցվածքիս դեմ:

* * *

Ոչ թագավորների բարեկամությանը կարելի է վստահել և ոչ գեղեցիկ մանուկների ձայնին, որ առաջինը մի կասկածով փոխվում է և մյուսը մի երազով[1] խափանվում:

Սիրտդ մի տուր հազար հոգու սիրեկանին.
Նույնն է քամուն տված լինես կյանքիդ փոշին:

* * *

Բոլոր գաղտնիքներդ մի հայտնիր ընկերոջդ. ի՞նչ գիտես՝ մի օր թշնամիդ չդառնա և ձեռքիցդ եկած չարիքը մի հասցրու թշնամուդ, որ գուցե մի օր ընկերդ դառնա:

Մի գաղտնիք որ ուզես թաքուն պահել, լեզվի մի առ նույնիսկ սրտակից ընկերոջդ մոտ, քանի որ նա էլ իր սրտակից ընկերներն ունի և այսպես շարունակաբար:

Ավելի լավ է լռես քար սրտիդ
Գաղտնիքը հայտնես ու խնդրես լռի,

[1] Պատանու առաջին երազախաբով:

Նախքան որ առուն հորդի ափերից՝
Ակիցը կտրեր ջուրը աղբյուրի:
....

* * *

Երբ թշնամին հուսահատվի իր բոլոր հնարքներից, նա կթաքնվի բարեկամի դիմակի տակ և բարեկամությամբ բաներ քեզ կանի, որ ոչ մի թշնամի չկարողանա անել:

* * *

Օձի գլուխը թշնամուդ ձեռքով ճզմիր, որ դա երկու բարի արդյունք կարող է ունենալ. կամ այն է՝ որ թշնամիդ կհաղթի և դու մի օձ սպանած կլինես և կամ այն՝ որ օձը կհաղթի և դու մի թշնամուց ազատված կլինես:

Մի արհամարհիր քո թույլ թշնամուն
Պայքարում կյանքի,
Առյուծի սիրտը կրծքից կպոկի
Երբ հուսահատվի:

* * *

Մի՛ եղիր դու լրաբերը այն գործի, որ գիտես սիրտ կկոտրի: Ուրիշը թող այդ լուրը բերի:

Գարնան ավետիս դու բեր, ով Սոխակ,
Վատ լուրը թող Բուն բերի այլանդակ:

* * *

Թշնամուցդ մի խաբվիր և շողոքորթի քծնանքը մի գնիր, որ առաջինը թակարդ է լցրել և երկրորդը ագահության փեշն է երկարել: Հիմարը սիրում է գովասանքը, որը մարդու նմանեցնում է ուռած մի դիակի:

Մի լսիր դու այն մարդու գովքերին,
Որ քեզնից փոքրիկ սպասելիք ունի,
Թե չկատարես ուզածը նրա՝
Հազար մի պակաս քո մեջ կգտնի:

* * *

Ամեն մարդ իր խելքը բարձր ու ձիգ և իր երեխան գեղեցիկ է գտնում:

Կռվում էին մի մուսուլման և մի հրեա.
Նրանց լուտանքից ծիծաղեցի ես ակամա:

Մուսուլմանը ասում էր թե՝ «Ես ճիշտ չասեմ՝
Թող որ մեռնեմ ու ինձ թաղեն որպես հրեա»:
Հրեան ասաց. «Ես Թորաթով կերդվեմ ահա.
Եթե ստեմ՝ մուսուլման եմ, Աստված վկա»:
Թե աշխարհից մի օր չքվի խելք, միտք և ուշ՝
Չկա՛ մեկը, որ ինքն իրեն սեպի ապուշ:

* * *

Տասը հոգի մի սեղանից կուտեն և երկու շուն մի դիակի վրա կկռվեն: Ագահին ամբողջ աշխարհն էլ տաս՝ դեռ սոված է և չափավոր մարդը մի կտոր հացով կուշտ է: Իմաստունները ասել են. «Չափավորությունը ավելի արժեք ունի, քան հարստությունը»:

Սոված մարդու աղիքը նեղ
Դատարկ հացով կկշտանա,
Բայց նեղ աչքին՝ բուրք–բարիքով
Այս աշխարհի՝ կշտում չկա:
....

* * *

Մեկին հարցրին՝ իր գիտությունը չգործածող իմաստունը ինչի՞ է նման: Պատասխանեց. «Մեղր չտվող մի մեղվի»:

Այդ անգութ ու սև մեղվից հարցրեցեք,
Թե մեղր չի տալիս՝ ինչո՞ւ է խայթում:

* * *

Եթե փորի ցավը չլիներ, ոչ մի թռչուն թակարդ չէր ընկնիլ և ոչ մի որսորդ թակարդ չէր լարի:

Իմաստունները ուշ–ուշ են ուտում և հասկացողները կիսաքաղց են ելնում սեղանից, ճգնավորները ուտում են չմեռնելու համար և երիտասարդները այնքան են ուտում մինչև ափսեն վերցնեն նրանց առաջից, ծերերը՝ մինչև հոգնեն, իսկ ցոփերը՝ մինչև ստամոքսը շնչելու համար նեղ և սփռոցի շուրջ ուրիշներից տեղ չմնա:

Փորի գերին երկու գիշեր քուն չունի,
Մեկ քիչ կերած ու մեկ էլ կուշտ ժամանակ:

* * *

Կամազուրկ աշակերտը՝ անփող սիրահարի, և ուղին չճանաչող ճամփորդը՝ անփետուր թռչունի, և չգործադրող իմաստունը՝ անպտուղ ծառի, և անուսում հոգևորականը՝ անդուռ մի տան նման է:

* * *

Չնայած որ ցանկալի է արքայապարգև հագուստը, բայց ավելի ևս մեծարգի է սեփական ցնցոտին և չնայած հաճելի է մեծերի սեղանը, բայց ավելի համեղ են հացի փշրանքները քսակիդ:

Թե իմ քրտինքով ուտեմ ձեռք բերած
Քացախ ու կոտեմ,
Ավելի լավ է, քան մի հարուստի
Գառ ու հացն ուտեմ:

* * *

Ճշմարտության ճանապարհին խոտորնակ և Իմաստության Վարպետների գաղափարին հակառակ է դեղը կասկածելով գործածել և անծանոթ ճամփան առանց քարավանի անցնել:

Էմամ Մորշեդ Մոհամադ Ղազալիից (Աստծո ողորմությունը իջնի նրա հոգուն) հարցրեցին.

— Ինչպես դու հասար գիտության այս բարձունքին:

Պատասխանեց.

— Նրանով, որ չիմացածս ուրիշից հարցնելուց չամաչեցի:

Առողջանալու հույսը խելքին մոտ մի բան է միայն,
Երբ զարկերակդ հասկացող մարդու մատներին հանձնես,
Ինչ որ չգիտես՝ ուրիշից հարցրու, որ ամոթն այդ՝
Պատճառ կլինի, որ իմաստության բարձունքին հասնես:

* * *

Մի մեծավորից հարցրեցին.

— Այն բոլոր գերազանցություններով, որ աջ ձեռքն ունի, ինչո՞ւ մատանին ձախ ձեռքի մատին են դնում:

Պատասխանեց.

— Միթե չգիտես, որ գիտության տեր մարդը միշտ զրկված է լինում:

Նա, որ ստեղծել է տիեզերքն անհուն,
Կամ բախտ է շնորհում, կամ իմաստություն:

ԴԵՐՎԻՇՆԵՐԻ ԲԱՐՔԵՐԻՑ

* * *

Իմաստուն մեկին մի հավաքույթում անդադար գովում ու նրա բարձր առաքինությունները չափազանցում էին:

Գլուխը բարձրացրեց և ասաց.

— Ես այն եմ, որ ինքս գիտեմ: Իմ դեմքիս գովում եք ինձ և իմ ցավը նրանումն է, որ ներքինիս մասին գաղափար չունեք[1]:

Իմ արտաքինը գովում են մարդիկ, չտեսնելի պես,
Այնինչ իմ ներքին կեղտոտությունից գլխիկոր եմ ես,
Այս գեղեցկությամբ, որ բնությունը սիրամարգ ստեղծեց՝
Այդ թռչունը զեռ աչքը չի պոկում իր ոտքից տգեղ:

* * *

Լողմանից հարցրեցին.

— Ումի՞ց սովորեցիր քաղաքավարությունը:

Պատասխանեց.

— Անքաղաքավարներից: Այն բոլորը, ինչ նրանք անում էին և ես չէի հավանում, խուսափում էի կրկնելուց:

Ինչ որ տգետը չհասկանալով ասի կամ անի,
Խելոքը դրանից կարող է քաղել խրատ գեղանի:
Դու իմաստության թե հարյուր խրատ կարդաս տգետին,
Կմտածի, որ քամու բերածը քամին կտանի:

* * *

Մի թագավոր տեսավ մի ճգնավորի և հարցրեց.

— Երբևիցե հիշո՞ւմ ես դու մեզ:

— Այո՛,— պատասխանեց,— երբ մոռանում եմ Աստծուն:

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՐՔԵՐԻՑ

* * *

Թագավորներից մեկին չինացի ստրկուհի բերին, ցանկացավ հարբած ժամանակ նրան մոտենալ, ստրկուհին չթողեց: Թագավորը զայրացավ և նրան նվիրեց մի սևամորթի, որի վերի շուրթը անցնում էր քթից և վարի շուրթը կախվել էր պարանոցից: Մեկը, որից լեռնադևը կփախներ ու ծծումբը կհոտեր նրա գրկում:

....

Ասում են, որ այդ ժամանակ սևամորթի բնությունը անսանձական էր և ցանկությունը հաղթական, կիրքը շարժվեց և ստրկուհու կնիքը կոտրեց:

Երբ առավոտյան Թագավորը փնտրեց ստրկուհուն և չգտավ, պատմեցին նրան եղելությունը: Զայրացավ և հրամայեց, որ սևամորթին և ստրկուհուն կապեն իրար և աշտարակից վայր ձգեն:

Բարեմիտ վազիրներից մեկը բարեխոսության գլուխ խոնարհեց և ասաց.

— Խեղճ սևամորթը մեղավոր չէ, քանի որ քո ծառաները սովորել են իրենց Տիրոջ առատաձեռնության:

[1] Բնագրում արաբերեն է:

Արքան պատասխանեց.

— Թե որ մի գիշեր ստրկուհու հետ իր գործը ուշացներ՝ ի՞նչ կլիներ, քանի որ ես նրան այդ ստրկուհու արժեքից շատ ավելի դրամ կպարգևեի:

Վազիրն ասաց.

— Ով Երկրի Տեր, մի՞թե չես լսել, որ ասված է.

Աղբյուր հասած ծարավին
Թե որ ծեծես անխնա՝
Նույնն է անձար մի աղքատ
ՌԱՄԱԶԱՆԻՑ[1] վախենա:

Թագավորը հավանեց այդ խոսքը և ասաց.

— Այժմ, սնամորթ, ներեցի քեզ, բայց ստրկուհուն ի՞նչ անեմ:

Նա պատասխանեց.

— Ստրկուհուն էլ նվիրիր ինձ, որ իմ կերածի մնացորդը միայն ինձ է արժանի:

....

* * *

Աղոթընկալ մի դարվիշ երևաց Բաղդադում: Լուր տվեցին Հոջաջ Յուսեֆին, իր մոտ կանչեց նրան ու ասաց.

— Ինձ բարի մի օրհնություն տուր:

Դարվիշն ասաց.

— Աստված իմ, այս մարդու հոգին առ:

— Ի՞նչ օրհնություն է դա, Աստծու սիրուն,— բացականչեց Հոջաջ Յուսեֆը:

Պատասխանեց.

— Սա բարի օրհնություն է քո, ինչպես և բոլոր մուսուլմանների համար:

Ով ստորադասին չարչարող իշխան,
Մինչ ե՞րբ տաք մնա անգութի շուկան,
Ինչի՞ն է քեզ պետք տերությունը այս,
Ավելի լավ է մեռնես՝ քան մնաս:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* * *

Լսեցի, որ մի վաճառական հարյուր հիսուն ուղտի բեռ ուներ և քառասուն ծառա: Մի գիշեր Քիշ կղզում ինձ իր օթյակը հրավիրեց և ամբողջ գիշեր չդադարեց անմիտ խոսելուց, որ այսինչ ապրանքս Թուրքեստան և այնինչ հարստությունս Հնդկաստանումն է, և որ այս մուրհակը այսինչ գետնի և այնինչ բանին՝ այսինչը երաշխավոր է: Երբեմն ասում էր՝ մտադիր եմ Ալեքսանդրիա ճամփորդել, քանի որ այնտեղի օդը լավն է, բայց հետո ասում էր, որ Արևմտյան Ծովը փոթորկալից է:

— Ով Սաադի, մի ուրիշ ճամփա կա իմ առաջ, որ թե այն էլ երթամ, մնացորդ կյանքս մի անկյուն կքաշվեմ:

Հարցրեցի.

— Այդ ի՞նչ ճանապարհ է:

Ասաց.

— Ֆարսի ծծումբը ուզում եմ տանել Չինաստան, որ ասում են այնտեղ մեծ արժեք ունի և այնտեղից հախճապակի տանեմ Հռոմ և Հռոմի բեհեզը՝ Հնդկաստան և Հնդկաստանի պողպատը՝ Հալեպ և Հալեպի ապակին՝ Եմեն և Եմենի հյուսվածքը՝ Ֆարս և դրանից հետո կթողնեմ առևտուրը և կնստեմ մի կրպակում:

Վերջապես այս խելառ զառանցանքներից այնքան ասեց, որ այլևս ավելին ասելու կարողություն չմնաց:

Ասաց.

— Սաադի, դու էլ տեսածներիցդ ու լսածներիցդ մի բան պատմիր:

Ասացի.

Արդյոք լսեցի՞ր, Ղուր անապատում
Ավագին ընկավ բեռը հարուստի,
Ասացին.— աչքը աչքածակների
Հողով լեցնելն է միայն կշտացնում:

ՍԻՐՈ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* * *

Հիշում եմ, որ մի գիշեր սիրուհիս դռնից ներս մտավ: Այնպես շփոթված տեղից ցատկեցի, որ թեղանիքս ճրագս մարեց.

ԽԱՎԱՐ ՊԱՏՌՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՆ
ԻՆՁ ԵՐԵՎԱՑ ԳԻՇԵՐՈՎ[1]
Ու զարմացա իմ բախտից,
Ո՞վ ինձ պատվեց այդ զանձով:

Սիրուհիս ներեց ու սկսեց ինձ նախատել, ասելով.

— Դու որ ինձ տեսար՝ ճրագդ մարեցիր և ի՞նչ էր պատճառը:

Ասացի.

— Պատճառը երկու էր: Նախ այն՝ որ կարծեցի արևն է ծագել և երկրորդ այն՝ որ այս ԲԵՅԹԸ[2] հիշեցի.

[1] Մահմեդական լուսնային տարու 9-րդ ամիսն է. պասը պարտադիր է, գինի խմելն՝ արգելված: (Ն. Մ.)

[1] Բնագրում արաբերեն է:

[2] Երկտող

Թե որ մի տգետ մոտենա լույսիդ՝
Ների՛ր նրան մարդկանց բազմության միջև,
Ու թե քաղցրաշուրթ մեկը մոտենա՝
Սունկը մարիր շարժումով թեթև:

* * *

Մեկը գեղեցիկ և երիտասարդ մի կին ուներ, որը մեռավ և նրա զառամած զոքանչը, ըստ ամուսնական պայմանագրության, նրա տանը մնաց և ամուսինը զոքանչի հարևանությունից հոգեպես տանջվում և նրա մերձավորությունից ազատվելու ճար ու ճամփա չէր գտնում: Մի օր էլ մի խումբ ծանոթներ նրան այցի եկան: Նրանցից մեկը հարցրեց.

— Ինչպե՞ս ես ապրում քո սիրեցյալից հեռու:

Պատասխանեց.

— Կնոջս չտեսնելը ինձ համար այնքան ծանր չէ, որքան զոքանչիս տեսնելը:

Վարդը գողացան ու ինձ փո՛ց մնաց,
Իմ գանձը տարան ու ինձ օձ մնաց,
Թե աչքս տեգի ծայրին տեսնեի՝
Դեմքն այս տեսնելուց լավ էր անկասկած:
Թող ինձ մոռանան ընկերներ բոլոր,
Բայց ես չտեսնեմ թշնամուս մի՛ օր:

* * *

Իմաստուն մեկից հարցրեցին, թե որ մեկը լուսադեմ գեղեցկուհու հետ առանձնացած լինի ու դռները փակած և մրցակիցները քնած, սիրտը ցանկությամբ լի ու կիրքը անսանձ, ինչպես որ ասում է արաբը. «Արմավը հասուն՝ և պարտիզպանը՝ քուն», ոչ մի արգելք չլինի, և նա կարողանա ժուժկալությամբ անհպելի թողնել կույսին:

Պատասխանեց.

— Թե որ նույնիսկ լուսադեմ գեղեցկուհին ճողոպրի, բամբասողների լեզվից չի ազատվել:

Մարդը կարող է ինքն իրեն սանձել,
Չարախոս լեզվից չի կարող փախչել:

Նույնիսկ թե միշտ կախ գլուխդ
Գործիդ կբի՝
Անկարող ես կտրել լեզուն
Բամբասանքի:

ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* * *

Մի ծերուկից հարցրեցին.

— Ինչո՞ւ չես ամուսնանում:

Պատասխանեց.

— Չեմ սիրում ծեր կանանց:

Ասացի.

— Երիտասարդ կին առ, քանի որ հարուստ ես:

Պատասխանեց.

— Ես որ ծեր եմ ու ծեր կանանց չեմ սիրում, ինչպե՞ս կարող է երիտասարդ կինը իմ ծերությունը սիրել:

Մատաղ տարիք է կինը հավանում
Եվ ոչ թե ոսկի,
Գերադասում է մի կտոր կոճիկ
Տասը լիդր մսի:

درعشق و جوانی

شبی یاد دارم که یاری عزیز از در در آمد. چنان بیخود از جای بر جستم که چراغم به آستین کشته شد.
سَری طَیفُ مَن یَجلو بِطلعَتِه الدُّجی' شگفت آمد از بختم که این دولت از کجا
بنشست و عتاب آغاز کرد که: مرا در حال بدیدی چراغ بکشتی، به چه معنی؟
گفتم: به دو معنی: یکی آن که گمان بردم که آفتاب برآمد و دیگر آنکه این بیتم به خاطر بود.

چون گرانی به پیش شمع آید ‌ ‌ ‌ خیزش اندر میان جمع بکش
ور شکر خنده‌ایست شیرین لب ‌ ‌ ‌ آستینش بگیر و شمع بکش

***

یکی را زنی صاحب جمال جوان درگذشت و مادرزن فرتوت به علت کابین در خانه متمکن بماند و مرد از محاورت او به جان رنجیدی و از مجاورت او چاره ندیدی تا گروهی آشنایان به پرسیدن آمدندش.
یکی گفتا: چگونه‌ای در مفارقت یار عزیز؟
گفت: نادیدن زن بر من چنان دشخوار نیست که دیدن مادرزن.

گل به تاراج رفت و خار بماند ‌ ‌ ‌ گنج برداشتند و مار بماند
دیده بر تارک سنان دیدن ‌ ‌ ‌ خوشتر از روی دشمنان دیدن
واجب است از هزار دوست برید ‌ ‌ ‌ تا یکی دشمنت نباید دید

***

یکی را از علما پرسیدند که: یکی با ماهروییست در خلوت نشسته و درها بسته و رقیبان خفته و نفس طالب و شهوت غالب، چنان که عرب گوید التّمرُ یانِعٌ وَ النّاطورُ غَیرُ مانِع. هیچ باشد که به قوت پرهیزگاری از او به سلامت بماند؟
گفت: اگر از مهرویان به سلامت بماند از بدگویان نماند.

و اِن سَلِمَ الاِنسانُ مِن سوءِ نَفسِهِ ‌ ‌ ‌ فَمِن سوءِ ظَنِّ المُدَّعی لَیسَ یَسلَمُ
شاید پس کار خویشتن بنشستن ‌ ‌ ‌ لیکن نتوان زبان مردم بستن

درضعف و پیری

پیرمردی را گفتند: چرا زن نکنی؟
گفت: با پیرزنانم عیشی نباشد.
گفتند: جوانی بخواه چو مکنت داری.
گفت: مرا که پیرم با پیرزنان الفت نیست پس او را که جوان باشد با من که پیرم چه دوستی صورت بندد؟

پر هَفتا ثَله جُونی می‌کُند ‌ ‌ ‌ عَشغِ مقری وَ خُیْ بِنی چِشِ رُوشْت
زور باید نه زر که بانو را ‌ ‌ ‌ گزری دوست‌تر که ده من گوشت

***

در سیرت پادشاهان

یکی را از مُلوک، کنیزکی چینی آوردند. خواست تا در حالتِ مستی با وی جمع آید. کنیزک ممانعت کرد. مَلِک در خشم رفت و مر او را به سیاهی بخشید که لبِ زبَرینش از پَرّهِ بینی درگذشته بود و زیرینش به گریبان فرو هشته. هَیکلی که صَخرالجِنّ از طلعتش بِرَمیدی و عَینُ‌القَطْر از بغلش بگندیدی.

....

آورده‌اند که سیه را در آن مدت، نفس طالب بود و شهوت غالب؛ مِهرش بجنبید و مُهرش برداشت. بامدادان که مَلِک، کنیزک را جُست و نیافت، حکایت بگفتند. خشم گرفت و فرمود تا سیاه را با کنیزک استوار ببندند و از بام جوسق به قعر خندق در اندازند. یکی از وزرای نیک‌محضر روی شفاعت بر زمین نهاد و گفت: سیاه بیچاره را در این خطایی نیست که سایر بندگان و خدمتکاران به نوازش خداوندی مُتعوّدند. گفت: اگر در مفاوضهٔ او شبی تأخیر کردی، چه شدی؟ که من او را افزون از قیمت کنیزک دلداری کردمی. گفت: ای خداوند روی زمین! نشنیده‌ای؟

تشنهٔ سوخته در چشمهٔ روشن چو رسید   تو مپندار که از پیلِ دَمان اندیشد
مُلحِد گُرسنه در خانهٔ خالی بر خوان   عقل باور نکند، کز رمضان اندیشد

مَلِک را این لَطیفه پسند آمد و گفت: اکنون سیاه تو را بخشیدم؛ کنیزک را چه کنم؟ گفت: کنیزک، سیاه را بخش که نیم‌خوردهٔ او، هم او را شاید.

....

***

درویشی مُستَجاب‌الدَّعوة در بغداد پدید آمد. حَجّاجِ یوسف را خبر کردند. بخواندش و گفت: دعایِ خیری بر من بکن. گفت: خدایا! جانش بستان. گفت: از بهرِ خدای این چه دعاست؟ گفت: این دعایِ خیر است تو را و جملهٔ مسلمانان را

ای زبردست زیردست آزار   گرم تا کی بماند این بازار؟
به چه کار آیدت جهانداری؟   مردنت بهْ که مردم آزاری

در فضیلت قناعت

بازرگانی را شنیدم که صد و پنجاه شتر بار داشت و چهل بنده خدمتکار.
شبی در جزیرهٔ کیش مرا به حجرهٔ خویش درآورد.
همه شب نیارمید از سخن‌های پریشان گفتن که: فلان انبازم به ترکستان و فلان بضاعت به هندوستان است و این قبالهٔ فلان زمین است و فلان چیز را فلان ضمین.
گاه گفتی: خاطر اسکندریه دارم که هوایی خوش است.
باز گفتی: نه! که دریای مغرب مشوّش است. سعدیا! سفری دیگرم در پیش است. اگر آن کرده شود بقیتِ عمرِ خویش به گوشه بنشینم
گفتم: آن کدام سفر است؟
گفت: گوگردِ پارسی خواهم بردن به چین که شنیدم قیمتی عظیم دارد و از آنجا کاسهٔ چینی به روم آرم و دیبای رومی به هند و فولادِ هندی به حلب و آبگینهٔ حلبی به یمن و بردِ یمانی به پارس و زآن‌پس ترکِ تجارت کنم و به دکّانی بنشینم.
انصاف از این ماخولیا چندان فروگفت که بیش طاقتِ گفتنش نماند!
گفت: ای سعدی! تو هم سخنی بگوی از آن‌ها که دیده‌ای و شنیده
گفتم:

آن شنیدستی که در اقصای غور   بارسالاری بیفتاد از ستور
گفت چشمِ تنگِ دنیادوست را   یا قناعت پر کند یا خاکِ گور

***

گر جور شکم نیستی، هیچ مرغ در دام صیاد نیوفتادی بلکه صیاد خود دام ننهادی.
حکیمان دیر دیر خورند و عابدان نیم سیر و زاهدان سد رمق و جوانان تا طبق برگیرند و پیران تا عرق بکنند، اما قلندران چندان که در معده جای نفس نماند و بر سفره روزی کس.

اسیر بند شکم را دو شب نگیرد خواب   شبی ز معدهٔ سنگی شبی ز دلتنگی

***

تلمیذ بی ارادت عاشق بی زر است و رونده بی معرفت مرغ بی پر و عالم بی عمل درخت بی بر و زاهد بی علم خانهٔ بی در.

***

خلعت سلطان اگر چه عزیز است، جامهٔ خلقان خود به عزت تر و خوان بزرگان اگر چه لذیذ است، خردهٔ انبان خود به لذت تر.

سرکه از دسترنج خویش و تره   بهتر از نان دهخدا و بره

***

خلاف راه صواب است و عکس رای اولوالالباب، دارو به گمان خوردن و راه نادیده بی کاروان رفتن.
امام مرشد محمد غزالی را رحمة الله علیه پرسیدند: چگونه رسیدی بدین منزلت در علوم؟
گفت: بدان که هر چه ندانستم از پرسیدن آن ننگ نداشتم.

امید عافیت آن گه بود موافق عقل   که نبض را به طبیعت شناس بنمایی
بپرس هر چه ندانی که ذل پرسیدن   دلیل راه تو باشد به عز دانایی

***

بزرگی را پرسیدند: با چندین فضیلت که دست راست را هست خاتم در انگشت چپ چرا می‌کنند؟
گفت: ندانی که اهل فضیلت همیشه محروم باشند؟

آن که حظ آفرید و روزی داد   یا فضیلت همی دهد یا بخت

در اخلاق درویشان

یکی را از بزرگان به محفلی‌اندر همی‌ستودند و در اوصافِ جمیلش مبالغه می‌کردند سر بر آورد و گفت: من آنم که من دانم.

كَفَيْتَ اَذَىً يا مَنْ يَعُدُّ مَحاسِنی
عَلانِيَتی هذا وَلَمْ تَدْرِ ما بَطَنْ
شخصم به چشمِ عالمیان خوب‌منظر است   وز خُبثِ باطنم سرِ خجلت فتاده پیش
طاووس را به نقش و نگاری که هست، خلق   تحسین کنند و او خجل از پای زشتِ خویش

***

لقمان را گفتند: ادب از که آموختی؟
گفت: از بی ادبان؛ هر چه از ایشان در نظرم ناپسند آمد از فعل آن پرهیز کردم.

نگویند از سر بازیچه حرفی   کز آن پندی نگیرد صاحب هوش
و گر صد بابِ حکمت پیشِ نادان   بخوانند، آیدش بازیچه در گوش

***

پادشاهی پارسایی را دید
گفت: هیچت از ما یاد آید؟
گفت: بلی! وقتی که خدا را فراموش می‌کنم

* * *

هر آن سری که در سر داری با دوست در میان منه چه دانی که وقتی دشمن گردد و هر گزندی که توانی، به دشمن مرسان که باشد که وقتی دوست شود.

رازی که نهان خواهی، با کس در میان منه وگرچه دوست مخلص باشد که مر آن دوست را نیز دوستان مخلص باشد، همچنین مسلسل

خامشی به که ضمیر دل خویش   با کسی گفتن و گفتن که مگوی
ای سلیم آب ز سرچشمه ببند   که چو پر شد نتوان بستن جوی

* * *

دشمن چواز همه حیلتی فروماند سلسله ی دوستی بجنباند پس آنگه بدوستی کارهایی کند که هیچ دشمن نتواند.

* * *

سرِ مار به دستِ دشمن بکوب که از احدَی الحُسنَیین خالی نباشد: اگر این غالب آمد، مار کُشتی و گر آن، از دشمن رَستی.

به روزِ معرکه ایمن مشو ز خصمِ ضعیف   که مغزِ شیر برآرد چو دل ز جان برداشت

* * *

خبری که دانی که دلی بیازارد، تو خاموش تا دیگری بیارد.

بلبلا! مژدهِ بهار بیار   خبرِ بد به بوم باز گذار

* * *

فریب دشمن مخور و غرور مداح مخر، که این دام زرق نهاده است و آن دامن طمع گشاده. احمق را ستایش خوش آید چون لاشه که در کعبش دمی فربه نماید.

الا تا نشنوی مدح سخنگوی   که اندک مایه نفعی از تو دارد
که گر روزی مرادش بر نیاری   دو صد چندان عیوبت بر شمارد

* * *

همه کس را عقل خود بکمال نماید و فرزند خود بجمال.

یکی یهود و مسلمان نزاع می‌کردند   چنان که خنده گرفت از حدیث ایشانم
به طیره گفت مسلمان: گر این قبالهٔ من   درست نیست خدایا یهود میرانم
یهود گفت: به تورات می‌خورم سوگندا!   وگر خلاف کنم همچو تو مسلمانم
گر از بسیط زمین عقل مُنعَدِم گردد   به خود گمان نبَرَد هیچکس که نادانم

* * *

ده آدمی بر سفره‌ای بخورند و دو سگ بر مرداری با هم به سر نبرند. حریص با جهانی گرسنه است و قانع به نانی سیر. حکما گفته‌اند: توانگری به قناعت، به از توانگری به بضاعت

رودهٔ تنگ به یک نانِ تهی پر گردد   نعمتِ روی زمین پر نکند دیده تنگ

....

* * *

یکی را گفتند: عالم بی عمل به چه ماند.

گفت: به زنبور بی عسل .   زنبور درشت بی مروت را گوی   باری چو عسل نمی‌دهی نیش مزن

گزیده هایی از گلستان

در آداب صحبت

مرد بی مروت زن است و عابد با طمع رهزن.

ای به ناموس کرده جامه سپید   بهر پندار خلق و نامه سیاه
دست کوتاه باید از دنیا   آستین خوه دراز و خوه کوتاه

* * *

قحبه پیر از نابکاری چه کند که توبه نکند و شحنهٔ معزول از مردم آزاری.

جوان گوشه نشین شیرمرد راه خداست   که پیر خود نتواند ز گوشه‌ای برخاست
جوان سخت می باید که از شهوت بپرهیزد   که پیر سست رغبت را خود آلت بر نمی‌خیزد

* * *

مال از بهر آسایش عمر است نه عمر از بهر گرد کردن مال. عاقلی را پرسیدند: نیکبخت کیست و بدبختی چیست؟ گفت: نیکبخت آن که خورد و کشت و بدبخت آن که مرد و هشت.

مکن نماز بر آن هیچ کس که هیچ نکرد   که عمر در سرِ تحصیلِ مال کرد و نخورد

* * *

دو کس رنج بیهوده بردند و سعی بی فایده کردند: یکی آن که اندوخت و نخورد و دیگر آن که آموخت و نکرد.

علم چندان که بیشتر خوانی   چون عمل در تو نیست نادانی
نه محقق بود نه دانشمند   چارپایی بر او کتابی چند
آن تهی مغز را چه علم و خبر   که بر او هیزم است یا دفتر

* * *

سه چیز پایدار نماند: مال بی تجارت و علم بی بحث و ملک بی سیاست

* * *

رحم آوردن بر بدان ستمست بر نیکان عفو کردن از ظالمان جورست بر درویشان.

خبیث را چو تعهد کنی و بنوازی   به دولت تو گنه می‌کند به انبازی

* * *

به دوستی پادشاهان اعتماد نتوان کرد و بر آواز خوش کودکان که آن به خیالی مبدل شود و این به خوابی متغیر گردد

معشوق هزار دوست را دل ندهی   ور می‌دهی آن دل به جدایی بنهی

ԸՆՏՐԱՆԻ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՍԱԱԴԻԻՑ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«…Թարգմանությունը ապակու տակ դրված մի վարդ է, գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի դառնա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը չափված ու կշռած, ունեն իրենց խորը նշանակությունը և հաստատ տեղը…»:

Հովհաննես Թումանյան

ԱՆՁՐԵՎԻ ԿԱԹԻԼԸ

Անձրևի մի կաթիլ
Ցած ընկավ մի ամպից.
Երբ տեսավ ծովը լայն,
Նա շիկնեց իր չափից:

Ասաց. «Այս ծովի մոտ
Ուրեմն ես ինչ եմ.
Ուր որ կա օվկիանը,
Հեգ շիթս ոչինչ եմ»:

Երբ նայեց ինքն իրան
Այսպես խեղճ ու խոնարհ,
Մի ոստրե նրան գրկեց,
Նա եղավ մի գոհար[1]:

……………………………

Եթե նա բարձրացավ,
Քանզի նախ խոնարհվեց,
Եթե կյանք առացավ,
Քանզի մահ որոնեց:

……………………………

Թարգմ.՝ Հովհաննես Խան Մասեհյան
(«Մուրճ» հանդես, 1901, № 2)

کی قطره باران ز ابری چکید
خجل شد چو پهنای دریا بدید
که جایی که دریاست من کیستم؟
گر او هست حقا که من نیستم
چو خود را به چشم حقارت بدید
صدف در کنارش به جان پرورید
………
بلندی از آن یافت کاو پست شد
در نیستی کوفت تا هست شد
………

* * *

Թող լինի դերվիշն ազնիվ և բարի,
Հոգ չէ թե մարդիկ հոգեհաց չտան,
Թող լինի կույսը դեմքով գեղանի,
Հոգ չէ թե մատին մատնիք չշողան,
Իսկ ես որ ունեմ գանձեր անսահման,
Արժանի չեմ այլևս ճգնավոր անվան:

Թարգմ.՝ Մեսրոպ վրդ. Մաքսուդյան
(«Անահիտ», Փարիզ, 1905, № 6)

خاتونِ خوب‌صورتِ پاکیزه روی را
نقش و نگار و خاتمِ پیروزه گو مباش
درویشِ نیک سیرتِ پاکیزه خوی را
نانِ رِباط و لقمه دریوزه ، گو مباش
تا مرا هست و دیگرم باید
گر نخوانند زاهدم، شاید

* * *

Գիշեր է խոր, չեմ մոռանում, քուն չի գալիս իմ աչքերին.
Թրվռում էր թիթեռը թույլ և ասում էր մեղրամոմին.
— Սիրահար եմ քո թեժ բոցին և վառվում եմ ես նրա մեջ,
Դու ինչո՞ւ ես այդպես այրվում և արտասվում այդպես անվերջ.
Եվ ասում էր մոմը նրան.— ով մոլորված իմ մրցակից,
Բաժանեցին ինձ իմ սիրած, իմ քաղցրահամ մեղրահացից:

……………………………

Ծանոթ չեն քեզ վիշտը սիրո, սիրո հուրը հավերժական,
Գեթ մի վայրկյան կանգ առնելու համբերություն չունես անգամ.
Բոցից թռած ամեն կայծից, փախչում ես դու թևին տալով,
Ես կանգնում եմ, մինչև այրվեմ ու վերջանամ արտասվելով,
Թե իմ սիրո կրակը թեժ լույս թևերն է այրել քո թույլ,
Տես, ինձ այրել ամբողջովին, խորովել է ոտից-գլուխ:

……………………………

Ծով մի՛ մտիր, զգուշացիր ալիքներից դու մոլեգին,
Իսկ թե մտար, կյանքդ հանձնիր մրրիկներին ու տարերքին:

Թարգմ.՝ Համո Սահյան
(«Գրական թերթ», Երևան, 1958, № 21)

شبی یاد دارم که چشمم نخفت
شنیدم که پروانه با شمع گفت
که من عاشقم گر بسوزم رواست
تو را گریه و سوز باری چراست؟
بگفت ای هوادار مسکین من
برفت انگبین یار شیرین من
………
که ای مدعی عشق کار تو نیست
که نه صبر داری نه یارای ایست
تو بگریزی از پیش یک شعله خام
من استاده‌ام تا بسوزم تمام
تو را آتش عشق اگر پر بسوخت
مرا بین که از پای تا سر بسوخت
………
به دریا مرو گفتمت زینهار
وگر می‌روی تن به طوفان سپار

[1] Արևելյան մի ավանդություն կա, թե մայիսի առաջին կաթիլը երբ որ ընկնում է ոստրերի մեջ, մարգարիտ է դառնում:

* * *

Աչքում, սուրմայի[1] տեղ, փո՜շ տեսնելը,
Կայծակից դեզիդ այրված տեսնելը,
Վզիդ ֆռանկի[2] լուծը տեսնելը,—
Լավ է՝ քան… դուտի… դուշմա՜ն տեսնելը:

در دیده به جای سرمه سوزن دیدن
برق آمده و آتش زده خرمن دیدن
در قید فرنگ غل به گردن دیدن
به زانکه به جای دوست، دشمن دیدن

* * *

Ով կարծում է, թե կարող է այս աշխարհում երկա՜ր մնալ,
Հետաձգել իր կյանքը կարճ և աշխարհում երկա՜ր մնալ,
Նրան ասա. «Մեխ մի՛ խփիր և վրան մի՛ սարքիր իգուր»,
Ասա. «Բեռդ զուր մի՛ քանդիր. Շուտով պիտի կապես–գնաս…»:

Թարգմ.՝ Գևորգ Էմին
(«Մարգարտաշար»)

آن کیست که دل نهاد و فارغ بنشست
پنداشت که مهلتی و تأخیری هست
گو میخ مزن که خیمه می‌باید کند
گو رخت منه که بار می‌باید بست

* * *

Հարյուր անգամ ասել եմ ամենքին,
Որ հայելի երբեք չտան քո ձեռքին,
Վախենում եմ տեսնես դեմքիդ լուսեղեն
Ու հայացքիդ չարժանացնես ոչ մեկին:

صد بار بگفتم به غلامان درت
تا آینه دیگر نگذارند برت
ترسم که ببینی رخ همچون قمرت
کس باز نیاید دگر اندر نظرت

* * *

Քո օրհասը թե որ եկավ, էլ երբեք ետ չի դառնա,
Մահը հասավ, էլ չի թողնի քեզ ու դատարկ չի գնա.
Այսօր, երբ դեռ շնչում ես, կաս, քոնն է պահը, վայելիր,
Որովհետև այս շենը միշտ շինականին չի մնա:

Թարգմ.՝ Սիլվա Կապուտիկյանի
(«Մարգարտաշար»)

بالای قضای رفته فرمانی نیست
چون درد اجل گرفت درمانی نیست
امروز که عهد تست نیکویی کن
کاین ده همه وقت از آن دهقانی نیست

* * *

Բոլոր մարդիկ անդամներն են մեկ մարմնի,
Արարչությամբ մի էակից ու միատարր,
Անդամներից մեկին թե ցավ պատահի,
Մյուսներին էլ չիք հանգիստ ու դադար:
Անտարբեր ես այլոց ցավին եթե դու,
Արժանի չես վեհ կոչումին դու մարդու:

Թարգմ.՝ Ազատ Մաթյանի
(2024 թ.)

بنی آدم اعضایِ یک پیکرند
که در آفرینش ز یک گوهرند
چو عضوی به درد آورد روزگار
دگر عضوها را نماند قرار
تو کز محنتِ دیگران بی‌غمی
نشاید که نامت نهند آدمی

[1] (ժող.) Ծարիր
[2] Եվրոպացիների աղավաղված անվանումը պարսկերեն: (Ն. Մ.)

* * *

Ո՞վ իմանար, որ դու այսչափ ուխտադրժ ու անհոգի ես,
Լավ է երբեք խոստում չտաս, քան խոսքիցդ հրաժարվես:
Այպանում են ընկերներս, որ քեզ տվի սիրտս հավետ,
Նախ քեզ պիտի հանդիմանել, որ անսահման բարեսիրտ ես:
Ինձ ասացիր՝ խելքս չտամ գեղեցկադեմ կանաց երբեք,
Ինչ իմանաս որտեղ եմ ես մտքի ծովում, դու որտեղ ես:
Կարծում էիր դեմքիդ խալն ու մազիդ փունջն է մարդկանց գերել,
Ո՛չ, սիրելիս, աստվածային առեղծված է, դու անմեղ ես:
Հանիր քողդ, հոգ մի արա, դու անտես ես օտարներին,
Փոքրածավալ հայելու մեջ չես երևա, դու շատ վեհ ես:
Ախոյանի սարսափից է, որ չեմ կարող դուռդ թակել,
Լոկ կարող եմ քո թաղը գալ ողորմություն առողի պես:
Կիանդուրժեմ կշտամբանքը, ատանդական դաժան կյանքը,
Բայց դիմանալ ես չեմ կարող, եթե մի օր դու ինձ լքես:
Ուխտել էի, հենց որ դու գաս, սրտիս ցավը պիտ քեզ պատմեմ,
Էլ ինչ ասեմ, ո՞րն է ցավը, երբ այլևս դու ինձ մոտ ես:

Թարգմ.՝ Գրիգոր Խ. Ատաբեկյանի
(2025 թ.)

من ندانستم از اول که تو بی مهر و وفایی
عهد نابستن از آن به که ببندی و نپایی
دوستان عیب کنندم که چرا دل به تو دادم
باید اول به تو گفتن که چنین خوب چرایی
ای که گفتی مرو اندر پی خوبان زمانه
ما کجاییم در این بحر تفکر تو کجایی
آن نه خالست و زنخدان و سر زلف پریشان
که دل اهل نظر برد که سرّیست خدایی
پرده بردار که بیگانه خود این روی نبیند
تو بزرگی و در آینهٔ کوچک ننمایی
حلقه بر در نتوانم زدن از دست رقیبان
این توانم که بیایم به محلت به گدایی
عشق و درویشی و انگشت نمایی و ملامت
همه سهلست تحمل نکنم بار جدایی
روز صحرا و سماعست و لب جوی و تماشا
در همه شهر دلی نیست که دیگر بربایی
گفته بودم چو بیایی غم دل با تو بگویم
چه بگویم که غم از دل برود چون تو بیایی
....

«ԳՈԼԵՍՏԱՆԻ» ՆԱԽԵՐԳԱՆՔԸ ԵՎ ՆԱԽԱԲԱՆԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՀԱՆՈՒՆ ՈՂՈՐՄԱԾ ԵՎ ԳԹԱՌԱՏ ԱՍՏԾՈ

Երախտագիտություն ամենակարող ու փառաբանյալ աստծուն, որին հնազանդվելը առիթ է նրան մոտենալուն և նրան փառաբանելով է, որ շնորհվում է մեզ հավելյալ բարիքներ: Ամեն մի ներշնչում բերում է երկարակեցություն, իսկ երբ արտաշնչում ենք, զվարթացնում է էությունը: Այսպես, ամեն մի շնչում կա երկու բարիք և ամեն մի բարիքի համար փառաբանելը պարտադիր է:

Ում ձեռները, որ կարող են ու ճարտար է ում լեզուն
Մեզ տրված մեծ շնորհի տեղ՝ փառաբանի Աստծուն:

Ով Դավթի որդիք, փառաբանեք ինձ իմ շնորհած բարիքների համար, քանզի, քիչ են փառաբանողները իմ ստրուկների մեջ...[1]

Անշուշտ լավ է, որ ծորտը իր մեղքի համար,
Դիմե աստծո գահին, խնդրե ներումն արդար,
Ապա թե ոչ արժանիքը աստվածային
Տեղ հասցնել չի կարող միտքը մարդկային:

Նրա անձրևն անսահման գթառատության հասել է բոլորին և ամենուրեք փռվել է նրա սփռոցը՝ լիառատ բարիքների: Իր ստրուկների ստոր մեղքերի համար նա չի պատռում նրանց պարկեշտության քողը և ուրացման հանցանքի համար չի կտրում նրանց օրվա պարենը:

Ով ողորմած, որ քո թաքուն գանձարանից աստվածային
Դու պարեն ես միշտ հայթայթում կրակապաշտին, քրիստոնյային,
Ինչպես կարող ես անտեսել բարեկամին քեզ նվիրված,
Քանի որ դու միտք ես բերում և թշնամուն քո մոլորված:

[1] Հատված Ղուրանից:

Լուսադեմի սյուքի սպասյակին[1] տերը պատվիրեց, որ տարածի զմրուխտյա գորգը, և գարնանային ամպերի դայակին հրամայեց՝ սնունդ տա հողի օրորոցում դեռատի բույսերին: Ծառերին Նովրուզի[2] կապա նվիրեց՝ ծածկելով նրանց կանաչ տերևներով, և դեռատի ճյուղերի գլխիկներին, գարնան զարթոնքի առթիվ, հագցրեց նորաբաց կոկոնների գլխարկներ: Շաքարեղեգը նրա զորությամբ ընտիր մեղրի վերածվեց և արմավի մի կորիզը, նրա բնության ուժով, սլացիկ արմավենի դարձավ:

Գործում են սահա երկինք ու արև, լուսնկա ու ամպ,
Որ հաց ձեռք բերես ու չուտես դու այն ապօրինությամբ:
Բոլորն ունկնդիր քո հրամանին, խոնարհվում են քեզ,
Արդար կլինի, որ դու էլ տիրոջ կամքին ենթարկվես:

Պատգամ կա տիեզերական իշխանից, և գոյությունն ստեղծողից և մահկանացուների ողորմածությունից, մարդկային ցեղի ընտրելագույնից՝ Մոհամմեդ Մոստաֆայից[3], (թող օրհնություն և խաղաղություն լինի նրան և իր գերդաստանին):

Բարեխոս, հնազանդեցնող, ողորմած մարգարե, պարգևող, մարմնեղ, ժպտերես, գեղեցիկ[4], նա մեծության հասավ իր կատարելությամբ, ցրեց խավարը իր դեմքի փայլով. գեղեցիկ են նրա բոլոր հատկությունները, աղոթեցեք նրա և իր գերդաստանի համար: Երբ մի մեղավոր, կյանքում մոլորված մի արարած զղջման իր ձեռքը ամենակալ և ամենակարող աստծո ատյանին երկարի, վերինն աստված ուշադրություն չի դարձնի նրան, նորից կդիմի, երկրորդ անգամ էլ երես կդարձնի. կրկին կկանչի նրան՝ լաց ու աղաղակով, սուրբ և արդարն աստված կասի. «Ով իմ հրեշտակներ, ես ամաչում եմ իմ ստրուկից, քանզի չկա նրա համար ինձանից զատ ուրիշ աստված. ուրեմն ներել եմ նրան և խնդիրը կատարել, որովհետև նրա աղերսանքից ու լացից ամաչում եմ»:

Նայիր, որքան ողորմած է, արդարադատ, հոգեթով,
Իր ստրուկն է հանցանք գործել, սակայն ինքն է ամոթով:

Նրա Քաաբեի[5] բարեպաշտները խոստովանում են իրենց բարեպաշտության անկատար լինելը և ասում են. «Մենք ստրուկին պարտադիր չափով քեզ չենք պաշ-

[1] Բնագրի մեջ՝ ֆարրաշ — ծառայող, սպասավոր:
[2] Նովրուզ — (նոր օր) իրանական արեգակնային տոմարի Նոր տարին մարտի 21-ին (մեր գարնանամուտը):
[3] Մոսթաֆա — ընտրված, ընտրյալ, Մոհամմեդի բազմաթիվ տիտղոսներից մեկը:
[4] Ըստ իսլամ կրոնի Մոհամմեդը հանդերձյալ կյանքում պիտի բարեխոսի հավատացյալների համար, աստծու առաջ: Ըստ նույն ավանդության Մոհամմեդն օժտված էր մարդկային բոլոր բարեմասնություններով, մեջքի վրա ուներ հատուկ կնիք, դեմքը փայլում էր հատուկ փայլով, որով և, նա հեռվից ճանաչվում էր մարդկանց հետ միասին եղած ժամանակ:
[5] Քաաբե — Մեքքայի սուրբ մզկիթը, որտեղ գտնվում է երկնքից ընկած սրբազան քարը: Աշխարհի բոլոր մուսուլմանների համար Քաաբեի այցելությունը պարտադիր է, որոնք նյութա-

տել»: Նրա գեղեցկությունն օրհներգողներն էլ շվարել են, թե՝ «Մենք չկարողացանք քեզ ըստ արժանվույն ճանաչել»:

Մեկն իր մասին բնորոշում հարցնի ինձնից անպայման,
Ի՞նչ ասեմ ես նրա մասին, որը չունի մի նշան,
Սիրողները զոհեր են լոկ սրտով սիրած սիրուհուն,
Անշնչացած էակներից կլսվի՞ ձայն ու ծպտուն:

Բարեպաշտներից մեկը, գլուխը խորհրդածության օձիքին կախած, խորասուզվել էր աստվածային հայտնությունների ծովում, երբ այդ վիճակից սթափվեց, բարեկամներից մեկն ասաց.

— Այն բուրաստանից, ուր գնացել էիր, մեզ ևս մի նվեր շնորհիր:

Նա ասաց.

— Մտադրություն ունեի, որ երբ վարդի թփին հասնեմ, լցնեմ քղանցքս և ընկերներիս նվեր բերեմ. հենց որ հասա, վարդի բուրմունքին այնպես հարբեցրեց ինձ, որ քղանցքը ձեռքիս բաց ընկավ:

Սովորիր սերը թիթեռից, ով վաղորդյան դու թռչուն,
Ինչպես է նա վառվում անձայն, կարոտով շունչը փչում
Արարիչին փնտրողները անտեղյակ են այդ բանից,
Իսկ ճանաչող եղել է թե՝ լուր չի հասել նրանից:

Ով դու, բարձր մտքից, չափից, զգացմունքից առավել
Ամեն ինչից, որ ասել են, կամ լսել ենք, կարդացել,
Մեր շրջանի վերջը հասավ, մեր կյանքն էլ է վերջանում,
Մենք դեռևս քո դրվագի նախաբանն ենք բաց անում:

ՆԵՐԲՈՂ՝ ԻՍԼԱՄԻ ԳՈՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐ ԱԲՈՒ-ԲԱՔՐ ՍԱԱԴ-ԻԲՆ ԶԱՆԳԻԻՆ, ԹՈՂ ՀԱՎԻՏՅԱՆ ԼԻՆԻ ՆՐԱ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սաադիի հասցեին ուղղված գեղեցիկ գովեստը, որ բոլորի շրթներին է, նրա խոսքի համբավը, որ տարածվել է երկրի վրա, նրա զրույցների քաղցրությունը, որ վայելում են շաքարի պես, նրա ստեղծագործությունները, որոնք ոսկեթերթերի տեղ են ընդունում, չի կարելի միայն նրա իմացականությանը վերագրել, այլև նրան, որ աշխարհի տեր, ժամանակների շրջանի բևեռ, Սողոմոնի երկրների փոխարքա, հավատացյալների նեցուկ, մեծն շահնշահ, փառավոր արքա, կրոնի և երկրի պաշտպան Աբու-Բաքր Իբն Սաադ Իբն Զանգին[1], բարձրյալն աստծո ստվերը երկրի վրա

կան որոշ ապահովություն ունեն: Ամեն տարի որոշված օրերին այնտեղ են հավաքվում ամեն կողմից ուխտավորներ և արժանանում են «հաջի» պատվավոր կոչման:

[1] Մուզաֆարեդդին Աբու-Բաքր Սաադ Իբն Զանգի (1226-1258) — Սաադիի ժամանակակից աթաբեկյան թագավորներից էր. նրա իմաստուն քաղաքականության շնորհիվ Իրանի Փարս երկրամասը ազատվեց մոնղոլական ավերածություններից: Սաադին հաճախ գովասանական տողեր է նվիրում նրան թե «Գոլեստան»-ի և թե «Բուստան»-ի մեջ, հատկապես նշելով այն փաստը, որ 13-րդ դարի մոնղոլական արշավանքից միայն Փարսն էր մնացել ազատ իր Շիրազ քաղաքով, ուր և ամեն կողմերից հավաքվեցին երկրի անվանի գիտուններ, բանաստեղծներ և պետական մարդիկ:

(տեր, գոհ եղիր նրանից և գոհացրու նրան) աջակցող աչքով է նայել Սաադիին, լիակատար հավանություն է հաճել և բարի կամեցողություն ցույց տվել. այդ պատճառով էլ ամբողջ ժողովուրդը, գիտունից մինչև ռամիկ, սիրով է հակվել դեպի նա, որովհետև «ժողովուրդը թագավորի կրոնակիցն է[1]»:

Այն օրից, երբ քո հայացքը ինձ, խղճուկիս նշմարեց,
Արեգակից էլ առավել իմ շնորհքը փայլ տվեց.
Թեպետ պակաս, թերի կողմեր քո ծառայի մեջ շատ կան,
Այն թերին, որ հավնի արքան՝ համազոր է գիտության:
Բաղանիքում մի անգամ ես մի կտոր գիլ[2] բուրալից
Ստացա այն բաղանիքի սպասավոր ծառայից.
Ու հարց տվի. «Մուշկ համիա՞ր ես, որ բուրում ես դու այսպես
Հարբել եմ ես պխորժելի քո նուրբ հոտից պարզապես»:
Պատասխանեց, թե «Անարժեք հող եմ միայն, կտոր ցեխ,
Բայց եղել եմ մի ժամանակ վարդենու հետ միատեղ.
Հարևանիս արժանիքն է ազդել վրաս շատ անգամ,
Թե չէ հենց նույն սովորական հողն եմ, ինչ որ այժմ էլ կամ»:

Տեր, երջանկություն շնորհիր մուսուլմանին՝ նրա կյանքը երկարելով, կրկնապատկիր նրա կատարած բարի գործերի վարձքը, բարձրացրու նրա բարեկամների ու սիրելիների դիրքը, կործանիր նրա թշնամիներին և վատ ցանկացողներին, պաշտպանիր նրա արական և իգական յուրայինների կյանքը, ղորանի այաթները կարդալու համար, խաղաղություն տուր նրա պետությանը և պաշտպանիր նրա զավակներին:

Նա բախտ բերեց երկրի համար, թող լինի նա բախտավոր
Աստծուկամքով միշտ հաղթական դրոշ բերի փառավոր,
Այդպես կաճի արմավենին, որի արմատն է արքան,
Ազնիվ բույսին լավ հողի հետ և սերմ է պետք պատվական:

Ով ամենաբարձրյալ ու սուրբ աստված, ապահով պահիր Շիրազի անաղարտ հողը, արդարամիտ դատավորների և հնարամիտ գիտունների սիրույն, մինչև դատաստանի վերջին օրը:

[1] Հատված Ղորանից:

[2] Գիլ — Իրանի բաղնիքներում գործածվող սապնահող. Շիրազի գիլը համարվում է լավագույնը, հաճելի հոտ ունի, որը վերագրում են Շիրազի վարդի առատությանը:

Բախտի հարվածից հոգս ու վախ չունի երկիրը Փարսի[1],
Քանզի քեզ նման աստծո ստվեր ունի խելացի.
Աշխարհում չկա այժմ ավելի ապահով մի վայր,
Քան թե արքայիդ պալատի դռան շեմքը փրկարար:
Դու ես խեղճերի ու տնանկների կյանքի պահապան,
Մեզնից գոհություն, իսկ արարիչից քեզ վարձ անսահման:
Արարիչ աստված, պահիր չար հողմից սուրբ հողը Փարսի,
Այնքան ժամանակ, քանի որ կա հող, և ջուր կհոսի:

ՆԱԽԱԲԱՆ

Մի գիշեր անցած իմ օրերն էի վերապրում, ափսոսում էի կորցրածս կյանքի համար, սրտիս տնակի քարն էի հղկում արցունքի աղամանդով և իմ վիճակին հարմար այս բեյթերն էի ասում.

Ամեն վայրկյան մի շունչ անդարձ պակասում է մեր կյանքից,
Երբ նկատում, տեսնում ես, որ շատ չմնաց իր հիմքից,
Դու որ հիսուն տարիդ անցավ դեռ քնած ես անտեղյակ,
Գուցե վերջին այս հինգ օրում բան ձեռք բերես շատ արագ,
Ամոթ նրան, ով գնացել չի թողել գործ արժանի,
Բեռ չի կապել, բայց մեկնելու կանչը հնչեց դամբանի.
Լուսաբացի քաղցր քունը երազների թովքի տակ,
Ետ կպահի ճանապարհից ուղևորին հեռևակ:
Նոր շինության հիմքը դրեց աշխարհ եկող ամեն մարդ,
Սակայն գնաց և ուրիշին հանձնեց տունը կիսավարտ.
Այդ ուրիշն էլ տարվեց իզուր երազով ու տենչով սին,
Այսպես, ոչ ոք հոգ չտարավ կառուցվելիք տան մասին:
Փոփոխամիտ ու անկայուն ընկերոջ հետ մի կապվիր,
Մտերմության բնավ չարժե այս աշխարհը դավադիր.
Եվ քանի որ թե լավ, թե վատ հասնելու են վախճանի,
Երջանիկ է, ով լավության գնդակն իր հետ կտանի.
Հաճույքների բերքը առատ ինքդ շիրիմ ուղարկիր,
Քեզնից հետո մարդ չի բերի, դու մի եղիր հուսադիր,
Կյանքը ձյուն է հուլիսի բորբ արեգակի աչքի տակ,
Շատ քիչ մնաց, սակայն մարդը մնում է դեռ անգիտակ.
Ով դու, դատարկ ձեռքով շուկա գնումների շտապող
Վախենում եմ թաշկինակդ լի բերելու այն կարող.
Ով իր ցանքը դեռ չհասած կուտի անհոգ օրնիբուն,
Հունձի ժամին պիտի քաղի միայն դատարկ չոր ցողուն:

[1] Փարս կամ Ֆարս — Իրանի հարավային երկրամասը՝ Շիրազ մայրաքաղաքով:

Այս մտքերին անդրադառնալուց հետո բարվոք համարեցի մենակեցության խցի մեջ մեկուսանալ, հավաքել խոհեմությունների քղանցքը, ջնջել անիմաստ զրույցները և բնավ անմիտ չխոսել:

Լեզուն կտրած, համրն ու խուլը՝ նստած մի անկյունում
Լավ է, քան նա, որի լեզուն ոչ մի վայրկյան կանգ չի առնում:

Այդ ժամանակ իմ բարեկամներից մեկը, որի հետ քեջավեի[1] ընկեր էի եղել ու նրա հետ ապրել մի սենյակում, ըստ իր վաղեմի սովորության՝ դռնից ներս մտավ. որքան սրախոսեց, ես պատասխան չտվի, գլուխս պաշտամունքի ծնկից չբարձրացրի:

Նայեց ինձ վշտացած ու ասաց.

Այժմ քանի հնար ունես զրուցելու դու իմաստուն
Խոսիր, եղբայր իմ սիրելի, գովիր բարիք ու լավություն,
Վաղվա օրը մահվան անեղ մունետիկին երբ ընդունես,
Քեզնից անկախ ու ստիպված՝ լեզվիդ կապանք պիտի դնես:

Իմ մտերիմներից մեկը գործի որպիսության մասին տեղեկացրեց նրան, թե՝ «Այսպիսի մի որոշում է կայացրել, իր կյանքի մնացորդը պաշտամունքով պիտի անցկացնի և լռակեցություն պահպանի. դու էլ, եթե կարող ես, գլխիդ ճարը տես և նրանից հեռանալու ճամփան բռնիր»:

Նա ասաց.

— Երդվում եմ սիրեցյալ աստծով և մեր վաղեմի բարեկամությամբ, որ շունչ իսկ չեմ քաշի և քայլ չեմ փոխի, մինչև որ սովորականի պես խոսի. սխալ բան է բարեկամներին վշտացնելը, մանավանդ որ երդման մեղքից[2] ազատվելը հեշտ է: Առողջ դատողության հակառակ է և խելոք մարդկանց հասկացողության դեմ, որ Ալիի Զուլֆաղարը[3] պատյանի մեջ մնա և Սաադիի լեզուն բերանում՝ անխոս:

Ով իմաստուն, ի՞նչ է մարդու ճարտար լեզուն բերանում.
Նա մեծ մարդու գանձարանի բանալին է իր տեղում:
Ո՞վ գիտե, թե ով կա ներսում, երբ տան դուռը լինի փակ,
Գոհարների վաճառակա՞ն, թե՞ մի աղքատ փերեզակ:
Իմաստունի լուռ մնալը նշան է լավ կրթության,
Բայց պետք եղած դեպքում պիտի խոսի ազատ, խոհական,

[1] Քեջավե — Փոքրիկ խուցի ձևով փայտից շինված թեթև պատգարակ, որոնցից մի զույգ կապում էին գրաստի մեջքին և ամեն մեկի մեջ մի ճամփորդ էր նստում:
[2] Երդմնազանց լինողը պիտի հատուկ տուրք վճարի. այդ տուրքը կամ տուգանքը կոչվում է քաֆարե: Ով ստիպված է իր տված երդումը կոտրել, նա պիտի տասը աղքատ կերակրի, կամ երեք օր ծոմ պահի և այլն:
[3] Ալի — Մոհամմեդի աղջկա՝ Ֆաթմեի ամուսինը, Մոհամմեդից հետո չորրորդ հաջորդը, մահմեդական շիա աղանդի հիմնադիրը: Զուլֆաղար կոչվում էր նրա սուրը:

Ջուր մի խմիր, երբ զգում ես լռությունն է գերադաս,
Եվ լռություն մի պահպանիր, երբ խոսք պետք է ունենաս:

Վերջապես նրա հետ լռելու ուժ չունեցա, անգթություն համարեցի երես թեքել նրա զրույցներից, որովհետև գաղափարակից ընկեր էր և լավ բարեկամ:

Կռվել ուզես, կռվիր այնպես մի մարդու հետ անվնաս,
Որ նրանից կամ ազատվել և կամ փախչել խմանաս:

Ստիպված սկսեցինք զրուցել և զրոսնելով դուրս ելանք: Գարնանային եղանակ էր. ցրտի սաստկությունը մեղմացել, և վարդի փարթամ շրջանն էր հասել:

Խիտ ծառերի կանաչագույն շապիկները բուսական
Նման էին բարեպաշտի զգեստներին տոնական:

Գարնանային օրդիբեհեշտ[1] ամսի մեկն էր Ջալալի[2],
Սոխակները այգիներում երգում էին դուրալի,
Կարմիր վարդին պատել էին մարգարիտե ցողիկներ,
Որպես ցասկոտ գեղեցկուհու այտին քրտնած կաթիլներ:

Գիշերեցինք մի բարեկամի այգում. գեղեցիկ վայր էր, թավ ծառերը միահյուսվել էին իրար, գետինը կարծես գույնզգույն հուլունքներով էր ծածկված, և Բազմաստեղքը վզնոցի պես կախվել էր որթատունկերից:

Արագավազ ջրերով մի այգի էր այդ գեղեցիկ,
Խիտ ծառերից դյութում էին թռչունները երգեցիկ:
Բացվել էին խաս ծաղիկներ ու կանաչներ հուրհրան,
Լիքն էր խորքը այդ պարտեզի բարիքներով բնության:
Մեղմ զեփյուռը ծառաստանի շվաքի մեջ գույնզգույն
Թավշանման գորգ էր փռել կախարդական պուրակում:

Առավոտյան վաղ, երբ վերադառնալու ցանկությունը հաղթեց մնալու դիտավորությանը, տեսա բարեկամս, քղանցքը լիքը վարդ, շահասպրամ, հակինթ լցրած, ուզում էր հետը քաղաք տանել: Ես ասացի.

[1] Օրդիբեհեշտ — Իրանական արեգակնային տոմարի երկրորդ ամիսը, ապրիլի 21–ից մայիսի 22–ը:

[2] Ջալալի կամ Շամսի կոչվում է իրանական արեգակնային տոմարը, որ կազմված է 11–րդ դարում Իսֆահանի աստղադիտարանում մի խումբ գիտնականների նախաձեռնությամբ, հռչակավոր գիտնական և բանաստեղծ Օմար Խայամի գլխավորությամբ: Ջալալի կոչվում է այդ տոմարը, ժամանակի Ջալալեդդին Մալիք–շահ սելջուկ թագավորին նվիրված լինելու համար:

— Պարտեզի ծաղիկները, ինչպես գիտես, մնայուն չեն, ծաղիկների թարմության տևողությունն էլ՝ անվստահելի, և իմաստուններն ասել են. «Այն, ինչ տևական չէ, չարժե սիրտ կապել նրան»:

— Ո՞րն է հապա ելքը,— հարցրեց նա:

Ես ասացի.

— Ընթերցողների բավականության համար կարող եմ «Գոլեստան» գիրքը կազմել: Աշնանային քամին նրա թերթիկները կողոպտելու ձեռք չի ունենա և ժամանակը նրա գարնանային զվարճությունը չի դալկացնի:

Ինչի՞դ են պետք պոկված վարդերն այս զառամ.
Վերցրու մի թերթ «Գոլեստան»–ից անթառամ.
Հինգ կամ վեց օր կապրի վարդը հազիվհազ,
«Գոլեստան»–ը մինչդեռ կապրի հանապազ:

Այս խոսքերն ասելուն պես՝ քղանցքի վարդերը թափեց, և իմ քղանցքը բռնելով՝ ասաց.

— Վեհանձն մարդը երբ խոստանա՝ կկատարի:

Նույն օրը հաջողվեց երկու գլուխ գրել՝ օգտակար կենցաղի և պիտանի զրույցների մասին, այնպիսի բովանդակությամբ, որ ճարտարախոսներին պիտանի լինի և գրագետների պաշարն ավելացնի:

Մի խոսքով, դեռևս պարտեզում վարդը լրիվ չէր դալկացել, երբ «Գոլեստան» գիրքն ավարտվեց: Սակայն վերջնապես ավարտված կլինի միայն այն դեպքում, երբ այն հավանություն գտնի աշխարհի ապավեն թագավորի պալատում և աստծո ստվեր, տիրոջ շնորհի լույս, ժամանակի գանձ, ապահովության հույս, երկնքի օժանդակությունը վայելող, թշնամիների վրա հաղթական, պետության բազուկ, ժողովրդի լուսափայլ ճրագ, մարդկային գեղեցկության տիպար, մեծ արքա, թագավորների թագավոր, մարդկանց գլխի տեր, արաբ և օտար թագավորների պետ, ծովի ու ցամաքի տեր, Սողոմոնի երկրների ժառանգ, կրոնի և աշխարհի կառավարող Աբու–Բաքր Իբն Սաադ Իբն–Զանգին (թող աստված տևական անի նրա բախտը, ավելացնի նրա փառքը և նրա վերջը դեպի բարին տանի) տիրոջ շնորհի մի ակնարկով հաճենա կարդալ:

Հավանելու շնորհ արվի, ընդունվի տեր արքայից,
Եդեմ չի մնա սա չինական գեղանկար գրքերից.
Հույս ունեմ, որ չեն դժգոհի թթու դեմքով սրա դեմ,
Ձանձրանալու վայր չէ բնավ «Գոլեստան»–ը այս եդեմ,
Մանավանդ, որ նվիրված է առաջաբանն այս գրքի
Հանուն Սաադ Աբու–Բաքր Սաադ՝ որդուն մեծ Զանգի:

ՁՈՆ ՄԵԾ ԷՄԻՐ ՖԱԽՐ ԷԴ–ԴԻՆ ԱԲՈՒ–ԲԱՔՐ ԻԲՆ ԱԲՈՒ ՆԱՍԵՐԻՆ

Այլևս իմ մտքի սիրուհին իր տգեղությունից գլուխ չի բարձրացնի և հուսահատության աչքը ամոթահարության ոտքից չի վերցնի, նա չի զարդարվի գեղանինների շրջանում, եթե ոչ միայն այն դեպքում, երբ «Գոլեստան»–ն ընդունելության զարդարանքին արժանանա մեծ էմիրի, որ գիտուն է ու արդարադատ, երկնքից օժանդակված, հաղթական, արքայական գահի նեցուկ, պետության կարգապահության ռահվիրա, խեղճերի և օտարականների ապավեն, մեծ կրոնապետների բարեկրթության օրինակ, ժուժկալների պաշտպան, փարս ժողովրդի պարծանք, պետության աջ բազուկ, իմաստունների թագավոր, կրոնի և պետության պաշտպան, մուսուլմանների և իսլամի ապավեն, սուլթաններին և արքաներին առաջինը ներկայացնող Աբու–Բաքր Իբն–Աբու Նասերին (թող աստված երկարացնի նրա կյանքը, մեծացնի նրա երախտիքը, բաց անի նրա կուրծքը[1] և ավելացնի նրա վարձատրությունը), քանի որ նա հավանված է աշխարհի մեծերի կողմից և լավագույն հատկությունների մարմնացումն է։

Ով ապրում է նրա շուքի հովանու տակ բարեկամ,
Նրա գործած մեղքը վարձք է, իսկ թշնամին՝ բարեկամ։

Յուրաքանչյուրը՝ սովորական մարդկանցից, ինչպես նաև պալատական պաշտոնյաներից, պարտականություններ ունի, որոնցից թերանալը պատճառ է դառնում խիստ պատիժների։ Մեզ՝ դերվիշներիս համար պարտականություն է մեծերի բարեգործությունները փառաբանել, գեղեցիկ հիշատակություններ թողնել, աղոթել նրանց համար և այդպիսով մեր ծառայությունը տեղ հասցնել։ Իհարկե ավելի լավ է այդ անել ոչ նրանց ներկայության, այլ բացակայության ժամանակ, որովհետև իրենց դիմաց արված գովքը համազոր կլինի շողոքորթության։

Մեծ հրձվանքից երկիրը իր կոր կամարը վեր ուղղեց,
Երբ ժամանակը աշխարհին քեզ պես զավակ պարգևեց,
Աստվածային մի բարիք է, երբ որ տերը՝ ողորմած
Կառավարող է ուղարկում ժողովրդին իր ստեղծած։
Այն մարդը, որ վաստակել է բարի անուն իր կյանքում,
Այդ անունը մնում է միշտ մահից հետո աշխարհքում։
Միևնույն է գովեն թե ոչ իմաստուններն արքունի,
Որովհետև սիրուն դեմքը շպարողի պետք չունի։

[1] Ղորանից մի հատված, ուր աստված ասում է Մոհամմեդին. «Մի՞թե մենք բաց չարինք քո կուրծքը...»։

ՋՂՋՈՒՄ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ[1]

Ծառայելուս թերությունը և իմ մեկուսացումը, որ թույլ եմ տվել արքունիքի վերաբերմամբ, նմանում է նրան, որ հնդիկ գիտնականներից մի քանիսը Բոզորջեմեհրի[2] առաքինությունների մասին խոսելիս ուրիշ պակասություն չէին գտել նրա մեջ, քան այն, որ սակավախոս էր, այսինքն՝ խոսում էր շատ ընդմիջումներով և ունկնդիրը ստիպված էր լինում համբերությամբ լսել նրա մտքերը։

Բոզորջեմեհրը այդ լսելով՝ ասել էր.

— Մտածել, թե ինչ ասեմ՝ ավելի լավ է, քան զղջալ, թե ինչու ասացի։

Ծեր խելոքը, որ իմաստուն, խորամիտ է ու հասուն,
Լավ խորհելուց հետո միայն պիտի բանա իր լեզուն։
Մի խառնվիր զրույցների ու քեզ զսպի հանապազ
Ու լավ խոսիր, ուշ էլ լինի, այդ բանից քեզ ի՞նչ վնաս։
Անելիքդ լավ մտածիր, նոր քո լեզուն գործի դիր,
Նախքան ասեն «բավական է», դու քո խոսքը ավարտիր,
Խոսքով է լոկ անասունից մարդը բարձր ու գերազանց,
Անասունը լավ է քեզնից, խոսում ես երբ զուր, անսանձ։

Այսպես ուրեմն, թագավորի ներկայությանը, որ իմաստունների կարծիքով խելոքների հավաքատեղին է և գիտունների ժողովման կենտրոնը, եթե խոսք ասելու համարձակությունն անեմ, ցածրություն արած կլինեմ և սիրելի պալատի շեմքին փոքրիկ դրամագլուխ բերած կլինեմ։

Սև հուլունքը գոհարավաճառների շուկայում մի հատիկ գարու արժեք չունի, և բարձր մինարեթը Ալվանդ լեռան ստորոտում ցածր կերևա։

Ով իր վիզը բարձր պահի գոռոզությամբ սնամեջ,
Պարանոցը պիտի կոտրի վեճերի ու կռվի մեջ.
Թեպետ ընկել է Սաադին, բայց ազատ է իր տեղում,
Ընկածի հետ, օրենք է դա, ոչ մի ոսոխ չի կռվում։
Նախ մտածել, խորհել է պետք, ապա ասել խոսք վայել,
Տուն շինելիս նախ հիմք է պետք, ապա միայն պատ շարել։

Այգեգործ եմ, բայց պարտեզում չեմ բանում,
Եվ գեղեցիկ՝ բայց չեմ ապրում Քանանում[3]։

[1] Այս վերնագիրը պիտի հասկանալ այսպես՝ «Պալատ չհաճախելուս և այնտեղից խուսափելուս պատճառը»։
[2] Բոզորջեմեհրի — Անուշիրավան Արդարադատի անվանի գիտուն վեզիրը, որի մասին Ֆիրդուսին նույնպես հիշում է իր «Շահ–նամե»–ի մեջ։
[3] Քանան — Հրեաստանի հին քաղաքներից մեկը, Հովսեփ Գեղեցիկի ծննդավայրը։ Այստեղ ակնարկում է Հովսեփին։

Իմաստուն Լողմանին[1] հարցրին.

— Իմաստությունը ումի՞ց սովորեցիր:

Նա ասաց.

— Կույրերից. նրանք մինչև գետինը չեն շոշափում՝ ոտք չեն դնում:

— Դուրս գալդ ներս մտնելուցդ առաջ գցիր[2]:

Նախ առնական ուժդ փորձիր,
Հետո միայն ամուսնացիր:

Աքլորն ինչքան քաջ ու ճարպիկ էլ լինի,
Բազեի սուր ճանկերի դեմ ի՞նչ կանի.
Մուկ բռնելիս կատուն առյուծ է արի,
Սակայն մի մուկ՝ երբ վագրի հետ պայքարի:

Այսպես, հույս դնելով մեծերի բնածին վեհանձնության վրա, որոնք փոքր մարդկանց պակասությունների նկատմամբ աչք կփակեն և նրանց սխալները չեն հայտարարի, համառոտ կերպով մի քանի խոսք հազվագյուտ հեքիաթներից ու առակներից, բանաստեղծություններից ու գործերից անցած թագավորների (թող աստված ողորմի նրանց) կազմեցինք այս գիրքը, մեր թանկագին կյանքի մի մասը վատնելով նրա վրա:

Կմնա միշտ այս իմ գիրքը շատ տարիներ դեռ երկար,
Թեկուզ մարմինս անկենդան լինի հողին հավասար,
Նպատակս էր թողնել բարի մի հիշատակ աշխարհում,
Քանի որ մեր գոյությունը հար հավիտյան չի տևում.
Բավական է մեկն ունենա մեզ հիշելու բարություն,
Ու աղոթքով դերվիշներիս մաղթի հոգու փրկություն:

Գլուխ առաջին՝ Թագավորների բարքերից
„ – „ երկրորդ՝ Դերվիշների բարքերից
„ – „ երրորդ՝ Խնայողության առավելության մասին
„ – „ չորրորդ՝ Լռության օգտակարության մասին
„ – „ հինգերորդ՝ Սիրո և երիտասարդության մասին
„ – „ վեցերորդ՝ Թուլության և ծերության մասին
„ – „ յոթերորդ՝ Դաստիարակության ազդեցության մասին
„ – „ ութերորդ՝ Պիտանի զրույցների մասին

[1] Լողման — առասպելական գիտնական և բժիշկ, նրա մասին մի քանի անգամ հիշատակված է Ղորանի մեջ: Արևելքի ժողովուրդների մեջ տարածված ու հարգված անուն ունի, որպես մարդկանցից ամենախելոքը:

[2] Արաբական առած է, որ նշանակում է՝ ներս մտնելուց առաջ մտածիր, թե ինչպես պիտի դուրս գաս:

Կյանքիս ուրախ ու երջանիկ այս օրերին վսեմ ու մեծ,
Հեջրի տոմար թվականն էր վեց հարյուր ու հիսունը վեց[1],
Նպատակս էր խորհուրդներ տալ քեզ՝ խրատներս կարդալով,
Մենք գնում ենք, ով ընթերցող, մեծ արարչին քեզ հանձնելով:

Թարգմ.՝ Ավագ Մելիք Վարդանյան[2]

[1] Հեջրիի 656 թվականը մեր տոմարով՝ մոտ 1258 թ.: Այդ հաշվով 1958 թ. լրացավ «Գոլեստան»–ի գրվելու 700 տարին:

[2] Մոսլեհ Էդին Սաադի, «Գոլեստան», «Հայպետհրատ», Երևան, 1958 թ., թարգմ.՝ Ա. Մելիք Վարդանյան:

فکیف در نظر اعیان حضرت خداوندی عزّ نصرُه؟ که مجمع اهل دل است و مرکز علمای متبحر اگر در سیاقت سخن دلیری کنم شوخی کرده باشم و بضاعت مزجاۀ به حضرت عزیز آورده و شبه در جوهریان جوی نیارد و چراغ پیش آفتاب پرتوی ندارد و مناره بلند بر دامن کوه الوند پست نماید.

هر که گردن به دعوی افرازد — خویشتن را به گردن اندازد
سعدی افتاده‌ایست آزاد ه — کس نیاید به جنگ افتاده
اول اندیشه وآنگهی گفتار — پای‌بست آمده‌ست و پس دیوار

نخل‌بندی دانم ولی نه در بستان و شاهدی فروشم ولیکن نه در کنعان.
لقمان را گفتند: حکمت از که آموختی؟ گفت: از نابینایان که تا جای نبینند پای ننهند.
قَدِّمِ الْخروجَ قبلَ الْوُلوجِ، مردیت بیازمای وآنگه زن کن.

گرچه شاطر بود خروس به جنگ — چه زند پیش باز رویین چنگ
گربه شیر است در گرفتن موش — لیک موش است در مصاف پلنگ

اما به اعتمادِ سِعَتِ اخلاق بزرگان که چشم از عوایب زیردستان بپوشند و در افشای جرائم کِهتران نکوشند، کلمه‌ای چند به طریق اختصار از نوادر و امثال و شعر و حکایات و سِیَر ملوکِ ماضی رَحِمَهُمُ الله در این کتاب درج کردیم و برخی از عمر گرانمایه بر او خرج، موجب تصنیف کتاب این بود و بِالله التَّوفیق.

بمانَد سال‌ها این نظم و ترتیب — ز ما هر ذرّه خاک افتاده جایی
غرض نقشیست کز ما باز ماند — که هستی را نمی‌بینم بقایی
مگر صاحب‌دلی روزی به رحمت — کند در کار درویشان دعایی

اِمعان نظر در ترتیب کتاب و تهذیب ابواب، ایجازِ سخن، مصلحت دید تا بر این روضهٔ غَنّا و حدیقهٔ غُلبا چون بهشت، هشت باب اتفاق افتاد از آن مختصر آمد تا به ملال نیانجامد.

باب اوّل: در سیرت پادشاهان — باب دوم: در اخلاق درویشان
باب سوم: در فضیلت قناعت — باب چهارم: در فواید خاموشی
باب پنجم: در عشق و جوانی — باب ششم: در ضعف و پیری
باب هفتم: در تأثیر تربیت — باب هشتم: در آداب صحبت

در این مدت که ما را وقت خوش بود — ز هجرت ششصد و پنجاه و شش بود
مراد ما نصیحت بود و گفتیم — حوالت با خدا کردیم و رفتیم

* * *

خواب نوشین بامداد رَحیل   باز دارد پیاده را ز سبیل
هر که آمد عمارتی نو ساخت   رفت و منزل به دیگری پرداخت
وآن دگر پخت همچنین هوسی   وین عمارت به سر نبرد کسی
یار ناپایدار دوست مدار   دوستی را نشاید این غدّار
نیک و بد چون همی بباید مُرد   خنک آن کس که گوی نیکی برد
برگ عیشی به گور خویش فرست   کس نیارد ز پس ز پیش فرست
عمر برف است و آفتابِ تَموز   اندکی ماند و خواجه غِرّه هنوز
ای تهی‌دست، رفته در بازار   ترسمت پُر نیاوری دستار
هر که مزروع خود بخورد به خوید   وقت خرمنْش خوشه باید چید

بعد از تأمل این معنی، مصلحت چنان دیدم که در نشیمن عُزلت نشینم و دامن صحبت، فراهم چینم و دفتر از گفته‌های پریشان بشویم و مِن‌بعد پریشان نگویم.

زبان بریده به کنجی نشسته صُمٌ بُکم   به از کسی که نباشد زبانش اندر حُکم

تا یکی از دوستان که در کجاوه انیس من بود و در حجره جَلیس، به رسم قدیم از در درآمد. چندان که نشاط مُلاعبت کرد و بساط مُداعبت گسترد، جوابش نگفتم و سر از زانوی تعبّد بر نگرفتم. رنجیده نگه کرد و گفت:

کنونت که امکان گفتار هست   بگو ای برادر به لطف و خوشی
که فردا چو پیکِ اجل در رسید   به حکم ضرورت زبان در کَشی

کسی از متعلقان مَنَش بر حَسَبِ واقعه مطلع گردانید که فلان عزم کرده است و نیت جزم، که بقیت عمر معتکف نشیند و خاموشی گزیند، تو نیز اگر توانی سر خویش گیر و راه مُجانبت پیش. گفتا: به عزت عظیم و صحبت قدیم که دم بر نیارم و قدم بر ندارم مگر آن گه که سخن گفته شود به عادتِ مألوف و طریق معروف که آزردن دوستان جهل است و کفّارتِ یَمین، سهل و خلاف راه صواب است و نقص رای اُولوالالباب؛ ذوالفقار علی در نیام و زبان سعدی در کام.

زبان در دهان ای خردمند چیست؟   کلید در گنج صاحب هنر
چو در بسته باشد چه داند کسی   که جوهر فروش است یا پیله ور؟
اگرچه پیش خردمند خامُشی ادب است   به وقت مصلحت آن به که در سخن کوشی
دو چیز طیرهٔ عقل است؛ دم فرو بستن   به وقت گفتن و گفتن به وقت خاموشی

فی الجمله زبان از مکالمهٔ او در کشیدن قوّت نداشتم و روی از محاورهٔ او گردانیدن مروّت ندانستم که یار موافق بود و ارادت صادق.

چو جنگ آوری با کسی برستیز   که از وی گزیرت بود یا گریز

به حکم ضرورت سخن گفتم و تفرج‌کنان بیرون رفتیم در فصل ربیع که صولت بَرْد آرمیده بود و ایام دولت وَرْد رسیده

پیراهنِ برگ، بر درختان   چون جامهٔ عیدِ نیک‌بختان
اول اردیبهشت ماهِ جلالی   بلبل گوینده بر منابر قُضبان
بر گل سرخ از نم اوفتاده لآلی   همچو عرق بر عِذار شاهد غَضبان

شب را به بوستان با یکی از دوستان اتفاق مَبیت افتاد، موضعی خوش و خرّم و درختانِ درهم. گفتی که خردهٔ مینا بر خاکش ریخته و عقد ثریا از تارکش آویخته.

روضةٌ ماءُ نهرِها سَلسال   دَوحةٌ سَجعُ طیرِها موزون
آن پر از لاله‌های رنگارنگ   وین پر از میوه‌های گوناگون
باد در سایهٔ درختانش   گسترانیده فرشِ بوقلمون

بامدادان که خاطر باز آمدن بر رای نشستن غالب آمد دیدمش دامنی گل و ریحان و سنبل و ضَیمران فراهم آورده و رغبت شهر کرده. گفتم: گل بستان را چنان که دانی بقایی و عهد گلستان را وفایی نباشد و حکما گفته‌اند هر چه نپاید دلبستگی را نشاید. گفتا: طریق چیست؟ گفتم: برای نُزهت ناظران و فُسحت حاضران، کتاب گلستان توانم تصنیف کردن که باد خزان را بر ورق او دست تَطاوُل نباشد و گردش زمان عَیش ربیعش را به طَیش خَریف مبدل نکند.

به چه کار آیدت ز گل طَبَقی؟   از گلستان من ببر ورقی
گل همین پنج روز و شش باشد   وین گلستان همیشه خوش باشد

حالی که من این بگفتم دامنِ گل بریخت و در دامنم آویخت که اَلکریمُ اِذا وَعَدَ وَفا. فصلی در همان روز اتفاق بَیاض افتاد در حُسن معاشرت و آداب محاورت در لباسی که متکلمان را به کار آید و مُترسّلان را بلاغت بیفزاید. فی الجمله هنوز از گل بستان بقیّتی موجود بود که کتاب گلستان تمام شد.

و تمام آنگه شود به حقیقت که پسندیده آید در بارگاه شاه جهان‌پناه، سایهٔ کردگار و پرتو لطف پروردگار ذُخر زمان و کَهف امان، اَلمؤیَّدُ مِنَ السَّماء المنصورُ عَلَی الاَعْداء، عَضُدُ الدَّولةِ القاهرة، سِراجُ المِلّة الباهرة، جَمالُ الاَنام، مَفخرُ الإسلام، سَعدُ بْنُ الاتابک الاَعظم، شاهنشاه المعظم، مَولیٰ ملوک العرب و العجم، سلطانُ البَرِّ وَ البَحر، وارثُ مُلک سلیمان، مظفرالدین اَبی بکرِ بن سعدِ بن زنگی اَدامَ اللهُ اِقبالَهُما و ضاعَفَ جَلالَهُما وَ جَعَلَ اِلیٰ کُلِّ خیرٍ مَآلَهُما و به کرشمهٔ لطف خداوندی مطالعه فرماید.

گر التفات خداوندیش بیاراید   نگارخانهٔ چینی و نقش اَرتَنگیست
امید هست که روی ملال در نکشد   از این سخن که گلستان نه جای دلتنگیست
علی الخصوص که دیباچهٔ همایونش   به نام سعدِ ابوبکر سعدِ بنِ زنگیست

دیگر عروس فکر من از بی جمالی سر بر نیارد و دیدهٔ یأس از پشت پای خجالت بر ندارد و در زمرهٔ صاحب‌دلان مُتَجَلّی نشود مگر آن گه که مُتَحلّی گردد به زیور قبول امیر کبیر، عالِم عادل، مُؤیَّد مظفر منصور، ظهیر سریر سلطنت و مُشیر تدبیر مملکت، کَهفُ الفقرا، مَلاذُ الغُرَبا، مُربّی الفُضَلا، مُحبُّ الاَتقیا، افتخار آل فارس، یَمینُ المُلک، مَلِکُ الخَواص، فَخرُ الدَّولةِ وَ الدّین، غیاثُ الإسلام و المسلمین، عُمدةُ المُلوک و السَّلاطین، ابوبکر بنُ اَبی نَصر، اَطالَ اللهُ عُمرَهُ و اَجَلَّ قَدرَهُ و شَرَحَ صَدرَهُ و ضاعَفَ اَجْرَهُ که ممدوحِ اکابرِ آفاق است و مجموع مکارم اخلاق.

هر که در سایهٔ عنایت اوست   گنهش طاعت است و دشمن دوست

به هر یک از سایر بندگان حواشی، خدمتی مُتَعیَّن است که اگر در ادای برخی از آن تَهاوُن و تَکاسُل روا دارند در معرض خطاب آیند و در محل عتاب، مگر بر این طایفهٔ درویشان که شکر نعمت بزرگان واجب است و ذکر جمیل و دعای خیر و اداء چنین خدمتی در غیبت اولی‌تر است که در حضور، که آن به تَصنّع نزدیک است و این از تَکلّف دور.

پشت دوتای فلک، راست شد از خرّمی   تا چو تو فرزند زاد مادر ایام را
حکمت محض است اگر لطف جهان‌آفرین   خاص کند بنده‌ای مصلحت عام را
دولت جاوید یافت هر که نکونام زیست   کز عقبش ذکر خیر، زنده کند نام را
وصف تو را گر کنند ور نکنند اهل فضل   حاجت مشّاطه نیست روی دلارام را

تقصیر و تقاعدی که در مواظبت خدمت بارگاه خداوندی می‌رود بنا بر آن است که طایفه‌ای از حکماء هندوستان در فضایل بُزُرْجمهر سخن می‌گفتند، به آخر جز این عیبش ندانستند که در سخن گفتن بَطیء است یعنی درنگ بسیار می‌کند و مستمع را بسی منتظر باید بودن تا تقریر سخنی کند. بُزُرْجمهر بشنید و گفت: اندیشه کردن که چه گویم به از پشیمانی خوردن که چرا گفتم.

سخندانِ پرورده پیر کهن   بیندیشد آن گه بگوید سخن
مزن تا توانی به گفتار، دم   نکو گوی، گر دیر گویی چه غم؟
بیندیش و آن‌گه بر آور نفس   و زآن پیش بس کن که گویند بس
به نطق آدمی بهتر است از دَواب   دَواب از تو به، گر نگویی صواب

دیباچه گلستان

بسم الله الرّحمن الرّحیم

منّت خدای را عز و جل که طاعتش موجب قربت است و به شکر اندرش مزید نعمت. هر نفسی که فرو می‌رود مُمدّ حیات است و چون بر می‌آید مُفرّح ذات. پس در هر نفسی دو نعمت موجود است و بر هر نعمتی شکری واجب.

از دست و زبان که بر آید / کز عهده شکرش به در آید؟

اِعملوا آلَ داودَ شُکراً وَ قلیلٌ مِن عبادیَ الشّکور

بنده همان به که ز تقصیر خویش / عذر به درگاه خدای آورد
ور نه سزاوار خداوندی‌اش / کس نتواند که به جای آورد

باران رحمت بی‌حسابش همه را رسیده و خوان نعمت بی‌دریغش همه جا کشیده. پرده ناموس بندگان به گناه فاحش ندرد و وظیفه روزی به خطای منکر، نبُرد.

ای کریمی که از خزانه غیب / گبر و ترسا وظیفه‌خور داری
دوستان را کجا کنی محروم / تو که با دشمن این نظر داری؟

فرّاش باد صبا را گفته تا فرش زمردی بگسترد و دایه ابر بهاری را فرموده تا بنات نبات، در مهد زمین بپرورد. درختان را به خلعت نوروزی، قبای سبز ورق در بر گرفته و اطفال شاخ را به قدوم موسم ربیع، کلاه شکوفه بر سر نهاده. عصاره نالی به قدرت او شهد فایق شده و تخم خرمایی به تربیتش نخل باسِق گشته.

ابر و باد و مه و خورشید و فلک در کارند / تا تو نانی به کف آریّ و به غفلت نخوری
همه از بهر تو سرگشته و فرمانبردار / شرط انصاف نباشد که تو فرمان نبری

در خبر است از سَرور کاینات و مَفخَر موجودات و رحمت عالَمیان و صَفوت آدمیان و تتمه دورِ زمان، محمد مصطفی صلی الله علیه و سلم.

شفیعٌ مطاعٌ نبیٌّ کریم / قسیمٌ جسیمٌ نسیمٌ وسیم
چه غم دیوار امّت را که دارد چون تو پشتیبان / چه باک از موج بحر آن را که باشد نوح، کشتیبان
بَلَغَ العُلی بِکماله، کشفَ الدُجی بجماله / حَسُنت جمیعُ خصاله، صَلّوا علیه و آله

هر گاه که یکی از بندگان گنهکار پریشان روزگار، دست انابت به امید اجابت به درگاه حق جَلّ و عَلا بردارد؛ ایزد تعالی در وی نظر نکند. بازش بخواند باز اعراض کند. بازش به تضرُّع و زاری بخواند؛ حق سبحانه و تعالی فرماید:

یا ملائکتی قد استحْییتُ مِن عبدی و لیس لهُ غیری فقد غفرتُ لهُ

دعوتش را اجابت کردم و حاجتش برآوردم که از بسیاری دعا و زاری بنده همی شرم دارم.

کرم بین و لطف خداوندگار / گنه بنده کرده است و او شرمسار

عاکفان کعبهٔ جلالش به تقصیر عبادت، معترف که ما عَبَدناک حق عبادتک و واصفان حلیه جمالش به تحیُّر منسوب که ما عَرَفناک حقّ معرفتک.

گر کسی وصف او ز من پرسد / بی‌دل از بی‌نشان چه گوید باز
عاشقان، کشتگانِ معشوقند / بر نیاید ز کشتگان آواز

یکی از صاحبدلان سر به جَیب مراقبت فرو برده بود و در بحر مکاشفت مُستغرق شده. حالی که از این معامله باز آمد یکی از دوستان گفت: از این بستان که بودی ما را چه تحفه کرامت کردی؟ گفت: به خاطر داشتم که چون به درختِ گل رسم دامنی پر کنم هدیه اصحاب را، چون برسیدم بوی گلم چنان مست کرد که دامنم از دست برفت.

ای مرغ سحر، عشق ز پروانه بیاموز / کآن سوخته را جان شد و آواز نیامد
این مدعیان در طلبش بی‌خبرانند / کآن را که خبر شد خبری باز نیامد
ای برتر از خیال و قیاس و گمان و وهم / وز هر چه گفته‌اند و شنیدیم و خوانده‌ایم
مجلس تمام گشت و به آخر رسید عمر / ما همچنان در اوّل وصف تو مانده‌ایم

ذکر جمیل سعدی که در افواه عوام افتاده است و صیت سخنش که در بسیط زمین رفته و قَصَبُ الْجَیب حدیثش که همچون شکر می‌خورند و رُقعه مُنشآتش که چون کاغذ زر می‌برند بر کمال فضل و بلاغت او حمل نتوان کرد؛ بلکه خداوند جهان و قطب دایره زمان و قایم‌مقام سلیمان و ناصر اهل ایمان اتابک اعظم مظفر الدنیا و الدین ابوبکر بن سعد بن زنگی ظل الله تعالی فی ارضه؛ ربِّ ارْضَ عَنْهُ و اَرْضِه، به عین عنایت نظر کرده است و تحسین بلیغ فرموده و ارادت صادق نموده، لاجرم کافّه انام از خواص و عوام به محبت او گراییده‌اند که الناس علی دین مُلوکهم.

زآن گه که تو را بر من مسکین نظر است / آثارم از آفتاب مشهورتر است
گر خود همه عیب‌ها بدین بنده در است / هر عیب که سلطان بپسندد هنر است

گلی خوشبوی در حمام روزی / رسید از دست محبوبی به دستم
بدو گفتم که مُشکی یا عبیری؟ / که از بوی دلاویز تو مستم
بگفتا من گِلی ناچیز بودم / و لیکن مدّتی با گل نشستم
کمال همنشین در من اثر کرد / وگرنه من همان خاکم که هستم

اللهمّ مَتّع المسلمینَ بطول حیاته و ضاعفْ جمیلَ حَسَناته و ارْفَعْ دَرَجةَ أوِدّائه و وُلاتِه وَ دَمِّرْ عَلی أعدائه و شُناته بما تُلِیَ فی القرآنِ مِنْ آیاته اللّهم آمِنْ بَلَدَه و احْفَظْ وَلَدَه

لَقد سَعِدَ الدّنیا به دام سَعدُه / وَ أیّدَهُ المَولی بِألوِیَةِ النّصر
کذلکَ یَنْشَأُ لینةٌ هو عِرقُها / و حُسنُ نباتِ الأرض من کَرَمِ البَذر

ایزد، تعالی و تقدس خطه پاک شیراز را به هیبت حاکمان عادل و همت عالمان عامل تا زمان قیامت در امانِ سلامت نگه دارد.

اقلیم پارس را غم از آسیب دهر نیست / تا بر سرش بُوَد چو تویی سایهٔ خدا
امروز کس نشان ندهد در بسیطِ خاک / مانند آستان درت مأمن رضا
بر توست پاس خاطر بیچارگان و شکر / بر ما، و بر خدای جهان آفرین جزا
یا رب ز باد فتنه نگهدار خاک پارس / چندان که خاک را بود و باد را بقا

یک شب تأمل ایام گذشته می‌کردم و بر عمر تلف‌کرده تأسف می‌خوردم و سنگ سَراچه دل به الماس آب دیده می‌سفتم و این بیت‌ها مناسب حال خود می‌گفتم:

هر دم از عمر می رود نفسی / چون نگه می‌کنم نمانده بسی
ای که پنجاه رفت و در خوابی / مگر این پنج روز دریابی
خَجِل آن کس که رفت و کار نساخت / کوس رحلت زدند و بار نساخت

ՍԱԱԴԻԻ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ[1]

Գարուն էր:

Մեկը այն անհամար գարուններից, որ զարդարել են երկիրը, և որոնցից հարյուր հատ ապրեց երջանկության և տխրության բանաստեղծը՝ Սաադին:

Առավոտ շատ վաղ զարթնեց Սաադին. իջավ պարտեզը, որ ծաղկում էր Ռոքնաբադ գետի ափին: Նորից լսելու համար բլբուլների երգը և նորից տեսնելու համար գարնան հրաշքը:

Նայեց Շիրազի դաշտին, որ մանկության շնորհներով ու վարդերով պճնված՝ վաղորդյան նիրհն էր առնում՝ պարուրված բուրալից ճերմակ շղարշներով:

Նստեց ծաղկած հասմիկի տակ, Սպահանի գորգի վրա, և բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր–կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի.

«Ինչպես մատաղ աղջիկը ժպտում է գգվող սիրականին, այնպես էլ վարդը իր շրթներն է բանում առավոտյան հովիկին»:

Թեև շա՜տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի՝ տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին — Զմրուխտ թռչունը, որ իր հավերժական բույնն էր կերտել Կաֆ[2] լեռան գագաթին, աստղերի մեջ…

Երգում էին բլբուլները՝ գորշ զգեստ հագած և լուսեղեն աչուկներով. երգում էին իրենց դյութական ռուբայաթները սիրո կրակով կրակված,— ու երգում էին Սաադիի սրտի մեջ:

Քնքուշ հովը վարդերի ականջներին կուսական շնչով բարևագրեր էր շշնջում, որ բերել էր հեռավոր սիրահար վարդերից,— և կարդում էր Սաադիի հոգին սիրո բարևագրերը…

«Սիրող սիրտը լսում է միշտ այն բոլոր խոսքերը, որ մրմնջում են իրերը: Աշխարհը լի է հնչուն դաշնակություններով: Աշխարհը թրթռում է անվախճան և սիրավառ արբեցումով»,— հիշեց Սաադին իր հին խոսքերը:

Ականջը բլբուլների երգերին և սպիտակ գլուխը կարմրափթիթ վարդերի մեջ սուզած՝ ծծեց Սաադին հեշտության բույրերը, և բույրերով գինովի՝ աչքերը գոցեց.— և տեսավ աշխարհը իր հոգու մեջ, ինչպես երազի մեջ մի երազի:

---

[1] Ավետիք Իսահակյան, Սաադիի վերջին գարունը, «Հայաստան» հրատարակչություն, 1975 թ., Երրորդ հատոր, էջ 72:

[2] Ղաֆ — դիցաբանական սար, որը, իբր թե, բոլորում է աշխարհը: (Ն. Մ.)

Տեսավ Հնդու խաղաղության գետերը սրբազան լոտոսներով օծուն:

Տեսավ իմաստուն փղերին, որ խորհում են մթին ջանգլաների մեջ:

Եվ Դեհլիի ոսկեղիպակ ապարանքների մեջ սիգաճեմ աղջիկներին տեսավ՝ գիշերագեղ մազերի մեջ կարմիր նունուֆարներով:

Տեսավ Թուրանի մրրկաշունչ տափաստանները և մրրիկների մեջ խոյացող ամեհի հեծելազակներին՝ կայծակե թրերով:

Տեսավ նույնպես անապատը բոցակեզ, բեդվինների նժույգների վազքը սրարշավ. առյուծների հետևից՝ արծիվների թևերի տակ:

Եվ երկյուղած ուխտավորների անծայր քարավանները տեսավ. աղոթքով ու երգով Մեքքայի դարբասների առաջ նրանց ծունկի գալը:

Եվ տեսավ Մսրա աշխարհի հնագեղ հրաշքները և կապույտ ծովերի ծփուն բյուրեղը: Եվ Դամասկոսի թավիշ աղջիկներին, լուսնկա մարմնով, որոնց երկար ու քնքուշ ձեռները, մանյակի պես, փաթաթվել էին երիտասարդ Սաադիի պարանոցով…

Սաադին հառաչեց՝ աչքերը բանալով.

— Ավա՜ղ, անցավ հարյուր տարիս մի գիշերվա երազի պես, թռավ թեթև մի վայրկյանի մեջ, որովհետև դուք միշտ ուղեկցում էիք ինձ, ո՛վ հեքիաթ, ո՛վ բլբուլներ ու վարդեր, և դո՛ւք, վարդերի քույր շնորհագե՛ղ աղջիկներ…

* * *

Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս բխեց արեգակը, և հուրհրացին ամեն թերթ ու փերթ, ամեն քար ու գուղձ, որովհետև գիշերը ադամանդի փոշի էր շաղ տրվել բոլոր նրանց վրա:

Սաադին նայեց շուրջը խորունկ ու հետաքրքիր հայացքով. նայեց երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով:

Նայեց այնպես զարմացած և սքանչացած.

— Այո՛, հրաշք է աշխարհք, հեքիաթ է, գեղեցիկ և անհուն զարմանալի:

Եվ ամեն օր նայում եմ աշխարհին և ամեն օր զարմացած, կարծես, առաջին անգամն եմ տեսնում աշխարհը.— աշխարհը՝ առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը՝ հնօրյա և միշտ նորաստեղծ, հավիտենական մի անծանոթ հրապույրով առինքնող:

Սաադին նորից նայեց աշխարհին. տարերքի այս բազմազան ու հրաշազան խաղին, երբ աչքին ընկավ երկու տատրակ, որ կարմիր տոտիկներով շրջում էին կանաչ մարգերի վրա, քաղցր գվգվալով, և նորից խոսեց իր սրտում.

— Կախարդված է աշխարհը, և բոլոր իրերը հմայված են մի անտեսանելի փուկի դյութական գավազանով, և հեքիաթացած է ամեն բան:

— Աշխարհը գլխիվայր հոսում է, քայքայվում է ու ձևալուծվում, և ի՞նչն է, որ նորից կերտում է ու կաղապարում այս հոյակապ աշխարհը, և մեր հոգու շուրջը փռում այս հրաշքն ու հեքիաթը:

Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մագլցի սեպ ժայռերը՝ եղջյուրները քարերին փշրելով տարփալից մռնչյունով թավուտները թինդ հանե:

Ո՞վ ստիպեց, որ վարդը ճեղքե իր զմրուխտյա զրահը և բուրե հեշտագին:

Ո՞վ ստիպեց մարդուն, որ անհայտից բխեն ձև ու հոգի առած՝ մտածելու և տառապելու համար. զգալու հուրը մեզ այրող ըղձանքի և չփափագի երբե՜ք մեռնելու:

Ո՛վ սեր, դո՜ւ անպարտելի ստիպմունք, դո՜ւ քաղցր բռնություն, ես վաղո՜ւց ճանաչում եմ քեզ: Սակայն բնավ չհասկացա քո խորքն ու խորհուրդը…

* * *

Եվ տեսանողի հոգով նախազգաց Սաադին, որ այս վերջին գարունն է, որ ինքն ապրում է:

Վերջին գարունը:

Պարտեզի դռնակը բացվեց:

Սպիտակ շղարշները հովին ծփծփուն՝ ներս մտավ Նազիաթ, Սաադիի սիրած շիրազուհին, որ միշտ այցի էր գալիս ծերունի բանաստեղծին:

Նազիաթի գինեվետ շրթները և հոլանի թևերի լույսն ու կրակը շա՜տ անգամ արևազարդել էին դարևոր Սաադիի անքուն գիշերները:

Սաադին սիրում էր նրան իր անթառամ սրտի երիտասարդ ավյունով, և ոսկի բառերով քանդակել էր նրա պատկերը անմահ «Գյուլստանի» մեջ:

Նազիաթ՝ վարդերի փունջը գրկին, մոտեցավ բանաստեղծին և վարդաբույր ձայնով ողջունեց:

Տխուր էր Սաադին: Հառաչանքը թրթռում էր նրա գունատ շրթներին:

— Ինչո՞ւ ես տխուր, դո՜ւ, ամենաերջանիկը մահկանացուներիս մեջ: Ինչո՞ւ ես տխուր:

Սաադին լուռ էր:

— Ես սիրում եմ քո տխրությունը, ո՛վ Սաադի, իմաստուն է քո թախիծը. և դու ասել ես քո աստվածային լեզվով, թե մարգարիտը վերքից է, որ կծնի, և խունկը այրվելով է, որ իր անուշ հոգին կբուրե:

Սաադին նայեց Նազիաթին դալուկ ժպիտով:

— Տե՛ս, վարդեր եմ բերել քեզ համար, իմ պարտեզի թավիշ վարդերից:

Եվ ծերունուն պարուրեց վարդերով և լուսեղեն մատներով շոյեց բանաստեղծի ճակատի մռայլը:

— Քո շնորհած վարդերը, ո՛վ դրախտի աղջիկ, աշխարհի ամենաչքնաղ վարդերն են եղել միշտ և երբեք չեն թառամել:

— Այո՛, Սաադի. «Ինչո՞ւ վարդը հոտոտելիս խորհել նրա վաղանցուկ շնորհի մասին: Պահի՛ր հիշատակը բույրի և դյուրին կլինի մոռանալը, որ վարդը թառամած է վաղուց»:

Արծաթի ձայնով արտասանեց Նազիաթ բանաստեղծի վաղեմի խոսքերը:

Եվ նրա երազաբույր վարսերը գգվեցին Սաադիի դեմքը, երբ Նազիաթ ծունկի եկավ բանաստեղծի մոտ. և պարտեզում մի անուշ հով ծիածանի թևերը թափահարեց Սաադիի գլխի վերևը — այդ Զմրուխտ թռչունի չքնաղ թևերն էին, որ ծուփ եկան, երբ Սաադին դողդոջ մատներով շոյեց Նազիաթի երազաբույր վարսերը:

Եվ ապա Սաադին հոգու խորին հատակից նայեց մեկ՝ իր շուրջը բոնկած հեքիաթ–աշխարհին, մեկ՝ իր առջևը՝ լուսաժպտուն հրաշք–աղջկան, և զգաց տաք արցունքի մի կաթիլ իր հին սրտի մեջ, և բռնելով աղջկա փոքրիկ ձեռքը, համբուրեց ու դրեց լացող սրտի վրա՝ ասելով.

— Քո շուշան մատներով գրի՛ր «Գյուլստան»–իս հետին էջի վրա իմ այս վերջին խոսքերը.

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով…»[1]:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
Վենետիկ, 1923 թ.

[1] Իսահակյանի յուրովի ընկալումը Սաադու «Գոլեստանից», նրան մղել է ստեղծել նման մի սքանչելի արձակ բանաստեղծություն, որտեղ արտահայտված «Նազիաթ» գեղեցկուհին և նրա «մատներով գրված Սաադու վերջին խոսքերը», սոսկ բանաստեղծի մտահղացումն է և չի առնչվում «Գոլեստան»–ի բնագրին: (*Ն. Մ.*)

سعدی خاموش بود.

«سعدیا، من اندوه تو را دوست دارم، حزن تو خردمندانه است. تو با زبان خدایی‌ات گفته‌ای که مروارید از زخم پدید می‌آید و از سوختن کندر است که جان شیرین او عطر می‌پراکند.»

سعدی با لبخندی کمرنگ به نزهت نگاه کرد.

«ببین، برای تو گل‌های سرخ آورده‌ام، از گل‌های سرخ مخملی بوستانم.»

و پیرمرد را در گل‌های سرخ غرق کرد و با انگشتان نورانی‌اش پیشانی اخمگین شاعر را نوازش داد.

«ای دختر بهشتی! گل‌هایی که مرا هدیه داده‌ای همیشه زیباترین گل‌های سرخ جهان بوده‌اند و هرگز پژمرده نشده‌اند.»

«آری، سعدی، چرا در وقت بو کردن گل سرخ باید به عمر کوتاه آن فکر کرد؟ عطرش را به یادگارنگاه دار تا به آسانی فراموش کنی که از دیرباز پژمرده گشته است.»

نزهت با صدای سیمگونش سخن دیرین شاعر را بر زبان راند.

و زمانی که نزهت پای شاعر زانو زد، زلفان عطرآگین دل‌انگیزش رخسار سعدی را نوازش داد. در بوستان، نسیم خنکی، بال‌های رنگین کمانش را بر بالای سر سعدی به جنبش درآورد. این‌ها بال‌های زیبای سیمرغ بود که جنبیدن گرفتند، در زمانی که سعدی گیسوان عطرآگین نزهت را با انگشتان لرزانش نوازش می‌کرد.

سعدی از ژرفای وجودش یک آن به دنیای افسانه‌ای پیرامون نگریست. یک آن به دختر شگرفی نگاه کرد که با لبخند درخشنده‌اش در برابرش بود، آنگاه در قلب سالخورده‌اش قطره اشکی گرم حس کرد. دست ظریف دختر را گرفت، بر آن بوسه زد و بر قلب گریانش نهاد و گفت:

«با انگشتان سوسن گونه ات بر صفحه‌ی پایانی گلستان من این واپسین سخنم را بنویس:

ناخواسته به دنیا می‌آییم، با شگفتی می‌زییم و با حسرت می‌میریم...»

سال ۱۹۲۳، ونیز

ترجمه: گارون سارکسیان

«دریغا که صد سال همچو خوابی شبانه گذشت و همچو لحظه‌ای سبک پر کشید؛ زیرا شما ای قصه‌ها، ای بلبلان و گل‌های سرخ و شما ای دختران زیباروی که خواهران گل‌سرخ هستید، همیشه مرا همراه بودید...»

***

خورشید از میان بوستان رنگارنگ آسمان سر برآورد و برگ و خس و سنگ و کلوخ درخشیدن گرفتند.زیرا شب، گرد الماس بر آن‌ها پاشیده بود.

سعدی پیرامونش را نگریست، با نگاهی عمیق و کاونده. به گنبد آبی آسمان نگریست که غرق در سپیده‌ی زرین سحر بود و پرندگان در میان ان بال می‌گشودند.

بس در شگفت و حیران نگاه کرد.

«آری، دنیا شگرف است، قصه است، زیبا و سخت شگفت انگیز.

دنیا را هر روز می‌نگرم و هر روز به شگفت می‌آیم، انگار نخستین بار است که دنیا را می‌بینم. دنیای هر روزه و همیشه شگرف، دنیای کهن و همیشه تازه، با کششی ابدی و ناشناخته به سوی خود.»

سعدی دوباره دنیا را نگریست، به گونه گونه بازی‌های شگفت‌آور طبیعت. چشمش به دو کبوتر افتاد که با پاهای قرمزشان در چمن‌های سبز گشت می‌زدند و غوغوی شیرین سر می‌دادند. دوباره در دلش چنین گفت:

«دنیا افسون شده است، همه چیز با عصای جادویی افسونگری ناپیدا طلسم شده و همه چیز تبدیل به افسانه شده است.

دنیا وازگون پیش می‌رود، دنیا فرومی‌پاشد و شکل خود را از دست می‌دهد. و چه چیزی این دنیای پرشکوه را دوباره می‌آفریند، شکل می‌دهد و در پیرامون جان ما این اعجاز و افسانه را می‌گستراند؟

چه کس غزال را وامی‌دارد که با قلبی مشتاق از دیواره‌های صخره‌ای سنگی بالا رود، شاخ‌هایش را بر سنگ‌ها خرد کند و با نعره‌هایی هیجانی در بوته‌زارها طنین افکند؟

چه کس گل سرخ را وامی‌دارد که زره‌ی زمردین را بشکافد و رایحه‌ی دل‌انگیز بیافشاند؟

چه کس انسان را وامی‌دارد که از چیزی ناپیدا وجودی برآورد که جان یابد و بیاندیشد و زجر کشد، که آتش سوزان آرزوها را حس کند و هرگز خواستار مرگ نباشد؟

ای عشق، تویی آن اجبار همیشه چیره، تویی آن اجبار شیرین. من از دیرباز می‌شناسمت، اما هیچ‌گاه ژرفا و راز تو را درنیافته‌ام...»

***

سعدی با روح پیامبرگونه‌اش از پیش دریافت که این واپسین بهاری است که زنده است.

واپسین بهار.

دریچه ی باغ گشوده شد.

نزهت که جامه‌ی سپیدش دستخوش تموج باد شده بود به درون آمد. او دختر شیرازی محبوب سعدی بود، که همیشه به دیدار شاعر پیر می‌آمد.

لبان مستی‌آور نزهت و درخشش و گرمای بازوان طناز او بسیار بار شب‌های بی‌خواب سعدی صد ساله را نورانی کرده بودند.

سعدی با شور جوانی و قلب ناپژمرده‌اش او را دوست می‌داشت و تصویرش را در «گلستان» همیشه جاویدان با واژه‌هایی زرین منقوش کرده بود.

نزهت با دسته گلی در بغل به شاعر نزدیک شد. صدای درود او همچو رایحه‌ی گل سرخ بود.

سعدی اندوهگین بود. آه و ناله بر لبان لرزانش تپیدن گرفته بود.

«چرا غمگینی؟ تو در میان ما آدمیان فانی خوشبخت‌ترین کس هستی. چرا غمگینی؟»

واپسین بهار سعدی

بهار بود.

یکی از آن بهاران بی‌شمار که زمین را می‌آرایند و سعدی، شاعر شادی و اندوه، صد بار آن را زیسته بود. سعدی در سپیده‌ی سحر بیدار شد. به باغی شکوفا در کنار آب رکناباد رفت تا باری دیگر آوای بلبلان را بشنود و باری دیگر اعجاز بهار را بنگرد.

دشت شیراز را نگریست، دشتی که آراسته به رویاهای کودکانه و گل‌های سرخی که در احاطه‌ی مه سپید عطراگین بود و اودر خواب و بیداری بسر میبرد.

پای بوته‌ی شکفته‌ی یاسمن، روی قالی اصفهان نشست. غنچه‌ی سرخ و سبز نورس گل سرخ را با انگشتان لرزانش گرفت و با خود نجوا کرد:

«همچو دخترک نوجوانی که به عاشق دلبندش لبخند می‌زند، گل سرخ هم لبانش را برای نسیم سحری می‌گشاید.»

سعدی اگرچه بس پیر شده بود، اما جانش هنوز اشیا و اشکال زیبای دنیا، آوازها و سکوت فضاهای گمگشته را با چشم رویا و گوش رویا، می‌دید و می‌شنوید؛ زیرا روح افسونگر شعر، که همان پرنده‌ی سیمرغ بود وآشیانه‌ی ابدی‌اش را بر ستیغ کوه قاف در میان ستارگان ساخته بود، هنوز با او در گفتگو بود...

بلبلان، تنپوش تیره بر تن، با چشمانی تابنده آواز می‌خواندند. رباعیاتی وسوسه‌گر که در آتش عشق سوخته بودند و در قلب سعدی می‌خواندند.

نسیم روح‌نواز از دوردست‌ها، از سوی گل‌های سرخ عاشق، انفاس بکر آورده بود و در گوش گل‌های سرخ نجوای درودباش سرمی‌داد و پیام عشق را برای جان سعدی می‌خواند.

«قلب عاشق همیشه زمزمه‌ی سخنان طبیعت را می‌شنود. دنیا پر از تپش اصوات هماهنگ است. دنیا از مستی ابدی و آکنده از عشق در تپیدن است.»

سعدی که گوشش را در آواز بلبلان و سر سفیدش را در گل‌های سرخ فروبرده بود، رایحه‌ی دل‌انگیز را فروکشید و چشمان مست از رایحه را بست و دنیا را در روح خود دید، چونان رویایی که در خواب می‌بینند.

رودهای آرام هند را دید که با نیلوفرهای آبی مقدس تقدیس شده بودند.

فیل‌های دانا را دید که در جنگل‌های تاریک در اندیشه بودند.

دختران خرامان در کاخ‌های زرین دهلی را دید که در میان زلفان زیبای شبگون، نیلوفر سرخ نشانده بودند.

دشت‌های توفان خیز توران و راهزنان مهیب را دید که شمشیرهای آذرخش به دست گرفته در میان تندبادها پرواز می‌کردند.

بیابان سوزان را نیز دید، دویدن تند اسبان بدوی‌ها در پی شیران زیر بال عقابان را دید.

و کاروان‌های بی‌انتهای زائران خداترس را دید و زانو زدن همراه با عبادت و آواز آن‌ها در جلوی دروازه‌های مکه را دید.

عجایب کهن سرزمین مصر را دید و تموج بلورین دریاهای آبی را. دختران مخملی دمشق را دید با تنی مهتابی، که بازوان بلند و زیبایشان را همچو گردنبندی بر گردن سعدی جوان حلقه زده بودند...

سعدی آهی کشید و چشمانش را گشود.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Նոր գաղափար», 1927 թ.:
2. «Թեոդիկ Ամենուն տարեցույց», 1924 թ.:
3. «Պարսկահայ տարեցույց», 1927 թ., 1929 թ., 1930 թ.
4. «Վերածնունդ» շաբաթաթերթ, 1930 թ., 1934 թ., 1935 թ., 1936 թ.:
5. Զորայր Միրզայանի ձեռագրերի արխիվ (ԳԱԹ), 4759:
6. Սաադի Շիրազի, «Գոլեստան», Թասիհի Մոհամադ Ալի Ֆոռուղի, 1335, Շամսի:
7. Նվարդ Թումանյան, «Թումանյան քննադատը», Երևան, 1939, էջ 61:
8. «Գանջուր» կայքէջ. http://ganjoor.net
9. «Գոզիդեհ ղազալիաթե Սաադի», Հոսեյն Էլահի Ղոմշեի, նգարգարի Ալի Ռեզա Աղամիրի, «Ֆառհանգսարաե Միրդաշտի», 1378:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ

XII–XIII դդ.







«Սաադիեի» Շիրազ թաղամասը, որտեղ ապրել ու թաղվել է Սաադին. հետո նույն տեղանքում դարերի ընթացքում մի քանի անգամ վերակառուցվել է իր դամբարանը:

Սաադիի դամբարանը Շիրազ քաղաքում



Մի էջ ձեռագիր «Բուստան» — Սաադիից, գրված՝ Բուխարայում, 1539 թ.
Nelson Atkins Museum of Art Kansas City, U.S.A



GVLISTAN
OV
L'EMPIRE
DES ROSES

Composé par SADI, Prince des Poëtes Turcs & Persans.

Traduit en François par ANDRE' DV RYER, sieur de Malezair, Gentil-homme ordinaire de la Chambre du Roy, Chevalier de l'Ordre du S. Spulchre de Ierusalem cy-devant Consul pour sa Majesté, & ses nations en Alexandrie, au grand Caire, & Royaume d'Egypte.

A PARIS
Chez ANTHOINE DE SOMMAVILLE, en la petite Salle du Palais, à l'Escu de France.
M. DC. XXXIV.
AVEC PRIVILEGE DV ROY
Stephanus Baluzius Tutelensis.

Անդրե Դոռիեի թարգմանված հատվածները «Գոլեստանի»–ից
(ֆրանսերենով՝ 1634 թ.)

«Գուլիստան»-ի ձեռագիր օրինակը, 1645 թ.
Freer Art Gallery, Washington D.C. U.S.A

ԽՍՀՄ-ում թողարկված նամականիշ՝ նվիրված Սաադիի «Գուլիստանի» 700-ամյակին

Պարսկական դրամի վրա նախշված Սաադիի դամբարանը

Մոհամադ Ալի Ֆորուղի

ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶԱՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱԱԴԻ ՇԻՐԱԶԻ

Հավաքեց և աշխատասիրեց Նիկիտ Միրզայանը

Հեղինակային հրատարակություն, Երևան, 2025

E-mail: n.mirzayans@gmail.com

9789939052632

Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Շապիկի ձևավորումը՝ Զոգեֆ Միրզայանի
Հայերենի մուտքագրումը՝ Սուսաննա Ավետիսյանի
Պարսկերենի տեխն. օգնությունը՝ Ժագ Թոփալագյանի
Ձևավորումը՝ Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 7 տպ. մամ.: Տառատեսակը՝ GHEA Mashtots

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+ 37410) 23 25 28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

یوسف (هوسپ) میرزایان
زورایر میرزایان

ادبیات فارسی

سعدی شیرازی

تهیه و تدوین: نیکید میرزایان

ایروان ۲۰۲۵